ԱԼԵՔՍԵՅ ՄԻԽԿԵԼՍՈՆ

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՄԵՂՎԱՆՈՑ

638
Ա-69

ՅՈՒՆՎԱՐՍ 1936 ԵՐԵՎԱՆ

24 SEP 2010

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
638
Մ-69

ԱԼԵՔՍԵՅ ՄԻԽԿԵԼՍՈՆ

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՄԵՂՎԱՆՈՑ

ԳՅՈՒՂՐԱՏ 1936 ԵՐԵՎԱՆ

24.03.2014
22.977

ՅԵՍ ԴԱՌՆՈՒՄ ԵՄ ԿՈԼՏՆՏԵՍԱՑԻՆ ՄԵՂՎԱՊԱՀ

Այսորվա պես հիշում եմ. 1923 թ. ուղիղ «Հովհաննու որը» հայրս և մեծ յեղբայրս անտառում բռնել էին մեղվի մի փախած ձագ։ Մեր տնտնեսությունը բավական աղքատիկ եր։ Վորոշեցինք «մեղվաբուծությամբ» պարապել։ Մեր հարևանը տվեց մեզ մի կոճղե փեթակ։ Ձագը տեղավորեցինք այդ փեթակի մեջ, վորից զատ, արդեն բառիս բուն նշանակությամբ, չգիտեյինք ինչ անել, վորովհետև մեղվի մասին վոչ մի հասկացողություն չունեյինք։ Բայց վորովհետև յես վերջացրել եյի գյուղական դպրոցը և ընտանիքում բոլորից ավելի գրագետը յես եյի, վորոշեցին մեղվի խնամքը հանձնել ինձ։

Յես խիստ յեռանդով կպա այդ գործին։ Ձեռք բերեցի քիչ թե շատ բանի պետք մեղվաբուծական գրքեր և ամբողջովին կլանված՝ անընդհատ կարդում ու կարդում եյի, այնպես վոր սխալված չեմ լինի, յեթե ասեմ, վոր համարյա անդիր եյի արել։

Ցավ յես անդառնալի կերպով սիրեցի այդ գործը։ 1924 թվին հայրս ամբողջ ընտանիքով մտավ «Հրաշք» կոմունան (Դեմիդովի շրջան, նախկին Սմոլենսկի նահանգ)։ Յես աշխատում եյի սկզբնական շրջանում ինչպես կոմունայի մի սովորական անդամ, վորովհետև վոչ մի մասնագիտական կրթություն չունեյի։ Բայց, ահա 1926 թվին մեր կոմունան գնեց մեղվի յերեք ընտանիք և վորոշեց զարգացնել մեղվաբուծական ճյուղը։ Ինձ ուղարկեցին մեղվաբուծական կարճատև դասընթացներ, ապա նշանակեցին մեղվապահ։ Դասընթացներն ինձ շատ քիչ բան տվին, բայց վորովհետև առաջվա նման ուժեղ թափով շարունակում եյի կարդալ մեղվաբուծական գրքեր և ամսաթերթեր, դրա համար ել գործս բավական լավ եր գնում։ 1929 թվի սկզբին արդեն ունե-

յինք մեղվի 18 ընտանիք։ Նույն 1929 թվին «Հրաշք» կոմունան միացվեց «Կոյտ» կոմունային, որը գտնվում է Ազով-Սևծովյան յերկրի Կուշչևկայի շրջանում։ Մենք բոլորս տեղափոխվեցինք Կուշչևկա կայարանը։ «Կոյտ» կոմունան այդ ժամանակ ուներ մեղվի 32 ընտանիք և ինձ իբրև «հին» մեղվապահի (կոմունան ուրիշ մեղվապահներ չուներ) անմիջապես նշանակեցին «մեղվանոցի վարիչ»։ Նույն թվի օգոստոսին ինձ վերցրին զինվորական ծառայության և միայն յերկու տարուց հետո 1931 թ. վերադարձա կոմունա։ Վարչությունը նորից ինձ նշանակեց մեղվապահ։

Ժամանակավոր մեղվապահից յես ընդունեցի 63 ընտանիք, և այդ որվանից յես այլևս չեմ բաժանվում կոլտնտեսության մեղուներից։

Մեր կոմունան նոր չի, հիմնել են 1922 թվին դեռ ցարական ժամանակ գաղթած եստոնացիները (յես ինքս եստոնացի յեմ)։

1930 թվից կոմունան մտան նաև բավականաչափ ռուսներ մոտակա գյուղերից, այնպես, որ 1935 թ. հունվարի 1-ին «Կոյտ»-ն ուներ 177 տնտեսություն՝ 552 հոգի ազգաբնակչությամբ, որոնցից աշխատունակ՝ 337 հոգի։ Կոլտնտեսականների զգալի մասը բացակայել է կոլտնտեսությունից, այսպես՝ 1933 թվին 62 հոգի, 1934 թվին՝ 33 հոգի։ XVII-րդ կուս. համագումարից հետո «Կոյտ» կոմունան վերածվեց գյուղատնտեսական արտելի։

Ամենամոտիկ յերկաթուղու կայարանը՝ Կուշչևկան, որը գտնվում է Հյուսիսային Կովկասի յերկաթգծի վրա, մեր կոլտնտեսության կենտրոնից 28 կիլոմետրի վրա յե գտնվում և միացած է մեզ հետ շատ հարմար ճանապարհով։

Շրջանային կենտրոնի, յերկաթուղու կայարանի և Կուշչևկայի ՄՏԿ հետ մեր կոլտնտեսությունը միացած է հեռախոսով։

«Կոյտ» կոլտնտեսության ամբողջ հողը 3742 հեկտար է, որից ցանովի՝ 3373, խոտհարք՝ 91, մերձգյուղային հողամասեր և բանջարանոցներ՝ 178, մնացած 100 հեկտարը բռնում են ագարակներն ու անպետք տարածությունները։

Մեր տնտեսության հիմնական ուղղությունը հացահատիկային է, դրա համար էլ գլխավոր ճյուղը հանդիսանում է դաշտա-

Նկ. 1. Ալեքսեյ Միխայլովիչ Միխկելսոն «Կոյտ» կոլտնտեսության մեղվաբուծական ֆերմայի վարիչ

վարությունը։ Վերջին տարիներս բավական ուժեղացել է անասնապահական ճյուղը. «Կոյտ»-ն ունի տեղական արդյունավետ յեղջյուրավոր անասուններով մի հիանալի հոտ, ունի մեծ խոզաբուծարան, վոչխարաբուծական և թռչնաբուծական ֆերմաներ և, վերջապես, 1934 թվի սկզբին խոշոր չափերի յեր հասել մեղվաբուծական ֆերման։

Ահա մի հետաքրքիր աղյուսակ, որը պարզ կերպով տալիս է մեր կոլտնտեսության գյուղատնտեսական առանձին ճյուղերի հարաբերությունն ըստ տարիների։

Ինչպես աղյուսակից յերևում է, մեղվաբուծությունն սկսում է խոշոր տեղ բռնել մյուս գյուղատնտեսական ճյուղերի շարքում, այնինչ հենց մեր կողքին, մերձակա կոլտնտեսություններում

	1931 թ.		1932 թ.		1933 թ.		1934 թ.	
	Գումարը ռուբլիներ	Արդյունքի ընդհանուրը դուս. %	Գումարը ռուբլիներ	Արդյունքի ընդհանուրը դուս. %	Գումարը ռուբլիներ	Արդյունքի ընդհանուրը դուս. %	Գումարը ռուբլիներ	Արդյունքի ընդհանուրը դուս. %
Դաշտավարություն	104,297	52	92,511	28,2	137,802	35,6	62,026	23,5
2 Բանջարաբուծություն, պտղատու և խաղողի այգիներ	26,856	13,5	4,146	13,5	44,436	11,5	29,424	11,7
Անասնապահություն այդ թվում և մեղվաբուծությունը	68,906	34,5	191,336	58,3	204,620	52,9	174,439	64,8
Մեղվաբուծությունը՝ առանձին	3,500	1,8	7,500	2,4	65,650	16,9	38,600	14,3
Ընդամենը	200059	100	327993	100	386858	100	265889	100

կամ շատ չնչին չափով է զարգացած, կամ բոլորովին չկա։ Ընդհանրապես, որ մեր կոլտնտեսությունն ուրիշ կոլտնտեսությունների հետ համեմատած առանձին վոչ մի առավելություններ չի ունեցել և 1931 թվին միայն 63 ընտանիք ուներ, բայց մենք վոչ մի ջանք չխնայեցինք մեղվաբուծությունը զարգացնելու համար, մեզ ոգնեց կոլտնտեսության կուսակցական կազմակերպությունը, անշեղ ղեկավարություն ցույց տվեց մեզ Կուշչևկայի ՄՏԿ-ի քաղաքաժինը և արդեն 1935 թ. հունվարի 1-ին մեր ֆերման իր տնտեսության մեջ ուներ մեղվի 1028 ընտանիք։ Բոլոր տվյալ-

ները կան ապացուցում խոշոր չափերի հասցնելու սոցիալիստական մեղվաբուծությունը «Կոյտ» կոլտնտեսությունում—կա անհրաժեշտ տարածություն, կան մեղրատու բույսեր, պահանջվող ինվենտարն ունենք, իսկ, վոր գլխավորն է, կան մարդիկ, վորոնք տիրապետում են խոշոր արդյունաբերական մեղվաբուծության տեխնիկային, սիրում են գործը և նվիրված են այդ գործին։ Վերջապես, մեզ համար ապահովված է շրջանային կուսկոմիտեյի ուշադրությունն ու ղեկավարությունը։

Յեվ այդ բոլորը մենք ձեռք ենք բերել վոչ մի անգամից, ձեռք ենք բերել, ուղղակի պետք է ասել, շատ խոշոր դժվարություններով։ Մենք համառ պայքար ենք մղել, վորպեսզի մեղվանոցն աչքի ընկնող տեղ գրավի տնտեսությունում։

Յեվ ահա իմ այս գրքում յես ուզում եմ պատմել այն պայքարի մասին, վոր մղել ենք մեր մեղվաբուծական ֆերմայում արտադրական գործը կազմակերպելու համար, պատմել նաև մեր հաղթանակների ու նվաճումների, մեր սխալների ու թերությունների մասին։ Կոլտնտեսային խոշոր մեղվաբուծության կազմակերպումը նոր և բարդ գործ է։ Աշխատանքի սկզբնական շրջանում սխալներ ունենալը միանգամայն բնական է, կարիք չկա ամաչելու այդ սխալների համար, ընդհակառակն, անհրաժեշտ է վեր հանել դրանք, զինվել ձեռք բերած փորձով և ապա ուղղել այդ սխալներն ու ավելի լավ աշխատել։

Յես արդեն 10 տարի յե, վոր աշխատում եմ կոլտնտեսային մեղվաբուծության մեջ, խիստ շատ կարդացել և կարդում եմ մասնագիտական գրքեր ու ամսաթերթեր, ավելի շատ եմ աշխատում ոգտագործել կոլտնտեսային մեղվապահների գործնականում կատարած փորձերը։ Համենայն դեպս, յես ինձ բավարարված չեմ զգում իմ գիտելիքներով, վորովհետև մեր գործը շատ բարդ է ու պատասխանատու։ Յես և իմ ընկերները շատ ուրախ կլինենք մտքերի փոխանակություն ունենալ կոլտնտեսային մեղվանոցների ընկեր մեղվապահների հետ։ Մենք մեծ ուրախությամբ կպատասխանենք բոլոր այն դիտողություններին և հարցերին, վորոնք կառաջադրվեն մեզ այս գրքույկը կարդացողների կողմից։

Իմ հասցեն. Ազով-Սևծովյան յերկիր, Կուշչևկայի շրջան Նոր-Միխայլովկայի գյուղխորհուրդ, «Կոյտ» կոլտնտեսություն, Ալեքսեյ Միխկելսոնին։

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ

Քանի դեռ յես Կարմիր բանակումն եյի, «Կոյտ» կոմունայի մեղվանոցում աշխատում եր կոմունայի անդամ Ներոդան, վոր, ինչպես վերջում պարզվեց, խսկական կուլակ եր ու վնասարար։ Ներոդան կոմունա յեր մտել 1930 թվից։

Այդ վտանգավոր ու խորամանկ թշնամին վոչ մի միջոց չեր խնայել, վորպեսզի կարողանա մեր կոլտնտեսության մեղվաբուծական ճյուղը քայքայել և վոչնչացնել։

Մեղվանոցն ընդունելիս Ներոդան ստացել է մեղվի 43 ընտանիք, ապա շատ չանցած՝ ելի 50 ընտանիք, վոր բռնագրավված եյին կուլակաթափման ժամանակ կուլակային տնտեսություններից։ Ցեվ ահա Ներոդան աշխատել է այդ 93 ընտանիքը մի քանի ամսվա ընթացքում հասցնել քառասունի։

Ինչպես պարզվեց հետո, Ներոդան դիտավորյալ կերպով թողնում եր ծեր, անպետք մայրերին, վնասարար միջոցներով յերկու ընտանիքը միացնում, կազմում եր մեկ ընտանիք, պատճառաբանելով, վոր այդ յերկու ընտանիքներն առանձին-առանձին թույլ են, և այլն։ Ամեն մի հարմար դեպքում Ներոդան աշխատել է հավատացնել կոլտնտեսականներին, վոր խոշոր՝ կոլեկտիվ մեղվաբուծությունն ոգտակար չի, վոր մեղուն «սիրում է մի տեր ունենալ», վոր միայն փոքր մեղվանոցները կարող են արդյունք տալ, և վոր ամենից լավ է կոլտնտեսային մեղվանոցը լուծարքի յենթարկել, իսկ մեղուները բաժանել կոմունարներին իրենց անձնական ոգտագործման համար, կամ, ավելի լավ է, վաճառել մենատնտեսներին։

Ներոդան հետամնաց և անգիտակից մարդ չեր։ Ընդհակառակը, ինչպես պարզվեց հետո, լավ գրագետ եր, փորձված մեղվապահ ու առաջներում ունեցել եր սեփական, հրաշալի կազմակերպված մեղվանոց՝ մի քանի տասնյակ ընտանիքներով։ Նա դիտավորյալ կերպով ստիճանաբար վոչնչացնելով կոլտնտեսության մեղուները, աշխատում եր մեղվանոցը դնել այնպիսի վիճակի մեջ, վորպեսզի վարչությունը կորցնի իր հավատը դեպի մեղվաբուծական գործի զարգացումը։

Ցերը գլխավոր վնասարարական միջոցառումները գործադրված եյին, Ներոդան աշխատում է մեղվանոցից հեռանալ։ Վարչությունը նրան գրասենյակում գործ է տալիս, դարձնելով աշխատանքի բաժնի վարիչ, իսկ մեղվանոց է ուղարկում ժամանակավոր մեղվապահ Իրգենսոնին։ Բայց վորովհետև Իրգենսոնը շատ անփորձ եր մեղվաբուծական գործում, ապա վարչությունը միաժամանակ հանձնարարում է նույն Ներոդային դեկավարել մեղվանոցի գործը։

Ահա ինչ է պատմում կոլտնտեսական Լոտոսմանն այն մասին, թե ինչպես Ներոդան և իր ստորադրյալ Իրգենսոնը «վարում» եյին մեղվաբուծական տնտեսությունը։ 1930 թ. մայիսին պատահմամբ յես անցնում եյի մեր կոլտնտեսության մեղվանոցի մոտով։ Ցանկացա տեսնել, թե ինչպես են աշխատում մեղուները։ Մոտ գնացի փեթակներին, տեսնեմ—փեթակների մոտ ամեն տեղ գետնի վրա թափթփված են սատկած և հաղիվ կենդանի մեղուներ։ Սատկող մեղուների քանակը շատ եր, առանձնապես արկանոցների առաջ։ Մեղվապահ Իրգենսոնը մեղվանոցում չեր... Ցես խիստ զարմացած եյի։ Ցերեկոյան վորոշեցի գնալ Իրգենսոնի մոտ և հարցնել՝ ինչով է բացատրվում այդ յերևույթը։ Այդպես ել արի։ Իրգենսոնին գրասենյակում գտա, հարցնում եմ. ասա խընդրեմ, ը՛նկ. Իրգենսոն, ինչու մեղվանոցում այդքան շատ սատկող մեղուներ են քաշ գալիս և բոլորը հատարյա քրքրված թևերով։ Իրգենսոնն ինձ պատասխանում է. —«մեղուներն իրենք ձմեռվա ընթացքում սատկած մեղուներին են դուրս գցում»։ Մեղվաբուծությունից յես վոչինչ չեմ հասկանում, դրա համար ել այդ պատասխանն ինձ միանգամայն բավարարեց, միայն ինձ հետաքրքրում եր մի հարց ևս, թե ինչու սատկող մեղուները թևեր չունեն։ Այդ բոպեին արագ մոտեցավ Ներոդան, կարեց Իրգեն-

սոնի խոսքը և ասաց։ —«Դե, հերիք է այստեղ որ մաշես, ժամանակ չկա, պետք է շտապել մեղվանոցը»։ Ապա խնդրեց Իրգենսոնին դուրս տարավ գրասենյակից։ Շատ եյի զարմացել. ցերեկը մեղվանոցում չեն լինում, իսկ գիշերն շտապում են մեղվանոց աշխատելու (արդեն ուշ յերեկո յեր, մութը համարյա ընկել եր)։

Կոմունայի անդամ Լոտսմանի համար անհասկանալի յերեվույթը բացատրվում եր շատ պարզ կերպով։ Ինչպես վերջը մենք պարզեցինք, Ներոդան կարգադրել եր Իրգենսոնին թույլ ընտանիքներն ուժեղացնելու համար (իսկ այդպիսիները, Ներոդայի ասելով, մեծամասնությունն եյին կազմում մեղվանոցում) յերկու ընտանիքն անել մեկ, միացնել. ընտանիքների մի մասում մայրերին վոչնչացնել և շրջանակները մեղուներով տեղավորել մյուս մասը։ Մեղուները նոր բնակիչներին կընդունեն թե չե, կամ ինչ վերաբերմունք ցույց կտան, այդ բանը վոչ Ներոդային, վոչ ել Իրգենսոնին ամենևին չեր հետաքրքրում։ Փոխադրեցին մի փեթակից մյուսը և ամեն ինչ վերջացավ, վոչ մի նախազգուշական միջոց (սրսկել) ձեռք չեր առնվում։ Այսպիսով, փոխանակ միացումից ոգուտ ստանալու, ստացվում եր խոշոր վնաս. մեղուների մեջ առաջ եր գալիս իսկական պատերազմ, վորի ընթացքում համարյա ամբողջ ներս բերված մեղուն կոտորվում եր ու դուրս գցվում։

Քիչ մնաց չեր վոչնչացել նաև հիմնական ընտանիքներում, վորոնցից շատերը մայիս ամսի վերջին դուրս յեկան անմայր. ինչպես յերևում է, ոտար մեղուները մայրերի մի մասին կոտորել եյին։ Մնաց ընդամենը 40 ընտանիք[1]։

[1] Թույլ ընտանիքները գլխավոր բերքից հետո, հաճախ նաև գարնանը, միացնելը մինչև հիմա ել գործադրվում է շատ մեղվապահների կողմից, և հաճախ բավական քանակությամբ լավորակ մայրեր վոչնչացվում են, այնինչ թե աշնանը և թե գարնանն այդպիսի ընտանիքները կարելի յե համապատասխան կերպով խնամել ու պահպանել իբրև նուկլեուսներ և հարկ յեղած դեպքում ոգտագործել այդ մայրերը, կամ յեթե այդ մայրերն ուրիշ տեղ պետք չեն, բերքն ակվելուն պես ուժեղացնել այդ փոքրիկ ընտանիքներն ու դարձնել արդյունավետ փեթակներ։ Մթ. թարգմ.

1930 թվի ամառը շատ բարեհաջող յեղավ. հարևան մեղվապահները, միջին հաշվով, յուրաքանչյուր ընտանիքից ստացան 30 կգ մեղր, իսկ մեր Իրգենսոնը յուր «ղեկավար» Ներոդայի հետ ընդամենը յուրաքանչյուր ընտանիքից վերցրեց 9 կգ մեղր և ունեցավ 57% ամ, այսինքն՝ կար 40 ընտանիք, դարձավ 63 ընտանիք։ Ձմեռը կուլակ Ներոդայի դեմքը պարզվեց և նա արտաքսվեց։ Միաժամանակ մեղվանոցից հեռացրին նաև Իրգենսոնին, իսկ ձմեռոցին հետևելը հանձնարարեցին ժամանակավոր մեղվապահի։ Այդ բոլորը կատարվել եր մինչև իմ Կարմիր բանակից վերադառնալը։

1931 թվին ձմեռոցից յես դուրս դրի ընդամենը 63 մեղվի ընտանիք, վորոնք շատ վատ վիճակում եյին գտնվում։ Ընտանիքներում մայրերի 30 տոկոսն անպետք դուրս յեկավ, իսկ մի քանի ընտանիք բոլորվին առանց մայրերի մնացին։ Ուժեղ ընտանիքներ կային վոչ ավելի քան 10 հատ, իսկ մնացած բոլորը միջակից ցածր ուժի տեր եյին։ Դրա հետ միասին՝ ընտանիքներից շատերը դուրս յեկան փորլուծով հիվանդ[1]։

Մեղուները բավարար քանակությամբ պաշար չունեյին։ Ձկար ինվենտար, նույնիսկ ամենահասարակ գործիքները չկային։ Ձկային պահեստի փեթակներ, վորպեսզի հիվանդ ընտանիքները փոխադրեյինք նրանց մեջ, չկային պահեստի մայրեր, վոչինչ չկար կերակրման խնդիրը լուծելու և առհասարակ վոչինչ չունեյինք։ Այդ բոլորը միանգամայն հասկանալի յեր—մեղուների գործը տարվել եր առանց վորևե պլանի, իսկ մեղվապահ Ներոդան իր հերթին վոչ մի միջոց չեր խնայել քայքայելու մեղվանոցը։ Մեղվանոցը դուրս դնելուց հետո յես առաջին իսկ որն անցա ընտանիքների ստուգման ու հաշվառման աշխատանքներին.

[1] Նկարագրված դրությունը տիպիկ է վատ ձմեռող ընտանիքների համար, յերբ գլխավորապես ձմեռոցի ջերմաստիճանը միապաղաղ չի լինում և հաճախ ջերմաստիճանն իջնում է 0-ից ցածր, դեռ չհաշված մի շարք ուրիշ թերություններ, վորոնք կարող եյին լինել այդ ձմեռոցում։ Ձմեռոցում ամենալավ ջերմաստիճանը 6—8° է։ Յեթե ջերմաստիճանը 6-ից չի իջնում, ապա արկանոցներն ամբողջ բնի լայնությամբ պետք բաց պահել՝ փեթակի ներսի ոդափոխությունն ապահովելու համար։ Մթ. թարգմ.

1) ընտանիքներ, որոնք ունեն 3—4 կգ մեղր, 2) հիվանդ ընտանիքներ, 3). անմայր ընտանիքներ. դրանց բոլորին էլ անմիջապես ցույց տվի անհրաժեշտ ոգնություն։ Մի խոսքով՝ առաջին մի քանի որվա ընթացքում հոգացի առաջին հերթին պահանջվող սուր կարիքները։ Այդ բոլորը շատ մեծ դժվարությամբ հաջողվեց ինձ։ Պետք յեղավ որական մի քանի անգամ ծեծել կոլտնտեսության վարչության դռները, մեկ՝ փեթակ խնդրելով, մեկ՝ ինվենտար, մեկ՝ կեր մեղուների համար։ Վարչության անդամները պարզորեն թերագնահատում եյին մեղվաբուծական գործը և այդ բանում մեծ դեր եր խաղում Ներոդայի ազդեցությունը։

Առանձին դժվարությամբ ինձ հաջողվեց մեղր դուրս դրել տալ մեղուների կերակրման համար։ Վարչության անդամները միանգամայն անթույլատրելի եյին գտնում գարնանը մեղուներին կերակրել մեղրով, յերբ նրանք արդեն դուրս են դրված և կարող են արոտ անել, ինքները, իբր թե, կարող են կեր գտնել, և կարիք չկա ծախսել կոլտնտեսային միջոցները[1]։

Մեծ դժվարությամբ ինձ հաջողվեց համոզել նրանց։ Աշխատանքներին խանգարում եր առանձնապես այն հանգամանքը, որ 63 ընտանիքից 40-ը շրջանակավոր փեթակների մեջ եյին տեղավորված, իսկ մնացած 23 ընտանիքը՝ կոճղավոր փեթակների մեջ (կուլակներից բռնագրավված)։ Չէ՞ որ շատ դժվար է վերացնել թերությունները կոճղավոր փեթակների մեջ. որինակ՝ արտաքին նշաններից ինձ հաջողվեց որոշել, որ կոճղավոր փեթակներից մի քանիսն անմայր են, իսկ հետո՝ ինչպես որոշել՝ արդյոք հիվանդ չէ՞ ընտանիքը։ Չէ՞ որ կոճղն անհնարին է բացել, դա հո շրջանակավոր փեթակ չէ։ Այնինչ, յեթե ժամանակին ընտանիքի մեջ չհայտաբերվի, ասենք, որինակ՝ փթախտի

[1]) Շատերի մեջ կարող ենք հարց ծագել, թե ինչու յեր Միխկելսոնն ուզում մեղրով կերակրել և վոչ շաքարով, որը մեղրից ավելի եժան է։ Նա միանգամայն ճիշտ է վարվել, որովհետև վաղ գարնանը վնաս է մեղուներին շաքարաջուրը տալը։ Ափսոս՝ այդտեղ մի բան պարզ չի։ արդյոք ծոր մեղրով է կերակրում, թե՞ շրջանակավոր։ Վերջինն ավելի հիշտ կլիներ, քանի որ ծոր մեղրը պետք է ջրալի դարձնել, նոր տալ, իսկ դա նույն շաքարաջրի ազդեցությունը կունենա։ Մր. թարգմ.

նման մի վարակիչ հիվանդություն, ապա ամբողջ մեղվանոցը կարող է կորստի մատնվել[1]։ Դրա համար էլ յես վճռեցի, առաջին իսկ հնարավորության դեպքում, կոճղավոր փեթակներից մեղուները փոխադրել շրջանակավոր փեթակների մեջ։

Այդ ժողովրդության մասին յես անմիջապես հայտնեցի կոլտնտեսության վարչությանը։ Կոլտնտեսական Ուլեյնիկը, նախկինում կուլակ, յերբ իմացավ այդ բանը, սկսեց ուժեղ ագիտացիա մղել կոլտնտեսականների և, առանձնապես, վարչության անդամների մեջ։

—Վոչ մի դեպքում չհամաձայնեք կոճղավոր փեթակներից մեղուները փոխադրել շրջանակավոր փեթակների մեջ։ Այդ ձևով ձեր մեղուները չեն բազմանա։ Չէ՞ որ մեղուները կոճղավոր փեթակների մեջ ավելի շատ ձագ են տալիս, քան շրջանակավոր փեթակների մեջ և մեղր էլ ավելի շատ են տալիս։ Ցեսայդ բոլորը շատ լավ գիտեմ, որովհետև հին մեղվապահ եմ։ Իսկ Միխկելսոնը շատ ջահել է և վոչինչ չի հասկանում այդ գործում... Ինձ հաջողվեց վարչության նախագահին համոզել, և նա թույլ տվեց լուծարքի յենթարկել կոճղավոր փեթակները։ Բայց յես այդ բանն արի ավելի ուշ, յերբ արդեն սկսեցին ծաղկել պտղատու այգիները։

Մեղուները դուրս դնելուց 2 որ հետո յես շտապեցի միացնել անմայր և թույլ ընտանիքները։ Մեղվանոցս 7 ընտանիքով պակասեց, բայց դրա փոխարեն 56 ընտանիքն արդեն լրիվ ապահովված եյին պաշարով։

Դուրս դնելուց յերբորդ որն զբաղվեցի սոված և թույլ ընտանիքներին կերակրելով—նրանց բոլորին էլ մեղր տվի։

Դրա հետ միասին, մեղուները ձմեռոցից դուրս դնելուց անմիջապես հետո, ամենայն հոգատարությամբ մաքրեցի փորլուծից կեղտոտված ընները ու փեթակները։ Առանձին ուշադրություն դարձրի ոդափոխության և ընների տաքացման վրա։

[1]) Կոճղավոր փեթակի վնասակարությունը միայն նրանում չէ, որ անհնար է հիվանդությունը բուժել, այլ նա ընդհանրապես անպետք է ոգտագործել խնամք տանելու համար և, հետևապես, բարձր արդյունք յերբեք էլ չէ կարող տալ։ Մր. թարգմ.։

Ութ որվա ընթացքում լրիվ կերպով կարգավորեցի մեղվանոցը։ Մեղվանոցը դասավորել եյի չախմատաձև, արկանոցները՝ դեպի արևելք։

Մեղվանոցը տեղավորված եր շատ հարմար տեղ—մեր պըտղատու այգում, հյուսային կողմից լավ պաշտպանված եր ծառերի պուրակով[1])։

Սիրտդ հրճվում եր նայելիս. ամեն ինչ ընթանում է իր կարգով, և, իմ հաշվով, կոլտնտեսությունն աշնանը պիտի ունենար հարյուր ընտանիք և 800 կիլոգրամ մեղր։ Գործի կազմակերպչական շրջանում դա քիչ արդյունք չե։

Բայց, ինչպես ասում է առածը՝ «ամեն ինչ այնպես չի դասավորվում, ինչպես սպասվում է»։ Դուրս դնելուց մի յերկու շաբաթ հետո վարչությունը նշանակում է ինձ մոտ Ալեյնիկին՝ «ինձ ոգնելու»։ «Դու, ասում են, ջահել ես և գործը տանել կդժվարանաս, թող Ալեյնիկն ոգնի, նա հին և փորձված մեղվապահ է»։

Ահա և քեզ նոր դժբախտություն։ Հազիվհազ ազատվել եյի արտաքսված կուլակ Ներոդայի թողած «ժառանգությունից», հիմա եկ հրամցնում են ինձ նույնանման մի կուլակի՝ մեղվանոցում ոգնելու։

Պետք է ասել, որ կոլտնտեսությունում լուրեր եյին պտտում, որ Ալեյնիկը նախկինում Նովո-Սերգիեվսկի ստանիցայի առաջնոն է յեղել և ունեցել է շատ հարուստ տնտեսություն (որը և վերջում հաստատվեց)։

Ինքս ինձ մտածում եմ՝ կոչնչացնի այդ Ալյենիկը մեր մեղվանոցը։ Դնացի կուսբջջի քարտուղար Կորնիենկոյի մոտ բողոքելու։

Կորնիենկոն հարցը դրեց վարչության նիստին։ Գրեթե վարչության բոլոր անդամները Ալեյնիկին պաշտպան հանդիսացան—թե՝ «նա խորթ չի, նա մերն է, կոմունային նվիրված անդամ է և, դրա հետ միասին՝ լավ մասնագետ»։ Վարչության անդամ Ֆեդորենկոն նույնիսկ առաջարկեց—«Ալեյնիկին նշանակել մեղվաբուծական ֆերմայի վարիչ, իսկ Միխկելսոնին՝ նրան ոգնական, իսկ յեթե Միխկելսոնը դրան համաձայն չի, ազատել նրան մեղվանոցային աշխատանքներից»։ Ամենայն հավանականությամբ այդպես էլ կլիներ, յեթե վարչության նախագահի ոգնական Կարլինը կտրականապես դեմ դուրս չգար այդ առաջարկին և չհայտարարեր, որ կոլտնտեսությունը պարտավոր է իր յերիտասարդ մասնագետները պատրաստել։ Ցեսնացի ֆերմայի վարիչ, իսկ Ալեյնիկին նշանակեցին ինձ մոտ ոգնական.

Ինչպես յես նախազգում եյի, այնպես էլ դուրս յեկավ։ Գոված մեղվապահ Ալեյնիկը, համենայն դեպս, կարողացավ բավականաչափ վնաս հասցնել մեղվանոցին։

Գլխավոր բերքի նախորյակին մենք վճռեցինք 36 ընտանիք փոխադրել «Սենյակ» կոչված հողամասը, որ գտնվում է կենտրոնական մեղվանոցից յերեք կիլոմետրի վրա։ Այդ մեղուների հետ գնաց իմ ոգնական Ալեյնիկը։

Ալեյնիկը նոր տեղում աշխատում եր շատ անբարեխիղճ, իմ կարգադրությունները չեր կատարում, ծեր, անպետք մայրերին ջահել մայրերով փոխարինելու իմ կարգադրությունը նույնպես չկատարեց։

Ամբողջ ամառվա ընթացքում տվեց միջին հաշվով 4 կգ մեղր մի ընտանիքից (16 կգ-ի փոխարեն, համաձայն պլանի) և 8 նոր ընտանիք։ Այնինչ կենտրոնական մեղվանոցն այդ միևնույն ժամանակում իր 28 փեթակից տվեց միջին հաշվով յուրաքանչյուրից 27 կգ մեղր և, բացի դրանից, 28 նոր ընտանիք։

Պետք եր շատ խիստ պատժել այդ ցնասարարին։ Բայց, ոգտագործելով վարչության մեջ յեղած ուժեղ կապերից՝ նա կարողացավ պատասխանատվությունից ազատվել, և նրա պատիժն այն յեղավ, որ նա հեռացվեց մեղվանոցից «անգործունեության» համար։

[1]) Մեղվանոցը սառը քամիներից պաշտպանված լինելը հսկայական նշանակություն ունի ընտանիքների անխափան զարգացման համար՝ գարնան ժամանակ։ Ով որ այդ հանգամանքը հաշվի չի առնում, խոշոր վնասներ է կրում, և չենք սխալվի, յեթե ասենք, որ մեզ մոտ այն մեղվանոցները, որոնք դարձանը բաց են հյուսիսային և արևելյան սառը քամիների առաջ, կորցնում են իրենց արտադրողականության առնվազն 50 %-ը։ Առանձին շեշտով նշում ենք այդ հանգամանքը հատկապես այն պատճառով, որ մեզ մոտ՝ Հայաստանում, չնայած մեկ-մեկ եր հարկ են համարում խոսել այդ մասին, բայց դրեթե յերբեք գործնական քայլեր չեն արվում այդ խնդիրը դրական լուծելու։ Ծ. Բ.։

Ութ որվա ընթացքում լրիվ կերպով կարգավորեցի մեղվանոցը։ Մեղվանոցը դասավորել էի շախմատաձև, արկանոցները՝ դեպի արևելք։

Մեղվանոցը տեղավորված եր շատ հարմար տեղ—մեր պըտղատու այգում, հյուսային կողմից լավ պաշտպանված եր ծառերի պուրակով[1])։

Սիրտդ հրճվում եր նայելիս. ամեն ինչ ընթանում է իր կարգով, և, իմ հաշվով, կոլտնտեսությունն աշնանը պիտի ունենար հարյուր ընտանիք և 800 կիլոգրամ մեղր։ Դործի կազմակերպչական շրջանում դա քիչ արդյունք չե։

Բայց, ինչպես ասում է առածը՝ «ամեն ինչ այնպես չի դասավորվում, ինչպես սպասվում է»։ Դուրս դնելուց մի յերկու շաբաթ հետո վարչությունը նշանակում է ինձ մոտ Ալեյնիկին՝ «ինձ ոգնելու»։ «Դու, ասում են, ջահել ես և գործը տանել կդժվարանաս, թող Ալեյնիկն ոգնի, նա հին և փորձված մեղվապահ է»։

Ահա և քեզ նոր դժբախտություն։ Հազիվհազ ազատվել էի արտաքսված կուլակ Ներոդայի թողած «ժառանգությունից», հիմա էլ հրամցնում են ինձ նույնանման մի կուլակի՝ մեղվանոցում ոգնելու։

Պետք է ասել, որ կոլտնտեսությունում լուրեր էին պտտում, որ Ալեյնիկը նախկինում Նովո-Սերգիեվսկի ստանիցայի առամանն է յեղել և ունեցել է շատ հարուստ տնտեսություն (որը և վերջում հաստատվեց)։

Ինքս ինձ մտածում եմ՝ կոչնչացնի այդ Ալեյնիկը մեր մեղ-

[1]) Մեղվանոցը սառը քամիներից պաշտպանված լինելը հսկայական նշանակություն ունի ընտանիքների անխափան զարգացման համար՝ գարնան ժամանակ։ Ով որ այդ հանգամանքը հաշվի չի առնում, խոշոր վնասներ է կրում, և չենք սխալվի, յեթե ասենք, որ մեղ մոտ այն մեղվանոցները, որոնք գարնանը բաց են հյուսիսային և արևելյան սառը քամիների առաջ, կորցնում են իրենց արտադրողականության առնվազն 50 %-ը։ Առանձին շեշտով նշում ենք այդ հանգամանքը հատկապես այն պատճառով, որ մեզ մոտ՝ Հայաստանում, չնայած մեկ-մեկ էլ հարկ են համարում խոսել այդ մասին, բայց դրեթե յերբեք գործնական քայլեր չեն արվում այդ խնդիրը դրական լուծելու։ Ծ. Բ.։

վանոցը։ Դնացի կուսբջջի քարտուղար Կորնիենկոյի մոտ բողոքելու։

Կորնիենկոն հարցը դրեց վարչության նիստին։ Դրեթե վարչության բոլոր անդամներն Ալեյնիկին պաշտպան հանդիսացան—թե՝ «նա խորթ չի, նա մերն է, կոմունային նվիրված անդամ է և, դրա հետ միասին՝ լավ մասնագետ»։ Վարչության անդամ Ֆեդորենկոն նույնիսկ առաջարկեց—«Ալեյնիկին նշանակել մեղվաբուծական ֆերմայի վարիչ, իսկ Միխկելսոնին՝ նրան ոգնական, իսկ յեթե Միխկելսոնը դրան համաձայն չի, ազատել նրան մեղվանոցային աշխատանքներից»։ Ամենայն հավանականությամբ այդպես էլ կլիներ, յեթե վարչության նախագահի ոգնական կարլինը կարականապես դեմ դուրս չգար այդ առաջարկին և չհայտարարեր, որ կոլտնտեսությունը պարտավոր է իր յերիտասարդ մասնագետները պատրաստել։ Ցեսնացի ֆերմայի վարիչ, իսկ Ալեյնիկին նշանակեցին ինձ մոտ ոգնական.

Ինչպես յես նախազգում էի, այնպես էլ դուրս յեկավ։ Գոված մեղվապահ Ալեյնիկը, համենայն դեպս, կարողացավ բավականաչափ վնաս հասցնել մեղվանոցին։

Գլխավոր բերքի նախորյակին մենք վճռեցինք 36 ընտանիք փոխադրել «Սենյակ» կոչված հողամասը, որ գտնվում է կենտրոնական մեղվանոցից յերեք կիլոմետրի վրա։ Այդ մեղուների հետ գնաց իմ ոգնական Ալեյնիկը։

Ալեյնիկը նոր տեղում աշխատում եր շատ անբարեխիղճ, իմ կարգադրությունները չեր կատարում, ծեր, անպետք մայրերին ջահել մայրերով փոխարինելու իմ կարգադրությունը նույնպես չկատարեց։

Ամբողջ ամառվա ընթացքում տվեց միջին հաշվով 4 կգ մեղր մի ընտանիքից (16 կգ-ի փոխարեն, համաձայն պլանի) և 8 նոր ընտանիք։ Այնինչ կենտրոնական մեղվանոցն այդ միևնույն ժամանակում իր 28 փեթակից տվեց միջին հաշվով յուրաքանչյուրից 27 կգ մեղր և, բացի դրանից, 28 նոր ընտանիք։

Պետք եր շատ խիստ պատժել այդ վնասարարին։ Բայց, ոգտվելով վարչության մեջ յեղած ուժեղ կապերից՝ նա կարողացավ պատասխանատվությունից ազատվել, և նրա պատիժն այն յեղավ, որ նա հեռացվեց մեղվանոցից «անգործունեության» համար։

1931 թվի աշնանն ինձ հանձնված մեղվանոցում կար ընդամենը 100 ընտանիք։ Ցավոք սրտի՝ ընտանիքները բոլորը միատեսակ ուժի տեր չէին։ Մեղվի ընտանիքները, որոնք հանձնված էին Ալեյնիկի հսկողությանը, բավարար քանակությամբ պաշար չունեին. ծեր մայրերը չէին փոխարինված ջահել մայրերով, ամառվա ընթացքում անպետք չէիր ընտանիքներում չէին փոխարինված մաքուրներով։ Պետք էր եղավ աշնանը բավականին մեղր ծախսել Ալեյնիկի հանձնած մեղվանոցը կերով ապահովելու համար։ Բայց, ինչպես երևում է, «բախտը չեր բերի յեթե դժբախտությունը չլիներ»։ Ալեյնիկի դեպքը կոլտնտեսականների մեջ բավական հավատ ստեղծեց դեպի ինձ, իբրև մեղվապահի։ Նրանք ակնհայտ կերպով տեսան, որ գործը կանոնավոր հիմքերի վրա դնելով՝ մեղվաբուծությունն իսկապես կարող է կոլտնտեսության համար շատ արդյունավետ ճյուղ դառնալ։ Նրանք հասկացան նաև, որ ամեն ինչ կախված է այն բանից, թե ով և ինչպես է աշխատում կոլտնտեսության մեղվանոցում և ինչպես է կազմակերպված աշխատանքն այնտեղ։

Պարզվեց, որ միևնույն պայմաններում մեղուն կարող է տարբեր չափի արդյունք տալ։ Կուլակ Ներոդայի մեղվանոցը կոբբատի չեր մատնված։ Իմ ժամանակ, ընդհակառակը, մեղվանոցը կարգի յեկավ, բազմացավ։ Նախկին տասան Ալեյնիկի որոք մեղուները տվին 4 կգ մեղր, միևնույն պայմաններում ինձ մոտ տվին յուրաքանչյուրը 27 կգ։

Գործի եյությունը շատ պարզ եր։ Վարչությունն ստիպված եր կոլտնտեսականների ճնշման տակ մեղվաբուծական ճյուղին ավելի ուշադրություն դարձնել և միջոցներ տրամադրել, քան առաջ։ Ինձ ոգնական տվին փորձված և ստուգված կոմունար Պակլերին։ Բացի այդ, 1932 թվին իր ազատ ժամերին ոգնում եր ինձ ուսուցիչ Եյիեենբաումը։

ՄԵՆՔ ԿՌՎՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՀՆԳԱՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ

Առաջին հաջողությունն ինձ թև տվեց։ Իսկապես, մտածում եյի յես, չնայած վոր կոլտնտեսային վարչությունը թերագնահատում եր մեղվաբուծական ճյուղը, չնայած նույնիսկ մեղվանոց ստեղծված դասակարգային թշնամու վնասարար աշխատանքին, մեր մեղվանոցն արդեն 1931 թվին տվեց բավարար արդյունք՝ 928 կգ մեղր, 24 կգ մոմ և 44 ընտանիքի հավելում։ Իսկ մի թե հնարավոր է հաշվի առնել և բավականաչափ գնահատել, թե ինչ հսկայական ոգուտ է տվել այն աշխատանքը, վոր մեղուները տարել եյին՝ փոշոտելով մեր արևածաղիկը, մեր տեխնիկական, բանջարանոցային և պտղա-հատապտղային մշակույթները։

Այդ ոգուտը, գյուղատնտեսական մշակույթների բերքի այդ բարձրացումը, ի հարկե, մի քանի անգամ ավելի շատ է, քան այն յեկամուտը, վոր ստանում է կոլտնտեսությունը մեղուներից մեղրով և մոմով։

Մյուս կողմից՝ «Կոյտ» տնտեսությունն ունի բոլոր հնարավորությունները՝ խոշոր մեղվաբուծական տնտեսություն կազմակերպելու։ Մեր շուրջը ձգվում են հիանալի պտղատու այգի, մի մեծ պարկ (պարտեզ), բոստաններ, բանջարանոցներ, 400—500 հեկտար մեղրատու մշակովի բույսեր դաշտերում, վորոնք փոշոտման խիստ կարիք են զգում։ Կան բոլոր տվյալները կոլտնտեսության համար խոշոր մեղվաբուծական ֆերմա ստեղծելու։ Կոլեկտիվ տնտեսության և վոչ մի ճյուղ չի կարող աճել և զարգանալ առանց պլանի։ Միայն պարզ, ճիշտ, նախորոք կազմած պլանը, միայն այդ պլանի անշեղ կատարումը կարող է ապահովել մեղվաբուծական ֆերմայի ապագա աճման, զարգացման գործը։ Ահա թե ինչու 1931 թվի ձմեռվանից յես սկսեցի կազմել մեր կոլտնտ-

Ն. ՍՏԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅ-ՍՍՌ
Ս. ՄԱՍՏԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ

տեսության մեղվաբուծական ֆերմայի հնգամյա պլանը։ Բայց վորովհետև իմ հեղինակությունը վարչության անդամների մոտ դեռ այնքան մեծ չեր, յես վոչ վոքի չեյի հայտնում վոչ իմ նվիրական մտքերի, վոչ էլ առանձնապես պլանը կազմելու մասին։

Մեղվաբուծական ֆերմայի զարգացման պլանի նախագիծն ընդգրկում եր 5 տարի՝ 1933—1937 թվիը։ 1937 թվի վերջում կոմունայի մեղվաբուծական ճյուղի ապագա զարգացման հնարավորությունները—միաժամանակ նրա անցած ուղին մեղրի արտադրանքի և աճի նկատմամբ—պետք է վերանայվեն։ Պլանի հիմքում յես դրել եմ մեղուների բազմացումը, տարեկան 65% աճ, հաշվելով ձմեռվա ընթացքում 3% անկում։ 1937 թվի վերջին կոլտնտեսության մեղվաբուծական ֆերման պիտի ունենա 4000-ից ավելի մեղվի ընտանիք։ 1937 թվի գարնանը մեր ֆերման պիտի դառնա շրջակա կոլտնտեսություններին մեղվի ընտանիքներ մատակարարելու բազա։

1932 թվի ամառը մեր մեղվանոցի համար բավական բարեհաջող անցավ։

Աշնանն ունեյինք 150 ընտանիք՝ կոլտնտեսության պտղատու այգում դրած։ Մեղը հանձնեցինք 3200 կգ։ Այդպիսի մեծ, այդպիսի արդյունավետ մեղվանոց «Կոյտ» կոլտնտեսությունը յերբեք չեր ունեցել։

— Կեցցեն տղերքը,—գովում են կոլտնտեսականներն ինձ և իմ ոգնական Պակլերին,—համարյա ամբողջ ամառը միայն յերկուսով են աշխատել, իսկ տեսնում եք ինչքան արդյունք տվին։ 7000 ռուբլու արդյունք, դա հանաք չի։

Հավատը դեպի ֆերման, դեպի աշխատակիցները միանգամից բարձրացավ։ Ձմեռոց դրվեց 150 ընտանիք՝ պաշարով լավ ապահովված և համարյա բոլորը յերիտասարդ, առողջ մայրերով։ Ձմեռվա ընթացքում ազատ ժամանակ ունեյի և այդ ազատ ժամանակը վճռեցի գործադրել իմ հնգամյա պլանի կարևորությունը բացատրելով կոլտնտեսականներին։

Նախքան այդ, յես իմ պլանն ավելի ճշտեցի. պլանը կազմելիս յես ընդունել եմ հետևյալ նվազագույն ցուցանիշները.

1. տարեկան աճը ձագ տվությունից—65,8%.
2. տարեկան անկումը ձմեռվա ընթացքում—3%.
3. տարեկան մեղրի բերքը մի ընտանիքից, չհաշված մեղուների ձմեռվա պաշարը—16 կգ.
4. մոմ՝ յուրաքանչյուր ընտանիքից տարեկան 500 գր։

Այսպիսով, 1932 թվի աշնանն ունենալով 150 ընտանիք՝ 5 տարվա ընթացքում մեղուների աճի պատկերը հետևյալը պիտի լիներ, հաշվելով 1932 թվից—1937 թվը (պլանը կազմելիս ընդունված ցուցանիշներից յես շատ չնչին շեղումներ եյի թույլ տալիս։

Գյուղատնտեսական «Կոյտ» արտելի մեղվաբուծական ֆերմայի զարգացման հնգամյա պլանը

(1932—1937 թ թ.)

1. Ձմեռոց կդրվեն 1932/1933	150
2. Անկում՝ ձմեռվա ընթացքում	5
3. Կմնան դուրս դնելու 1933 թվին	145
4. 1933 թվի ընթացքում աճ	355
5. Ձմեռոց կդրվեն 1933/34 թ.թ.	500
6. Անկում՝ ձմեռվա ընթացքում	25
7. Կմնան դուրս դնելու մեղվի ընտանիքներ 1934 թ.	475
8. Աճ 1934 թ. ընթացքում	525
9. Ձմեռոց կդրվեն 1934/35 թ.	1000
10. Անկում՝ ձմեռվա ընթացքում	30
11. Կմնան դուրս դնելու մեղվի ընտանիքներ 1935 թ. գարնանը	970
12. Աճ՝ 1935 թվի ընթացքում	650
13. Ձմեռոց կդրվեն 1935/36 թ.	1620
14. Անկում ձմեռվա ընթացքում	48
15. Կմնան 1936 թվի գարնանը դուրս դնելու	1572
16. Աճ 1936 թվի ընթացքում	1011
17. Ձմեռոց կդրվեն 1936/37 թ.	2583
18. Անկում՝ ձմեռվա ընթացքում	87
19. Կմնան 1937 թվի գարնանը դուրս դնելու	2496
20. Աճը՝ 1937 թվի ընթացքում	1622
21. Ձմեռոց կդրվեն 1937/38 թ.	4118
22. Անկում՝ ձմեռվա ընթացքում	118
23. Կմնան դուրս դնելու 1938 թվի գարնանը	4000

Ինչպես կատարեցինք մենք մեր այդ պլանը, ինչքան մեղր և մոմ ստացանք 1933 թվին և 1934 թ.—ընթերցողը հետաքրքրվում է գլուխներից կտեսնի։

Այստեղ յես կնշեմ միայն, թե «Կոյա» կոլտնտեսության մեղվաբուծական ֆերմայում պլանով ապրանքային ինչ յելույթ ենք նախատեսվում մեր հնգամյակի մնացած յերեք տարվա համար։

Ապրանքային արտադրանքի յելույթը (առանց մեղուների ձմեռվա պաշարի)

Տարիներ	Արդյունավետ մեղվի ընտանիքների քանակը	Մեղրի արտադրանքը կիլոգրամներով	Մոմի արտադրանքը կիլոգրամներով
1935 թ. . .	970	15520	485
1936 թ. . .	1572	25152	786
1937 թ. . .	2496*)	39936	1289

Մեղվի ընտանիքների աճին համապատասխան կազմված է տարեկան փեթակների պատրաստման պլանը. 1935 թվին—620, 1936 թվին—953, 1937 թվին—1535։

Մեղուների կերի խնդիրը յես լուծեցի այսպես. ծրագրեցի 40 հեկտ. ֆացելիայի ցանք՝ մեղուների համար։ Դրա հետ միասին կոգտագործվեն արևածաղկով, առվույտով, կորնգանով բռնված տարածությունները։ Բոլոր այդ մշակույթներով զբաղված տարածությունները կսպասարկեն 1,256 մեղվի ընտանիքի։ Մնացած ընտանիքները պիտի ոգտագործեն վայրի մեղրատուները, պտղատու ծառերը և այլն,—ինչպես «Կոյա» կոլտնտեսության, այնպես և ուրիշ կոլտնտեսությունների սահմաններում,—քոչվորական կարգով։

Միանգամից ցույց տալ կազմած պլանը կոլտնտեսության

*) Մեղվի ընտանիքների ընդհանուր քանակը 1937 թ. վերջին կհասնի 4000-ի, բայց ապրանքային արտադրանք կտան, ի հարկե, ոչ թե բոլոր 4000-ը, այլ միայն ձմեռած մեղուները, այսինքն՝ 2496 (տես հնգամյա պլանը 19 նկում)։

վարչությանը—յես վախեցա։ Սկզբում ծանոթացրի այդ պլանին մի քանի ընկերների, վորոնք կողմնակից եյին մեր կոլտնտեսության մեջ մեղվաբուծական ճյուղի զարգացման՝ ինչպիսին են՝ մեր պտղաբուծը—կոմունայի վաղուցվա անդամ՝ ամերիկացի Ռաուկին, Կրասշուն և ուրիշները։ Նրանք միանդամայն հավանություն տվին իմ պլանային նախագծումներին։

Դրանից հետո յես վստահություն ունեցա հավաքել «Կոյա» կոլտնտեսության ակտիվ ընկերներից մի խմբակ և դիմեցի նրանց հետևյալ խոսքերով։

— Ցես, ընկերներ, վաղուցվանից կազմել եմ մեր մեղվաբուծական տնտեսության զարգացման ծրագիրն առաջիկա 5 տարիների համար։ Ցես ծրագրել եմ ստեղծել մեղվաբուծական ֆերմա, վորը 1937 թվի գարնանը պիտի ունենա 4000 մեղվի ընտանիք. յես ուզում եմ, վոր դուք ոգնեք ինձ այդ ծրագիրը վարչության մոտ անցկացնելու։ Ցես կարճ կպատմեմ ձեզ, թե դրանն ինչ է, վորպեսզի դուք լիովին հասկանաք ինձ։

— Մեղվաբուծությունը, ինչպես և մեր տնտեսության մյուս ճյուղերը, չեն կարող մնալ իրենց այժմյան վիճակում։ Տարեցտարի նա պիտի աճի, զարգանա և ավելի ու ավելի արդյունավետ դառնա կոլեկտիվ տնտեսության համար, ուժեղացնի դաշտերի պտղաբերությունը, տա մեղրի և մոմի մեծ արդյունք։ Այստեղ շատ կոլտնտեսականներ այն կարծիքին են, վոր իբր շուտով մեղուները հավաքելու բան չեն գտնի կոլտնտեսության սահմաններում։ Նրանք ասում են—վորովհետև կոլտնտեսությունը պլանային կարգով կռվում է մոլախոտերի դեմ, ուրեմն և մեղուն մեղր պատրաստելու նեկտար չի գտնի։ Ավելորդ խոսքեր են դրանք, ընկերներ. այդ մտքերը տարածել են մեր թշնամիները՝ կուլակները։

Դաշտերում մոլախոտերը պետք է անխնա վոչնչացնել, դրանց փոխարեն անմիջապես պետք է ցանել այնպիսի կուլտուրական բույսեր, վորոնք մի կողմից մեծ ոգուտներ կտան մեր տնտեսության, մյուս կողմից՝ մեղուների ոգտագործման համար պետքական կլինեն։ Վերցրեք, օրինակ՝ առվույտը, իշառվույտը, կորնգանը—դրանք բոլորն էլ հրաշալի խոտ են տալիս անասնա-

պահական ֆերմաներին և միաժամանակ լավ մեղրատուներ են[1]) Չէ՞ վոր այդպիսով մենք մի հարվածով յերկու նպատակ սպանած կլինենք։ Կամ, որինակ, թեկուզ մանանեխը. նրա սերմերից պատրաստում են շատ լավ ուտելու յուղ։ Միաժամանակ այդ բույսը հրաշալի մեղրատու յե։ Այդպիսով մենք կըստեղծենք կերի հիմնական բազա մեր թե անասնապահական ֆերմաների և թե մեղվաբուծական ֆերմաների համար։ Տարեցտարի մեր մեղվանոցներն ավելի ու ավելի արդյունք կտան։ 1938 թվին մենք կունենանք 4000 մեղվի ընտանիք և յեթե այդ տարին մեր տնտեսության գլխավոր ուղղությունը լինի մեղրի արդյունքը, նրանք մեզ կտան 200000 կգ մեղր (հաշվելով յուրաքանչյուր ընտանիքից 50 կգ մեղր)։ Յեթե հաշվենք, վոր 1938 թվին մեղրի արժեքը կլինի վոչ ավելի, քան մի ռուբլի, նույնիսկ այդ դեպքում մեղվաբուծական ճյուղի արդյունքը կարտահայտվի կլոր գումարով 200000 ռուբլի։

Այստեղ անհամբերությամբ խոսքս կտրեց մեր դաշտավարը։

— Եդ բոլորը լավ։ Հիմա ավելի լավ ե դու ասա, թե ինձանից քանի՞ մարդ ես պահանջելու այդ գործի համար։ Տես, այնպես արա, վոր դաշտային աշխատանքները չկաղան, առանց այն ել բանվորական ուժի կարիքը մեծ ե։

— Ես բոլելիս կասեմ. մեր տնտեսությունը կբաժանվի 5 մեղվանոցի, ուրեմն՝ կպահանջվի 5 բրիգադիր և մոտավորապես 40 կոլտնտեսական։ Բացի այդ, աշխատանքների տաք ժամանակ հարկավոր կլինեն մոտ 80—100 սեզոնային աշխատակիցներ։ Այսպիսով ստացվում ե ամենաշատը 150 մարդ։ Սպասիր, գլուխդ մի թափ տուր, այնքան ել սարսափելի չի։ Վորպես սեզոնային աշխատակիցներ կաշխատեն 6-րդ և 7-րդ դասարանների աշակերտները, վորոնք հենց այդ ժամանակ ազատ են իրենց պարապմունքներից։ Այս աշխատանքը նրանց համար կունենա մեծ կրթական նշանակություն. իսկ մեղվաբուծության համար կնախապատրաստվեն յերիտասարդ կադրեր։

— Միևնույն ե, վորտեղից կարող ենք թեկուզ 50 հոգի վերցնել,—համառորեն պատասխանեց դաշտավարը։ Չէ՞ վոր այդ մարդիկ պիտի ամրացվեն իրենց մեղվաբուծական բրիգադներին, ուրեմն՝ վոչ անասնապահությունը, վոչ դաշտավարությունը չեն կարող հույս դնել նրանց ոգնության վրա... Վոչ, այդպես հնարավոր չի լինի. դու չպետք ե մոռանաս, վոր դաշտավարությունը մեզ մոտ առաջատար ճյուղն ե։

— Յես բոլորովին չեմ ել խնդրում, վոր դաշտավարական և անասնապահական բրիգադներից վերցնեք մարդիկ և ինձ տաք։ Ինչու՞ համար յես պիտի վերցնեմ չափահաս մարդկանց և այն ել այնպիսի ճյուղերից, ինչպիսին ե դաշտավարությունը։ Դու, կարծում եմ, չես մոռացել մեզ փոխարինողներին։ Կոմյերիտականները, պիոներները—չէ՞ վոր նրանք ել կարող են աշխատել, յերբ կմեծանան, իսկ հենց այդ ժամանակ մեզ միայն շատ մարդ հարկավոր կլինի։

Այդ խոսակցությունից հետո դաշտավարը վորոշեց ինձ ոգնել, խոստացավ նաև մեծ ոգնություն ցույց տալ ինձ կուս-բջիջի քարտուղար Տրուսովը, յերբ յես մանրամասն պատմեցի նրան ամեն ինչի մասին։

Այս բոլոր խոսակցություններն ինձ սատիկ խրախուսեցին, և յես վորոշեցի այլևս չթագցնել պլանը, ընդհակառակը, կպցրի պատին։

Յես արդեն գործը գլուխ յեկած եյի համարում, ճիշտ եր միայն հաջողեցնել վարչության առաջ դնել իմ զեկուցումը հընդամյա պլանի մասին։ Շուտով հաջողեցրի այդ բանը։

Բայց, ավաղ, վարչությունը մերժեց իմ ծրագիրը, իսկ նրանք, վորոնք ինձ խոսք եյին տվել ոգնելու, պետք յեղած հաստատակամություն չցուցաբերեցին։

Այդ բանն ինձ վիրավորեց. առանձնապես վիրավորված եյի կուս բջիջի քարտուղարից, վոր խոստացած ոգնությունը ցույց չտվեց։

[1]) Այդ ձևի միջոցառումներն առանձնապես աչքի յեն ընկնում ԱՄՆ-ում վորտեղ բնակությունների սահմաններում, ճանապարհների կողքին և այլն—ամեն տեղ ցանվում են մեղրատու բույսեր, վորոնց մեջ շատերը դեկորատիվ բույսեր են։

1933 թվի գարնանը փոխեցին վարչությունը, ընտրեցին նոր, ավելի կայուն կուսակցականների, և մեր հնգամյակը նորից քննության ենթարկվում։

Այս անգամ արդեն գործն ուրիշ պատկեր ընդունեց. բոլորն ասացին, որ առանց պլանի չի կարելի աշխատել, պլանը պետք է ընդունել և ուղարկել շրջան հաստատելու։ Առածն—արած՝ մեկ յեղավ։ Պլանը շրջանում նայեցին և հաստատեցին։ Այսպիսով 9 ամիս մենք կռվում եյինք պլանային աշխատանքի համար։

ՄԵՐ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ԻՐԱԳՈՐԾԵԼԻ ՅԵ

«Կոյտ» կոլտնտեսության մեղվաբուծական տնտեսությունը դարձավ պլանային։

Այդ որվանից մեզ՝ մեղվապահներիս անհրաժեշտ եր մեր ամբողջ եներգիան, մեր փորձառությունը և գիտելիքներն ի սպաս դնել մեր հնգամյակին։ 1933 թվի գարնանը մենք դուրս յեկանք 150 մեղվի ընտանիքներով։ Հիմա պետք եր ամբողջ հոգատարությունը գործադրել, որպեսզի 1933 թվի աշնանը, համաձայն պլանի, ընտանիքների թիվը հասներ 400-ի և, բացի այդ, ստանայինք վոչ պակաս քան 3000 կգ մեղր։ Առաջին դժվարությունն առաջ յեկավ շրջանակավոր փեթակների գործում։ Պակասում եր վոչ շատ, վոչ քիչ — 250 փեթակ. ձեռքի տակ յեղածները բոլորն արդեն բռնված եյին։ Իսկ ժամանակը չի սպասում. մեղուները բոլորովին պատրաստ են ձագ տալու, ամենաուշը մինչև հունիսի 1-ը հարկավոր եր վորտեղից վոր և փեթակներ ճարել։ Փեթակների արժեքը վարչությունը ժամանակին փոխադրել եր, բայց առայժմ ստացվել եր ընդամենը մի քանի տասնյակ փեթակ. ցնորը կուղարկվեն ճացածները և արդյոք ուղարկվելու դեպքում ժամանակին կհասնեն, թե վոչ — անհայտ է։ Չե՞ վոր պետք է շտապել ձաղ վերցնել, վորպեսզի մինչև գլխավոր մեղրաբերքն այդ գործը վերջացրած լինեյինք։ Մեզ այդ խնդիրը շատ եր զբաղեցնում։ Յեվ ահա յես և իմ մեղվապահները՝ Պակլերը և Սաամն յեղբայրները վճռեցինք չսպասել փեթակների ստանալուն, այլ ինքներս մեր ուժերով շինենք։ Այսպես ել արինք։ Այս ու այն տեղից ձեռք բերեցինք քիչ-միչ բանի նման մատերիալ — հին դռներ, ուսամուտների ծածկափեղկեր, ամեն տեսակի տախտակներ — քաշ տվինք արհեստանոց և սկսեցինք աշխատել։

Մի քանի որ հետո այնքան փեթակ ունեյինք, վոր ուզած րոպեյին արդեն կարող եյինք բաժանել մինչև 30 հատ ուժեղ ընտանիքներ։ Հենց այդ ժամանակ ել ստացանք շրջանային կենտրոնից բոլոր 250 փեթակը. իզուր տեղն եյինք այդքան անհանգստանում նրանց համար։ Բայց այդ փեթակները մենք ստացանք չմեխված վիճակում։ Նախ՝ հարկավոր եր այդ փեթակները հավաքել, մեխել։ Յեվ ահա նորից սկսվեց յեռուն աշխատանքը մեզ մոտ։

Հենց այդ ժամանակ վրա հասան աշխատանքի տաք որերը. գործը-գործի վրա յեր կուտակվում։

Սկսեցին դուրս գալ ընական ձագեր. արդեն վաղուց ժամանակն եր արհեստական ձագեր վերցնել—հարկավոր եր ուշադիր հետևել յուրաքանչյուր ընտանիքին։ Յեվ ահա այդպիսի ժամանակ անհրաժեշտ է նաև փեթակները մեխել։ Աշխատավոր ուժը հազիվ բավականացնում եր մեր գործին, իսկ վարչությունը վոչ մի չափահաս կոլտնտեսականի չեր կարող ուղարկել մեզ ոգնության։ Յեվ ահա այդտեղ մեզ խիստ ոգնեց պլանը։ Նա անընդհատ մեզ՝ մեղվապահներիս առաջ եր քշում—չե՞ վոր պլանի անշեղ կատարումը մեզ համար դառել եր պատվի խնդիր։ Մարդիկ իրենք անգամ չնկատեցին, թե ինչպես դարձան կոլտնտեսային մեղվաբուծության իսկական հարվածայիններ։ Յուրաքանչյուր բոպեն մեզ մոտ հաշվի յեր առնված։ Առավոտը վաղ վեր եյինք կենում և շտապում մեղվանոց սարքելու՝ մեխելու, կարգի բերելու փեթակները, քանի դեռ աշխատանքները չեյին սկսվել։ Յերեկոյան, յեթե մեղուների մեջ աշխատանքը շուտ եյինք վերջացնում, շարունակում եյինք ճրագի լույսի տակ փեթակները մեխել, շրջանակները պատրաստել։

Հինգ որվա ընթացքում վերջացրինք արհեստական ձագեր վերցնելու գործը։

Գլխավոր մեղրաբերքի նախորյակներին (1933 թվին գլխավոր մեղրաբերքն սկսվեց հունիսի 22-ին) մենք ունեյինք 350

փեթակ։ Կշռափեթակը յուրաքանչյուր որ ցույց եր տալիս 3—5 կգ մեղրի հավելում։

Մեղուների համար լայն ասպարեզ եր բացվել։ Մեղվանոցի շրջապատում ուժեղ թափով ծաղկում եյին ուժեղ մեղրատուները—ծծմորը, իշառվույտը, առվույտը և այլն։ Մեղրաբերքը չափազանց հարուստ եր։ Սեզոնի ընթացքում մենք քաշեցինք 85 ցենտներ մեղր, այսինքն՝ գարնանը դուրս գրած յուրաքանչյուր հիմնական ընտանիքից միջին հաշվով 56 կգ։ Մոմ ստացանք յուրաքանչյուր ընտանիքից 800 գրամ։

Մեր մեղվանոցն աճում եր վոչ թե որերով, այլ ժամերով։ Գլխավոր մեղրաբերքից հետո մեղուների թիվը ել շատացրինք և հասցրինք 300 ընտանիքի։ Այժմ այգու կեսը գրեթե բռնված եր մեղվանոցով։ Փեթակների կանոնավոր շարքերն սկսվում եյին գրեթե տների մոտ և անցնում եյին մինչև պարկի խորքերը, վորը ձգվում եր այգուց այն կողմ։

Կոմունարները բարեսրտորեն կատակներ եյին անում մեզ հետ,—շուտով դուք ձեր մեղվանոցով ամբողջ բակը կբռնեք, անցնելու տեղ չի մնա։

Վարչության անդամներն սկսել եյին սաստիկ հետաքրքրություն ցույց տալ գեպի մեր գործը, շուտ-շուտ անցնում եյին մեղվանոց։ Մի անգամ ինքը՝ վարչության նախագահը հետաքրքրվեց։

— Քանի՞ հատ մեղվի ընտանիք ունեք այս բոպեին։

— Հինգ հարյուր։

Սաստիկ զարմացավ։

— Իսկ վորտեղից գտաք այդքան փեթակ նրանց համար։ Մենք զուրս ենք գրել ձեզ համար 250 փեթակ, ունեցիք 150, ուրեմն ընդամենը 400, իսկ հարյուրը վորտեղից գտաք։

— Մենք ստացանք 250 ընի կորպուսների հետ այդքան ել վերնահարկ։ Դրանցից 2-ն ուղիղ մի ընի կորպուսի բարձրություն ունեն։ Մենք յերկու այդպիսի վերնահարկերը միացրինք, կազմեցինք մեկ բուն և այդպիսով ստացանք ավելորդ 125 փեթակ։ Հատակներն ու կառուցները շինում եյինք ինչից պատահեր։ Ահա այդպես ել յոլա գնացինք։

— Բայց մի՞թե ձեզ վերնահարկեր հարկավոր չեն։

— Առայժմ վոչ։ Մենք չե՞ վոր հիմա ամեն ջանք գործ ենք դնում առաջիկա տարիներում ընտանիքների թիվը մեծացնել. վերնահարկեր մեզ հարկավոր կլինեն, յերբ ածի խնդիրը հիմնականում կլուծի մեզ մոտ, իսկ դա կլինի 4—5 տարուց հետո։

— Կեցցեք,—գովեց նախագահը,—աշխատում եք յերեքով, իսկ փեթակների թիվը մի ամառվա ընթացքում 350-ով ավելացրել եք։ Չե՞ վոր ամբողջ շրջանում մի ուրիշ այդպիսի մեղվանոց չկա։

Զգաստությունից և մեղրաբերքից հետո մենք մեղվանոցն ամբողջովին կարգի բերինք։ Աշնանը բոլոր 500 ընտանիքները լավ դրության մեջ եյին, փեթակներն ունեյին վրայի բարձեր և ապահովված եյին մեղրով միջին հաշվով 14 կգ յուրաքանչյուր ընտանիքին։

Կոլտնտեսությունը մեղվաբուծությունից ստացավ բավական զգալի արդյունք—65,000 ռուբլի։ Հիմա արդեն յուրաքանչյուր կոլտնտեսականի համար պարզ եր, վոր այդ գործն ամեն կերպ պետք եր զարգացնել։

Ձմեռոցի գործն անհաջողության հանդիպեց։ Վարչությունն ուշ սկսեց ձմեռոցի նոր՝ մեծ շենքի կառուցումը, իսկ ցրաերն արդեն սկսվել եյին։ Ստիպված յեղանք մեղուները հավաքել չավարտած և խոնավ շենքի մեջ։

Մեր առաջ սուր կերպով կանգնեց մեղվաբուծական նոր կադրեր պատրաստելու խնդիրը։ Աճող մեղվանոցը պահանջում եր այդ գործի տեխնիկային տիրապետող մարդիկ։ Կոլտնտեսության վարչությունը և յերկրային մեղվաբուծական միությունն այդ գործում հոժարությամբ ընդառաջեցին մեզ։ Ձմեռը կազմակերպեցինք մեղվաբուծական դասընթացներ։ Յերկու ամիս շարունակ ամեն որ յերեկոները դասընթացներում պարապմունքներ եյինք ունենում։ 20 կոլտնտեսականներ, վերջացնելով որվա աշխատանքները՝ նստում եյին աշակերտական նստարաններին և ամենայն ջանասիրությամբ տիրապետում եյին մեղվաբուծական գործի և՛ գործնականին, և՛ տեսականին։

Դասընթացներն անցան շատ հաջող։ Դասընթացներից անմիջապես հետո սկսեցինք բրիգադներ կազմել։ 1934 թվի ամառը

անգամ ստիպված եյինք լինում 24 ժամ անընդհատ աշխատել։ Անձրևից մի քանի որ հետո սկսվեց բերքը։ Մեղուները դադարեցին թույլ ընտանիքների վրա հարձակվելուց։ Կշռափեթակն օրական մոտ մի կգ հավելում եր ցույց տալիս։ Մեղրաքամի համար կազմակերպեցին առանձին բրիգադ։

Գառավոր աշխատանք եր նրանց աշխատանքը։ Յերբ սկսվեց գլխավոր բերքը, կշռափեթակն օրական ցույց եր տալիս 4—5 կգ հավելում։

Մեղրաքամի բրիգադն աշխատում եր ամբողջ թափով և ամեն ճիգ թափում եր անգամ մի կգ մեղր չկորցնելու։ Հաղիվ լույսը բացված, մեր «քամողներն» արդեն ճանապարհին եյին՝ բոլոր հարմարություններով և մեղրահաններով հանդերձ։ Ունեյինք հինգ մեղվանոց՝ մեկը մյուսից մոտ հինգ կիլոմետր հեռու։ պետք եր որվա ընթացքում բոլոր տեղերում էլ լինել։ Հաղիվ Գակլերի մոտ վերջացնում եյին աշխատանքը, պետք եր շտապել Սեղպահամերի մոտ, իսկ այնտեղ Ռուդենկոն և անհամբեր սպասում։

Բերքի հետ միաժամանակ սկսվեց ընական ճաղավորությունը։ Վոչ մի հնարավորություն չկար նրա հետ կռվելու։ Այնպես միանգամից սկսվեց, վոր բոլորիս էլ ուղղակի հանկարծակի բերեց։ Իսկ բերքն ինչպես անսպասելի սկսվել եր, այնպես էլ անսպասելի դադարեց։ Միայն մի քանի որ հարուստ բերք յեղավ։ Համենայն դեպս ընտանիքները կարողացան պաշարով ապահովել իրենց և միջին հաշվով 18 կգ էլ մեղր տալ։ Աշնանը մեղվաբուծական ֆերմայում արդեն 1028 ընտանիք կային։ Մենք էլի մի անգամ ապացուցեցինք հնգամյակի իրական լինելը և խփեցինք թերահավատների քթին, վորոնք շարունակում եյին քրթմնջալ, թե կոլտնտեսությունն իզուր տեղն ահագին փողեր վոչնչացրեց, ամառն անհաջող է և մեղվաբուծությունը կկործանվի։ Ֆերման յուր տարեկան պլանը կատարեց, իսկ յուր պարտավորությունները հանդեպ խորհրդային կառավարության դերակատարեց խոշոր չափերով։ Մենք նրա հետ հաշիվները մաքրեցինք ազնվորեն, ինչպես վայել է կոլտնտեսությանը, նույնիսկ ժամկետներից շուտ։

Ձմեռելու նախապատրաստական աշխատանքներն էլ լավ տարանք. բոլոր փեթակները վերանորոգեցինք և տաքացումները դրինք, ձմեռոցի նոր շենքը կարգավորեցինք,—որինակելի դրության մեջ դրինք։

Իհարկե՝ դժվարություններ էլ եյինք ունենում. որինակ՝ շատ անգամ արտադրական ժողովներում կարիք եր լինում դնել կարգապահության, լքողների և ծուլերի խնդիրը։ Բայց ֆերման այդ բոլոր դժվարություններից պատվով դուրս յեկավ։ Իսկ մեր գլխավոր հաղթանակը նրանում է, վոր մեր մեղվաբուծական ֆերման այժմ դառնում է «Կոյտ» կոլտնտեսության կուսակցական կազմակերպության մշտական և ամուր ղեկավարության տակ՝ գլխավորությամբ կուսկազմակերպիչ Բելագոնովի և կոլտնտնախագահ Ալգուսի։ Արդեն չունենք վոչ մի կոլտնտեսական, վորը հուսով և հավատով ներշնչված չլինի դեպի յուր մեղվաբուծական ֆերմայի ապագան։ Յերբ կոլտնտեսականների ընդհանուր ժողովում ընկ. Ալգուսը հայտարարեց, վոր վարչությունը վորոշել է 1935 թվի գարնանից, համաձայն հնգամյա պլանի, ձեռնարկել կոլտնտեսականներին անձնական ոգտագործման համար մեղուներ տալու գործը (սկզբում հարվածայիններին, ապա մնացած բոլորին), ամեն կողմից հավանության ձայներ լսվեցին.

— Ա՛յ, այդպես... այ, դա լավ է...

Այդ միևնույն ժողովում կոլտնտեսականներից մեկը հայտարարեց.

— Մենք առաջուց պաղափար չունեյինք մեղվաբուծության մասին, թերագնահատում եյինք այդ ճյուղը, իսկ հիմա մեղվաբուծությունն ինքն իրեն ցույց տվեց—ահա թե ինչ արդյունքներ է տալիս մեզ, մենք պետք է այդ գործը մեր աչքի լույսի պես պահենք։

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԵՐ ՄԵՂՎԱՆՈՑՆԵՐՈՒՄ

Յետ արդեն վերևում ասել եմ, վոր ներկայումս մեր մեղվաբուծական ֆերմայում կազմված է ընդամենը 5 մեղվանոց ապա և մայրաբուծական տնտեսություն՝ յերկու ցեխով—բեղմնավորման և վորդուձվի նախապատրաստման։ Հենց այժմ դա արդեն մի մեծ և բարդ տնտեսություն է։ Առաջիկա 2—3 տարվա ընթացքում դա էլ ավելի կլայնանա։ Այդ իսկ պատճառներով վերջին յերկու տարվա ընթացքում աշխատանքի ճիշտ կազմակերպումը ֆերմայում սուր պահանջ եր դառնում։ Չէ՞ վոր ուժեղ մեղրաբերքի, ձագավության և ուրիշ աշխատանքների ժամանակ ամենափոքրիկ դուշացումն անգամ կարող է շատ տխուր հետևանքներ ունենալ տնտեսության համար։ Ուրեմն պարզ է, թե ինչքան կարևոր է բրիգադներում աշխատանքը դնել այնպես, վորպեսզի գործն ընթանա պետք յեղածին չափ արագ, կարգավորված և պարզ։

Մենք արդեն խոշոր հաջողություններ ունենք, աշխատանքի ճիշտ կազմակերպման գործում, առանձնապես Համկ(բ)կ ԿԿ-ի 1934 թ. հուլիսի պլենումի վորոշումներից հետո։ Չնայած դրան, դարձյալ չենք կարող ասել, վոր ամեն ինչ մեզ մոտ կարգավորված է, և մենք այլևս չունենք վոչ մի թերություն։ Մենք դեռ հեռու յենք դրանից, բայց մենք հույս ունենք կուսակցության ոգնությամբ վճռական հաջողությունների հասնել այս գործում։

Ընդամենը մեզ մոտ կազմակերպված է, համաձայն մեղվանոցների թվի, 5 մշտական բրիգադ [1]։ Յուրաքանչյուր բրիգադն

[1]. Մայրաբուծական տնտեսության մասին՝ նրան կից ցեխերով՝ տես, «Մայրաբուծական ցեխում» գլուխը։

ամրացված է մի առանձին մեղվանոցի և համաձայն դրան ստանում է տարվա արտադրական պլանը, ապա և սեզոնային պլանի կարգագիրը (մեղրի և մոմի քանակը, ձագեր վերցնելը և այլն)։ Ինչպես տարեկան առաջադրության մեջ, նույնպես և սեզոնային պլաններում մեղվաբուծական ֆերմայի վարիչը տալիս է աշխատանքների քանակական և վորակական ցուցանիշները, բրիգադի կազմը, նրա աշխատանքի տեղը և տեսակը, կատարման ժամկետները, բրիգադին հասանելիք աշխորերի քանակը՝ այս կամ այն բնույթը կրող աշխատանքների համար։

Յուրաքանչյուր բրիգադի կազմի մեջ մտնում է 4 կոլտնտեսական՝ բրիգադիր, յերկու մեղվապահ և պահակ։ Այս կազմով բրիգադը պարտավոր է տանել մեղվանոցային բոլոր աշխատանքները, սկսած՝ գարնանը ձմեռոցից դուրս դնելուց մինչև ձմեռոց դնելը։ Մեղուների ձմեռոցում յեղած ժամանակ յերկու մեղվապահներն ազատվում են մեղվանոցային աշխատանքներից, կամ կանչվում են շրջանակավոր փեթակներ շինելու և նորոգումները կատարելու։ Ձմեռը մեղվանոցում մնում է միայն բրիգադիրը, վորի պարտավորությունն է մեղուների ձմեռային պահպանությունը և նրանց խնամքը։

Առհասարակ բրիգադիրը հանդիսանում է մեղվանոցի խակական պատասխանատու, տերը, նա առանձնապես պատասխանատու յե այդ մեղվանոցի վիճակի համար ամբողջ տարվա համար։ Բացի անմիջական մասնակցությունից մեղվանոցային բոլոր ընթացիկ աշխատանքներին, բրիգադիրը սեզոնային պլանի հիման վրա կազմում է տասնորյակային կարգագրեր, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև որական, մեղվապահների մեջ կատարում է աշխատանքի բաժանումը, ճշտում է տարված աշխատանքների վորակը, բացի այդ, տանում է բրիգադի մեջ մտնող կոլտնտեսականների աշխատանքի ամբողջ հաշվառումը։

Յուրաքանչյուր բրիգադ խնամում է ընդամենը 180—200 մեղվի ընտանիք և ստանում է աշխատանքների համար կարևոր ինվենտարը—գլխացանցեր, ծխարարներ, քերիչներ և այլն։ Մեղրահանները, զանազան մթերքները, շինանյութերը մնում են ֆերմայի վարիչի կարգադրության տակ, վորը բաց և թողնում

դրանք բրիգադներին առանձին պահանջագրերով և որդերներով։

Մեղրաքամի ժամանակ ֆերմայի վարիչը յերիտասարդ սո-վորողներից կազմակերպում է ժամանակավոր բրիգադ՝ 21 հո-գուց բաղկացած։ Այդ բրիգադը ֆերմայի յերեք մեղրահաններով և ուրիշ մանր պարագաներով որվա ընթացքում, առանց հա-պաղումների, մեղվանոցից-մեղվանոց է անցնում և բրիգադի աշխատանքների հետ միասին քամում է մեղրը. նկատի ունե-նալով գործի շտապողականությունը՝ բրիգադն աշխատում է կոնվեյերային ձևով (տես ներքևում սխեման)։

Մեղրաքամի հսկողությունը և առանձին արդյունավետ ըն-տանիքների հայտաբերումը ֆերմայի վարիչի պարտականու-թյունների մեջ է մտնում։

Սխեմա

21 հոգուց բաղկացած բրիգադի աշխատանքները մեղրաքամի ժամանակ



I—Մեղվանոց (4 մարդ). II—շրջանակների տալը կշեռքի վրա (2 մարդ և մեկ կշռող). III—սերկներ վերցնելու սեղան (3 մարդ) IV—մեղրահաններ (3 մարդ). V—սեղան՝ շրջանակները մաքրելու և բոուչեչերը կտրելու համար՝ նախքան մեղվանոց տանելը (2 մարդ). VI—շրջանակները կշեռքի վրա վերա-դարձնելը (2 մարդ). VII—մեղրի ուղարկումը դեպի պլատֆորմը (2 մարդ)։

Բացի դրանից, 2 մարդ մեղրահանների յերկու կողմից, վորոնցից մեկը գնում է շրջանակները մեղրահանի մեջ, իսկ մյուսը տալիս է մաքրման սե-ղանին։

Հսկայական նշանակություն ունի մեղվապահների աշխա-տանքի ճիշտ գնահատման և վարձատրման խնդիրը։

Սկզբներում այդ խնդիրների լուծման գործում մենք չկա-րողացանք խուսափել բավականին լուրջ սխալներից։ Սկզբում

մեղ մոտ գործարքային աշխատանք չկար—բոլոր աշխատակից-ներն ստանում էին որավարձով։ Բրիգադիրը—1,50 աշխոր, մեղ-վապահը—1,25, աշակերտները և պահակը—0,75։ Հետագայում, յերբ մենք անցանք արդեն մշտական արտադրական բրիգադների կազմակերպման և նրանց ամրացրինք առանձին մեղվանոցների, վորոնք բաղկացած էին վորոշված քանակությամբ մեղվի ըն-տանիքներից, սկսեցինք աշխորերը հաշվել ամբողջ բրիգադի վրա, նայած թե ինչ չափով են կատարել տրված արտադրական առաջադրությունը, հաշվի առնելով հանձնված մթերքի—մեղրի, մոմի, ածի քանակը և վորակը։ Բայց բրիգադի ներսում բոլոր մեղվապահները, անկախ այն բանից, թե վորն ինչ չափի աշ-խատանք է դրել, ստանում էին հավասար։ Յեվ դա միանգա-մայն հասկանալի յե, քանի վոր փեթակները չէին բաժանված մեղվապահների մեջ և ամեն մի բրիգադի հանձնված մեղվանո-ցում աշխատանքը տարվում եր կոլեկտիվ կերպով, ումը վոր փեթակը կպատահի։

Հիմա մենք այդ կարգը հիմնովին փոխեցինք։ Բրիգադի յուրաքանչյուր մեղվապահին մենք հատկացրել ենք վորոշ քա-նակությամբ մեղվի ընտանիքներ—ամբողջ սեզոնի ընթացքում 90—100 ընտանիք։ Նա մենակ ամբողջապես սպասարկում է այդ ընտանիքներին և ստանում է աշխորեր, նայած թե ինչքան և ինչ վորակի արտադրանք և նոր ընտանիքներ է հանձնում իր ձեռքի տակ յեղած մեղվի ընտանիքներից։ Այդպիսով ներկայումս մեղ մոտ աշխատանքը կազմակերպվում է անհատական գոր-ծարքի հիմունքներով, և մեղվապահների աշխորերը հաշվվում են համաձայն տարած խնամքի և պլանների կատարման—նայած թե վորքան նոր ընտանիքներ, մեղր և մոմ է հանձնված։ Միևնույն ձևով գնահատվում է նաև բրիգադիրի աշխատանքը, վորովհետև, նրա խնամատարության տակ նույնպես դրվում է մի մեղվանոց, (իհարկե՝ նկատի ունենալով նրա գլխավոր աշխատանքը բրի-գադում, նրան ավելի քիչ քանակությամբ փեթակ եր տրված)։ Ֆերմայի վարիչին առանձին մեղվանոց չեր հանձնվում խնամե-լու և նրա աշխորերը հաշվվում էին համաձայն 5-րդ կարգի նոր-նամերի (1,50 աշխոր)։ Պահակի աշխատանքի գնահատականն

ամեն մի առանձին դեպքում սահմանում եր կոլտնտեսությունն, այնպես, ինչպես և ժամանակավոր բրիգադի անդամ բոլոր կոլտնտեսականների տարած մեղրաքամի աշխատանքների գնահատականը։

Մեղվապահների աշխորների բաշխումը կատարվում է հետևյալ գործարքային աշխատանքի գնահատականներով։

ա) 1 կգ մեղրի համար . . . . . 0,08 աշխոր
բ) 1 » մոմի » . . . . . 1 »
գ) 1 ձագի համար . . . . . 1,20 »
դ) յուրաքանչյուր բեղմնավորված և ոգտագործված մոր համար 0,50 »
ե) յուրաքանչյուր կառուցված չեչի համար 0,10 »
զ) մեկ նուկլեուսի համար . . . . . 1 »
է) մեղվանոց մտած յուրաքանչյուր չմեխված փեթակի մեխելու համար և այլն 0,25 »

Այս հաշվից յելնելով՝ կազմվում են յուրաքանչյուր բրիգադի համար 7 ամսվա պլան—կարգագրերը (մարտ-նոյեմբեր)։ Ահա, որինակ, № 1 բրիգադի (բրիգադիր Սմմեր) 1934 թվի կարգագիրը։ Բրիգադը խնամում է 200 ընտանիք։ Աշխատում են 3 մեղվապահ (բրիգադիրը և յերկու մեղվապահ)։

Ամառվա ընթացքում բոլոր յերեքը պարտավոր են հանձնել արտադրանքն ու ստանալ դրա համար իրենց հասանելիքն աշխորերով (տես ներքևում 36—37 եջերի աղյուսակները)։

Ամիսներ	Պրոդուկցիայի հանձնումը					
	Մեղր	Մոմ	Ձագեր	Նուկլեուսներ	Պատրաստված չեչեր	Մայր ստանալը և փոխարինելը
	կգ-ներով					
Մայիս . .	440	24	12	—	—	12
Հունիս . .	1320	14	100	—	1000	100
Հուլիս . .	1760	20	—	—	650	—
Ոգոստոս .	656	14	80	30	—	100
Ընդամենը	4176	72	192	30	1650	212

Յեթե բրիգադին տրված արտադրանքի հանձնման և ընտանիքների ամի պլանները գերակատարվում են, բրիգադի աշխատավորներն ստանում են բնավճարով լրացուցիչ հասանելիքը, կամ հաշվվում են նրանց լրացուցիչ աշխորեր և տրվում է պրեմիալ վարձատրություն՝ հատուցման գերակատարման չափի։

Յեթե առանց հարգելի պատճառների պլանները չեն կատարվել և աշխատանքը վատորակ է, ուրեմն և հաշվարկված աշխորերից համապատասխան չափով պակասեցվում է։ Հաշվի յե առնվում մեղուների ձմեռոցում տեղի ունեցած կորուստը։ Ինչպես աշխորերի քանակի սահմանումը, նույնպես և պակասեցումը կատարում է կոլտնտեսության վարչությունը։

Մեր մեղվապահական ֆերմայի աշխատակիցները շատ լավ հասկանում են, որ անհատական գործարքի ճիշտ և անտարակելի գործադրումը հնարավոր է միայն այն պայմանով, յեթե ճիշտ է դրված աշխատանքի և արտադրանքի հաշվառումը թե քանակի և թե վորակի տեսակետից։ Դրա համար ել մենք գործադրել ենք բոլոր միջոցները, վորպեսզի ֆերմայում կատարվող հաշվառումն իսկապես լինի մեղվապահի աշխատանքների հայելին։

Հաշվառումով զբաղվում է իմ ոգնական ընկ. Ելիստովը՝ շատ պարտաճանաչ և գործին տիրապետող մի աշխատավոր,

Վարձատրումն աշխորերով

Ամիսները	Մեղրի համար	Մոմի համար	Ձագի համար	Նուկլեուսների համար	Չեչերի համար	Բուժած մայրերի համար	Հյուսնի աշխատանքների համար	Ընդամենը աշխորերով
Մայիս . .	35,20	24	15,6	—	—	6	—	—
Հունիս . .	105,60	14	130	—	100	50	—	—
Հուլիս . .	140,80	20	—	—	65	—	—	—
Ոգոստոս .	52,48	14	104	30	—	50	150	—
Ընդամենը	334	72	249,6	30	165	106	105	

վերջացրե և շրջանային դասընթացները։ Նա ուշադիր հետևում է բրիգադներում տարվող աշխատանքներին, ինձ հետ միասին ստուգում է աշխատանքի վորակը և բրիգադների կողմից հանձնած արտադրանքին, մեղրաքամի ժամանակ կամ վորևե ուրիշ մթերք հանձնելիս գրանցում է մեղվապահների գրքույկների մեջ նրանց արտադրածը։ Բացի այդ, մեր ֆերման ունի հատուկ տախտակ, վորի վրա հաշվառումը տանող Ելիստովը յուրաքանչյուր հնգորյակում մի անգամ նշանակում է, թե յուրաքանչյուր մեղվապահ անցած հնգորյակին ինչքան արտադրանք է տվել և ինչքան պիտի ստանա դրա համար։



Նկ. 3. Պատրաստվում են դարնան աշխատանքներին. բրիգադիր Ամմերը նորոգում է փեթակները

Կարելի յե հաստատակորեն ասել, վոր ընկ Ելիստովի ուշադիր հաշվառումից մի կաթիլ մեղր անգամ չի վրիպում։

Դրա հետ միասին նա կազմակերպում է նաև մրցումը բրիգադների միջև և բրիգադների ներսում՝ մեղվապահների միջև։

Սոցմրցման խնդրում մեծ դեր է խաղում մեր պատի թերթը, վորը համարից համար լուսաբանում է դրությունը բրիգադներում, տասնորյա առաջադրությունների կատարման աշխատանքները, արտադրանքի հանձնման ամսական պլանները և այլն, խրախուսում է առաջավորներին, դրդում է հավասարվել յետ մնացողներին նրանց հետ։ Գործարքի անցնելը շատ բարեհաջող կերպով անդրադարձավ մեղվանոցների աշխատանքների վրա։ Վերցնենք թեկուզ մի այնպիսի գործ, ինչպիսին է մոմի հանձնումը։ Մինչև գործարքի անցնելը մեզ մոտ ամբողջ մոմը հավաքվում եր ընդհանուր կաթսայի մեջ և բաշխվում եր ըստ մեղվանոցների հավասարապես, առանց հաշվի առնելու, թե յուրաքանչյուր բրիգադն ինչքան մոմ է հանձնել։ Իսկ հիմա արդեն բրիգադիրները միմյանց վրա չեն դնում իրենց հույսը։ Հիմա ինչքան մոմ ես հանձնել, ուղիղ այնքան էլ մոմաթերթ կստանաս։ Աչքաթող ես արել, ծուլացել ես հավաքել մոմը,—կմնաս առանց արհեստական մոմաթերթի։ ուրեմն և քիչ արտադրանք կտաս, քիչ էլ աշխատեր կունենաս։ Բրիգադների համերաշխ գործակցության ու աշխատանքի խնդրում հսկայական դեր և խաղում պլանները գերակատարելու համար ընավճարով պարգևատրելը (մեղրով, մեղվի ընտանիքներով)։

Յեվ ահա, չնայած վոր 1934 թիվը չորային եր և մեղվաբուծության համար խիստ անբարենպաստ և չնայած մեր ֆերման չկարողացավ գերակատարել մեղրի հանձնման պլանները, այնուամենայնիվ տվեց ավելի շատ, քան հարևան կոլտնտեսությունների մեղվանոցները՝ միջին հաշվով 19 կգ յուրաքանչյուր ձմեռած ընտանիքից և 130% ընտանիքների հավելում (շրջակա մեղվապահների մեծամասնությունը վոչ մի աճ չեր տվել)։

Առհասարակ 1934 թիվը մեզ մեծ փորձառություն տվեց և ահա սրանից հետո ուզում եմ մանրամասն պատմել ընթերցողներին, թե ինչպես եյինք մենք պայքարում այդ տարին մեղվաբուծության համար ստեղծված դժվարին պայմանների դեմ և ինչպիսի արդյունքների հասանք։

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆՔ ԳԼԽԱՎՈՐ ՄԵՂՐԱԲԵՐՔԻՆ

Մարտ ամիսն է. արեգակն ավելի պայծառ է լուսավորում։ Որերն ավելի յերկար են։ Կոլտնտեսության դաշտերի, այգիների, մարգագետինների վրա արագ իջնում է յերկար սպասած գարունը։

Ֆերմայի վարիչը և բրիգադիրները մինչև կոկորդը խրված են աշխատանքների մեջ։ Ուրիշ կերպ չեր ել կարող լինել. մի քանի որից հետո մեղուները ձմեռոցից պետք է դուրս դրվեն, դուրս դնելուց անմիջապես հետո պետք է հայտարերել տնտեսության մեջ յեղած բոլոր թերի կողմերը և վերացնել այդպիսիները։ Լարված և պատասխանատու ժամանակ է։ Բրիգադների աշխատավորներն ամեն որ խորհրդակցում են, կարծիքների փոխանակություններ են ունենում իրենց դիտողությունների շուրջ, նշում են այս կամ այն միջոցառումները, կազմում են պլաններ...

Բոլոր մեղվապահները հաջողությամբ վերջացրին իրենց ձմեռային տեխնիկական ուսումնքը և անհամբերությամբ սպասում են ձեռք բերած գիտելիքները կիրառելու կյանքի մեջ։

Առանձնապես հուզվում են յերիտասարդ մեղվապահները՝ Ոլգա Սորելկովան և Նյուրա Բելյակը։

— Մեղուները սկսել են անհանգստանալ ձմեռոցում, հավանաբեն խոնավություն են զգում։ Ցեկեք շուտով դուրս դնենք։

Մեղուները դուրս դնելուց մի որ առաջ արտադրական ժողով ունեցանք։ Վորոշեցինք հենց վաղվանից դուրս դնել մեղուները։ Գործն շտապողական է։ Վորոշվեց «դուրս դնել մեղուներն առավոտից մինչև իրիկուն... Վարվել մեղուների հետ հոգատարությամբ, չանհանգստացնել նրանց...

Մեկը մյուսի յետեվից վեր են կենում մեղվապահներն ու բրիգադիրները և իրար մրցման հրավիրում մեղվի խնամքը լավագույն կերպով կազմակերպելու համար։ Առաջինը դուրս է գալիս Գակլերը։

— Պարտավորվում եմ 5 որվա ընթացքում մեղվանոցս դնել նորմալ վիճակի մեջ։ Մրցման եմ հրավիրում բրիգադիր Ռուդենկոյին՝ մեղվի խնամքը լավ տանելու և լավ, բարձրորակ արտադրանք հանձնելու գործում։

Ռուդենկոն պարտքի տակ չմնաց։

— Մրցման հրավերն ընդունում եմ։ Պարտավորվում եմ մեղվանոցս 4 որվա ընթացքում նորմալ վիճակի հասցնել։ Մրցման եմ հրավիրում բրիգադիր Վոլդեմար Սեպահամմերին։

Հենց այդտեղ ել կազմվում և ստորագրվում են մրցման պայմանագրեր բրիգադիրների և առանձին մեղվապահների միջև։ Միաժամանակ վորոշվեց մրցման հրավիրել «Գլոներ» կոլտնտեսության մեղվաբուծական ֆերման։ Ընտրեցին 3 հոգուց բաղկացած մի հանձնախումբ, վորը պիտի մշակեր պայմանագրի ձևն այդ ֆերմայի հետ, պիտի հետևեր և ստուգեր մեղվապահների միջև կնքած պայմանագրերի կատարումը։ Ստուգումները պետք է կատարվեն 3 անգամ։ Մեկ՝ մեղուների դուրս դնելը վերջացնելուց հետո, մեկ՝ գլխավոր մեղրաբերքն սկսվելու մոտերքը և մեկ ել՝ աշնանը—ամառային աշխատանքների հետևանքները պարզելու նպատակով։

Այս բոլորից հետո ֆերմայի վարիչը զեկուցեց խորհրդակցությանը, վոր յենթակուլակ Կսենդայի ազդեցության տակ, հետամնաց կոլտնտեսականների մեջ վերջին ժամանակներս պահանջներ են լսվում, թե բոլոր աշխատունակ մեղվապահներին հանձներ են լսվում, թե բոլոր աշխատունակ մեղվապահներին հարկավոր է մեղվանոցներից վերցնել ուղարկել դաշտային աշխատանքների, իսկ մեղվանոցներին տալ ծերերին և հաշմանդամներին, այն ել վոչ ավելի քան 2—3 հոգի։ Կուլակագրությունը ոգնությամբ հաջողվեց հաղթահարել այդ կուլակային տրամադրությունները։

— Այս բանում, ընկերներ, մենք ել մեղավորություն ունենք,—ասում ել ֆերմայի վարիչը,—վերջին ժամանակներս



Նկ. 4. Ստուգիչներ կոլտնտեսության № 1-ին մեղվանոցում

կոլտնտեսականների մեջ մենք թուլացրել ենք բացատրական աշխատանքները և մեր դասակարգային զգոնությունը։ Ուրիշ ինչ կերպ կարելի է բացատրել։ Եթե մեզ վրա նայում են իբրև անգործների, վորոնք չեն ուզում աշխատել դաշտում, ապա ուրեմն պարզ է, վոր մենք ինքներս ենք պատասխանատու այդպիսի կարծիքների ստեղծման համար։ Մենք կարվել ենք մնացած կոլտնտեսական մասսայից, մենք չենք կարողացել ցույց տալ, վոր մեր աշխատանքն արժեքավոր և կարևոր է կոլտնտեսության համար, վոր այդ աշխատանքը, ինչպես և հացահատիկային ճյուղում, պահանջում է ֆիզիկապես դիմացկուն, գիտակից և տեխնիկապես պատրաստված մարդիկ։ Մեզ հարկավոր է հիմա ավելի մեծ էներգիայով պայքարել մեր ֆերմայի արդյունքների բարձրացման համար, վորպեսզի բոլորը տեսնեն, թե ինչքան կարևոր է գյուղատնտեսության այդ ճյուղը և ինչքան անհրաժեշտ են այդ ճյուղի համար ուժեղ, յեռանդուն մարդիկ և վոչ թե հաշմանդամներ։ Այդ միայն առաջներում եր, վոր մենատնտեսների տնտեսությունը խնամվում եր մի կերպ, ինչքան հնարավոր եր։ Սոշոր՝ սոցիալիստական մեղվաբուծությունը պետք սպասարկվի տեխնիկապես պատրաստված, առաջավոր աշխատավոր-հարվածայիններով։ Իհարկե, յերբ մեղվանոցներում պարապամեն ինչ կարգին է և մենք ազատ ժամանակ ունենք, պարտավոր ենք և կոգնենք դաշտային բրիգադներին։ Բայց, որինակ՝ վոր մենք կարող ենք արդյոք մեր մարդկանց դաշտ ուղարկել—վոչ։ Վաղը մեր մեղվանոցներում հսկայական աշխատանք կա անելու։ Վաղը մենք դուրս ենք դնում մեղուները և պետք է պահանջված բոլոր կանոններով նախապատրաստենք մեղվանոցները՝ մեղրի ամենաբարձր բերքն ստանալու համար։

Հետևյալ որն առավոտվանից մեղվանոցներում սկսվեց յեռանդուն աշխատանքը։ Բրիգադները համերաշխ կերպով դուրս եկին դնում իրենց փեթակները դրա համար նախորոք պատրաստված տեղերում։ Ցեվ ահա մաքրված, հավասար հարթության վրա ձգվում են ուղիղ փողոցներն իրենց տարբեր գույների տներով։ Բրիգադները խիստ հետևում են, վորպեսզի արկանոցները ժա-

մանակին և կանոնավոր բացվեն։ Առաջին հերթին բացվում են թույլ ընտանիքների և անհաջող ձմեռած ընտանիքների արկանոցները։ Հարկավոր է նրանց հնարավորություն տալ ավելի հանգիստ պայմաններում ծանոթանալ շրջապատին։ Մենք յուրաքանչյուր բոլոր փեթակների արկանոցները միանգամից չենք բացանում, վորովհետև առհասարակ ուժեղ ընտանիքների մեղուները հաթակվում են թույլերի վրա։

Ցերը թույլ մեղուները կարողանում են հանգիստ թռիչք կատարել (մաքրվել), ի վիճակի յեն լինում իրենք իրենց պաշտպանելու, դրա համար էլ մենք հայտարարում ենք թույլ ընտանիքները և վատ ձմեռած ընտանիքները և վրանները կավճով նշան ենք անում։

Բայց ահա և բացված են բոլոր փեթակների արկանոցները, ոգն ամբողջովին լցվել է մեղուների աղմուկով... Առաջին մեղվանոցում լսվում են ուրախ ծիծաղ և հանաքներ։ պարզվում է, վոր գրասենյակից յեկել է մեղվանոց մի աշակերտուհի սպիտակ շորերով, մեղուները ծածկել են նրան մութ բծերով—սպիտակ շորերը դարձել են խայտաբղետ։

Ա՛յ, ա՛յ, ա՛յ,—սարսափած բղավում է աշակերտուհին, իսկ ինքը վախենում է շարժվի։

Մեղվապահները կատակում են.

— Ահա, բռնվեցիր։ Այսոր մեղ մոտ սպիտակ շորով չգաս. մեղուներն առաջին թռիչքին «չեն սիրում» սպիտակ շորեր։

Ցուրաքանչյուր փեթակի բերանը բացելիս մեղվապահն ուշադիր հետևում է նրա թռիչքին և որագրում նշում նրա ուժը։

— Այս ի՞նչ բան է,—անհանգստանում է մեղվապահ Նատաշան։ Ի՞նչ է պատահել № 119 ընտանիքի հետ։ Նրա անցյալ տարվա առաջին թռիչքը տետրում նշանակվել է 3 թվանշանով, իսկ այս տարվանը հաղիվ «միավորով» նշվի։ Չե՞ վոր այս ընտանիքն ամենաուժեղն եր մեր մեղվանոցում։ Տվել է 45 կգ մեղր, իսկ ձմեռվա պաշարը յեղել է 16 կգ։

Արագ կերպով մոտենում է փեթակին բրիգադիր Պակլերը։

— Այո՛, ճիշտ է։ Ցերը կվերջացնենք փեթակների դուրս

գնելը, ուշադրությամբ կնայենք փեթակը և կպարզենք վատ թռիչքի պատճառները։

Բայց միևնույն որը չհաջողվեց այդ անել։ Ցերեկոյան կողմը ջերմաստիճանն իջավ 8°-ից ցած ըստ Ց։

Արևը մայր մտնելու ժամանակ մեղվանոցում արդեն դասավորված եյին շախմատային կարգով 500 մեղու։ Ամենուրեք մաքրություն է, մեղուները դասավորված են կանոնավոր, փեթակների միջի ազատ տարածությունները լավ հարթած, պրնդացրած են։

Ծանր աշխատանքներից հետո մեղվապահները հավաքվել են միատեղ և խոսում են իրար հետ։

— Ծանր աշխատանք է, բայց դրա փոխարեն մեղրը քաղցրը է...

— Ո՞վ կկարծեր, վոր մեր մեղվանոցն այդպես կաճեր, կմեծանար,—դանդաղ, խոսքերը ծոր տալով ասում է բրիգադիր Սամմերը։ — Հիշում եմ, յերբ յես նոր յեկա կոմունա, ահա այնտեղ,—ձեռքով ցույց է տալիս ձմեռոցի կողմը,—մի փոքրիկ բուռ փեթակներ եյին դրված։ Իսկ հիմա տես, թե ինչպիսի հսկա թափ ընդունեց գործը։ Խիստ արագ ենք շարժվում։

Շուտով մեղվապահները ցրվեցին տները։ Մեղվանոցում տիրեց խաղաղություն։ Լսվում եյին միայն պահակի քայլերն ու հանդարտ հաղալը

Մյուս որը վաղ առավոտյան հաղիվ լույսը բացված № 3 բրիգադն արդեն մեղվանոցում եր։ Ցերկինքը պարզ ու անամպ եր։

— Այսոր լավ յեղանակ է լինելու, կարելի յե ընտանիքները բացել,—ուրախանում եյին մեղվապահները։

Բրիգադիր Պակլերն առաջուց պատրաստել եր ամեն ինչ, ինչ վոր պետք եր հատակները մաքրելու համար։ Ցերը բոլորը հավաքվեցին, Պակլերը կարգադրեց։

— Դու, Նատաշա, նշիր սահակած մեղվի քանակն ընտանիքում, իսկ յես Տանյայի հետ կզբաղվեմ հատակները մաքրելով։ Մաքրելուց հետո կքննենք ընտանիքները։ Այսոր անպայման

պիտի պարզենք այն փեթակների դրությունը, որոնց թռիչքը յերեկ լավ չեր։

Յերեք ժամվա ընթացքում վերջացրինք փեթակների հաբեվանցի մաքրումը և դեռ բավականին ժամանակ եր մնացել ընտանիքներն ստուգելու։

— Նախ դիտենք ես մեկը,—բրիգադիրը ցույց տվեց № 119 փեթակը,—նա յերեկ վատ թռիչք կատարեց։ Հետազոտման ժամանակ պարզվեց, որ ձմեռոցում կորցրել է մորը, մեղուն շատ է, մեղրը՝ 10—11 կգ։

— Ա՛խ, ինչքան ցավալի յե,—ափսոսում եր Պակլերը։—Չե՞ որ սա մեր ամենաուժեղ ընտանիքն եր, մայրն էլ այնքան ծեր չեր, անցյալ տարվա մայրն եր։

Շարունակելով ստուգումները՝ բրիգադիրը պարզեց, որ մոր սատկելու հանցանքն ընկնում է մեղվապահի վրա. աշնան վերջին ստուգումների ժամանակ նա անզգուշաբար սեղմել է նրան, յերկու շրջանակների արանքում։ Մոր դիակն աննորմալ դրության մեջ եր. մոր կուրծքը սեղմված եր դեպի ներս, առջևի վոտքերը՝ ջարդված։ Համենայն դեպս վիրավորվելուց հետո էլ շարունակել է ապրել։ Դա յերևվում եր այն բանից, որ նրա դիակն ընկած եր մյուս՝ սատկած մեղուների դիակների վրա։

Մեղվապահներն անկեղծ ափսոսանքով նային նայում սատկած մորը, որն արդեն աչքի յեր ընկել իր լավ հատկություններով։ Չե՞ որ այդ եր պատճառը, որ ընտանիքը չուներ վորդ ու ձու և կորցրել եր իր առաջվա աշխատանքի յեռանդը, և, վերջապես, այդպիսի դեպքերում մեղուները հիվանդանում են փոքահարինքով։

Բրիգադիրը մտածմունքի մեջ ընկավ ու կնճռոտեց ճակատը։

— Ձմեռոցում, յերբ յես թխկացրի նրա փեթակին, շատ անմորմալ ձայն հանեց, բայց յես առանձին ուշադրություն չդարձրի այդ բանի վրա։ Մտածում եմ,—ընտանիքն ուժեղ է, ամեն ինչով ապահովված, ինչ կարող է պատահել նրան։ Իսկապես, ինչքան ցավալի յե...

Այնուհետև բաց արին № 66-ը, որը ձմեռոց դնելիս ավելի թույլ եր, քան մյուս ընտանիքները։ Այստեղ արդեն բոլորովին ուրիշ պատկեր է բացվում։ Վորդ ու ձուն յերեք շրջանակի վրա յե, իսկ մեղուները բռնում են ամբողջ 7 շրջանակը։

— Ահա, նայեցեք, ինչ խոշոր նշանակություն ունեն նախաղաարաստական աշխատանքները ձմեռելու համար. ունենք ուժեղ ընտանիք, որը ձմեռոց է դնացել հաշվանդամ դարձած մորով և ահա ինչ է ստացվել այդ ընտանիքից։ Իսկ ահա և նրա մոտ մի ուրիշ ընտանիք—ձմեռոց դնելիս թույլ է յեղել, բայց նա ունեցել է լավ մայր։ Քանի՞ ընտանիք է նշված քեզ մոտ, որոնք բոլորովին թռիչք չեն ունեցել,—հարցրեց բրիգադիրը նատաշայից։ Նատաշան բացեց որագիրը և արագ հաշվեց։

— «Զերո» թվանշանի ընտանիքներ չկան, «միավորի»—2 ընտանիք, «յերկուսի»—8 ընտանիք, իսկ մնացած բոլորը «յերեք» թվանշան ունեն։

— Ահա թե ինչ. եգուց մինչև յերեկո մեր բոլոր ընտանիքները պիտի թռուցիկ ստուգման յենթարկվեն։ Հասկանալի յե։ Պարզենք, չունենք արդյոք անմայր ընտանիքներ, բավարարում է արդյոք յեղած մեղրը մեղուներին և այլն... Պահեստի մայրեր մենք չունենք։ Մենք այդպիսիները կմիացնենք թույլ ընտանիքներին, որոնք մայր ունեն։ Առհասարակ անհրաժեշտ է կրճատել բունը որտեղ որ պետք է, որպեսզի մեղուները կարողանան ամբողջովին պատել մնացած շրջանակները։

— Իսկ յերբ կլինի մեղ մոտ գլխավոր ստուգումը,—հարցրեց մեղվապահ Ռլյա Սորելկովան։—Դասընթացներում մեղ ասում եյին, որ գլխավոր ստուգումը պետք է սկսել թռուցիկ ստուգումից հետո։

— Գիտես ինչ. մեզ մոտ վորևե առանձին գլխավոր ստուգում ընդհանրապես չի նախատեսված։ Մենք առաջին հերթին սկսում ենք այն ընտանիքներից, որոնք անմայր են և մեղր չունեն, փորհարինք են ունեցել, ծաղկափոշին փչացած է[1]։

[1] Կարելի է նաև հեռացնել թխսա բորբոսնած չեչերը, որոնց մասին առհասարակ չի հիշատակում Միխկելսոնը։ Դժվար է պատկերացնել, որ նրանք գործնականում առիթ չեն ունեցել հանդիպելու բորբոսնած չեչերի, որ անգործնականում առիթ չեն ունեցել հանդիպելու բորբոսնած չեչերի, որ ան-

Վերացնում ենք այդ պակասավոր կողմերն, ապա անցնում ավելի ուժեղ ընտանիքներին։ Առհասարակ բոլոր պակասավոր կողմերը մեղվանոցում աշխատում ենք վերացնել միանգամից։ Կերակրման խնդիրը նույնպես։ Մենք մեր ընտանիքներին սկսում ենք կերակրել, յերբ փեթակում մեղրը 3—4 կգ-ից պակաս է, և վոչ թե վերցնում ենք վորոշ նշանակված ժամկետներ։

Արդեն այս որվանից մենք ոգնություն ենք հասնում մեղուներին, վորպեսզի նրանց զարգացումը դնենք նորմալ պայմանների մեջ։ Հիշում ես, վոր մեղվապահներից պահանջվում է, վորպեսզի ապահովեն մեղուների կանոնավոր և նորմալ զարգացումը։ Առաջին՝ հարկավոր է լավ մայր, յերկրորդ՝ յուրաքանչյուր ընտանիք պիտի ունենա վոչ պակաս քան 3—4 կգ մեղր և լավորակ չեչեր՝ վորդ ու ձվի համար, յերրորդ՝ մենք պարտավոր ենք ստեղծել փեթակում նորմալ տաքացում, կանոնավոր ոդափոխություն և, վերջապես, մեղվանոցում միշտ ել պիտի լինի մաքուր ջուր [1]։ Ահա թե բանն ինչ է։ Յեթե մենք կարողանանք այս բոլորն իրականացնել, մեղուն լավ կարդարացնի մեր հույսերը։ Յեվ, իսկապես, բրիգադիր Պակլերն այնպես յեռանդուն տարավ գործը, վոր № 3 մեղվանոցը յերեք որվա ընթացքում արդեն որինակելի վիճակի մեջ եր։

Չնայած Պակլերը հին մեղվապահ եր, բայց նորեկ բրիգադիր Լեսմենտը վոչ մի քայլ հետ չմնաց նրանից և նույնիսկ վորոշ բաներում առաջ անցավ։ Կոլտնտեսության վարչությունը վորոշեց պարգևատրել նրան և հանձնել կարմիր դրոշը, վորպես գարնանային աշխատանքներում մեղվապահների մրցման մեջ հաղթանակը տանողի։

Կոլտնտեսության ակումբում մեղվապահները հանդիսավոր

հաջող ձմեռոցների համար անխուսափելի յերևույթ է, և մեղվի քնում մնալու դեպքում, ստատիկ անախորժություն է պատճառում մեղուներին և հաճախ խանգարում մոր կանոնավոր ձվարկությունը։ Դուրս դնելուց հետո անպատճառ անհրաժեշտ է գտնել և հեռացնել այդպիսի չեչերը, ու նրանց տեղը դնել լավ չեչեր (Ծ. Բ.)։

[1] Յերբ մեղվանոցի մոտերքը ջուր կա (առու, լճակ և այլն), ապա և կարիք չկա անպատճառ ջուր դնել մեղվանոցում (Ծ. Բ.)։

յերեկո ունեցան—ներկա եյին մեծ թվով կոլտնտեսականներ։ Նվագախմբի հնչյունների տակ, վոր նվագում եր «Ինտերնացիոնալ», ֆերմայի վարիչը հանձնեց փոխանցիկ կարմիր դրոշը և 25 ռուբ. փող՝ լավագույն հարվածային Իվան Մարտինի Լեսմենտին։ Դրանից հետո պարգևները հանձնվեցին նույնպես Պակլերին, Ռուդենկոյին և Ամմերին։ Մյուս որը մեղվանոցներում շրջագայելու ժամանակ ֆերմայի վարիչը հայտարարեց բազմաթիվ ատկած մեղուներ բրիգադիր Ռաուդեյի մեղվանոցում՝ № 5 փեթակի կողքին։

Նկ. 5 Շրջանակների մաքրելը փեթակներում.

— Այս ինչ բան է, Ռաուդե։ Չլինի գողություն է յեղել։

Բաց արինք փեթակը. բանից դուրս յեկավ, վոր ընտանիքը հիվանդ է։

— Ցեկեք մեղրը փոխենք ուրիշ մեղրով, իսկ հին մեղրը և մեղուներին հենց վաղն ուղարկենք Նովոչերկասկ հետազոտման, թե չե՝ կարող ե խոշոր անախորժություն առաջանալ, յեթե ժամանակին միջոցներ ձեռք չառնենք։ Հապա ել ինչ թերություններ կան ձեզ մոտ։ Ի՞նչպես ե մեղրի պաշարի և տաքացումների գործը։

— Զգիտեմ ինչպես կլինի հետագայում, իսկ հիմա կշռափեթակը ցույց ե տալիս որական 200 կգ նվազում։ Ճիշտ ե, պաշարն առայժմ բավարար ե՝ միջին հաշվով 3—4 կգ.։ Զե՞ վոր շուտով այգիները կծաղկեն, և այն ժամանակ անմիջապես դրությունը կլավանա։ Ինչ վերաբերում ե տաքացումներին, գե՛, ինքներդ տեսնում եք, ինձ մոտ գործը վատ չի, փեթակները յերկու կողմերից ապահովված են մատերով [1]։ Վերեվից նույնպես ծածկել ենք մատով և, բացի այդ, նաև լրագրերով։

— Ինչպե՞ս են զարգանում ընտանիքները։

— Կարծում եմ, վոր կդիմավորենք գլխավոր մեղրաբերքը գիգանտ ընտանիքներով։

Ֆերմայի վարիչն ստուգեց ևս մի քանի փեթակ, ապա անցավ Ոլյա Սարելկովայի մեղվանոցը։

Ոլյան կանգնել եր փեթակի առաջ և ձեռքերն ուժգին թափահարելով՝ աշխատում եր պաշտպանվել հարձակվող մեղուներից։

— Այս ի՞նչ բան ե։ Մի՞թե կարելի յե մեղուներին ձեռքով քշել։ Զե՞ վոր նրանք այդպիսով ավելի ուժեղ են հարձակվում մարդու վրա։ Դուք ինքներդ շատ լավ գիտեք այդ։

Ոլյան լավ մեղվապահ ե։ Նա մի թերություն ունի—շատ տաքարյուն ե, կոպիտ շարժումներ ե անում։ Զարմանալի չե, վոր մեղուները նրա վրա ավելի շատ են հարձակվում, քան մյուս մեղվապահների վրա։

— Դուք ինչ եյիք ուզում պարզել, յերբ բացում եյիք փեթակը,—հարցնում ե նրան վարիչը։

---

1) Մատ—ծղոտից գործած հատ խոիր, վոր գործ են ածում մեղվի բունը տաքացնելու համար—2 հատ կողքերից, մեկը՝ վերայից (Ծ. Ք.)։

— Ահա այս ընտանիքին վոչ մի կերպ չի հաջողվում մայր ընդունել տալ, արդեն մեկը փչացրել են անպիտանները,—բարկացած պատասխանեց Սարելկովան։

— Զե՞, այդպես չի կարելի անել, դա ճիշտ չի—խստորեն նկատում ե վարիչը։—Զե՞ վոր այդ ընտանիքը վաղուց վորբացել ե, նա չունի ջահել մեղուներ, և պարզ ե, վոր մեղուները մայր չեն ընդունի։ Ցեկեք ուրիշ փեթակից յերիտասարդ մեղուներ, այդ դեպքում ուրիշ բան կատացվի—յերիտասարդ մեղուները հեշտությամբ կընդունեն մորը, իսկ հները սովորաբար մայր չեն ընդունում։ Ինչպե՞ս ե, վոր այդ բանը ձեր ուշադրությունից վրիպել ե։ Զե՞ վոր դուք գիտեյիք և դասընթացներում ել ձեզ ասել են, վոր անմայր ընտանիքներում բոռածու յի առաջ գալիս, և այդպիսի ընտանիքը յերբեք մայր չի ընդունում, մինչև վոր նրան ջահել մեղուներ չես տալիս։ Իսկ ինչպե՞ս ե զարգանում № 101 ընտանիքը, ինչպե՞ս ե զգում նա իրեն։ Զե՞ վոր դա մեր ակորդիստն ե։ Դե աշխատեցեք, աշխատեցեք։ Մինչև այդինների ծաղկելը ձեր մեղրը ձեզ կբավականացնի։

Դրանից հետո ֆերմայի վարիչն անցավ մայրաբուծարանը և մանրամասնորեն ստուգեց այդ մեղվանոցը։ Բանից դուրս յեկավ, վոր այդտեղ ել ամեն ինչ կարգին ե։ Բոռերն արդեն դուրս են յեկել և շուտով կարելի կլինի սկսել մայրեր բուծելու գործը։

Մայրաբուծության գործը «Կոյտ» կոլտնտեսության մեղվաբուծական ֆերմայում ավելի բարդ ե, քան սովորական մեղվաբուծական տնտեսությունում և մեծ գիտելիքներ ու փորձ ե պահանջում աշխատավորներից։ Այդ պատճառով ել ֆերմայի վարիչը պահում ե այդ մեղվանոցը հատուկ հսկողության տակ և հաճախ այցելում ե այն։

— Առանձին ուշադրություն դարձրեք ընտանիքների վրա,—պատվիրեց վարիչը կոլտնտեսականներին։ Հետևեցեք, վորպեսզի սովորական ընտանիքները (վոչ ակորդիստները) բոռեր չբազմացվորական ընտանիքները։ Ահա, նայեցեք, նեն։ Մեղուներին պետք ե կերակրել ամեն որ։ Ահա, այդ ընտանիքը բնի անպետք ջրջանակներ շատ ունի։ Անմիջապես հեռացրեք դրանք։ Մայրաբուծական մեղվանոցում վոչ մի պես հեռացրեք դրանք։ Մայրաբուծական մեղվանոցում վոչ մի ընտանիք չպետք ե աննորմալ դրության մեջ լինի։ Զոմբինիմումը

պահպանեցեք ամենախիստ կերպով։ Ինչքան կարելի յե քիչ անհանգստացրեք մեղուներին, փեթակները բացեք միայն ծայրահեղ կարևորության դեպքում՝ յես կարծում եմ, վոր մայիսի սկզբներին մեր առաջին մայրերն արդեն դուրս կգան։ Ինանոր ընտանիքներից մեկն արդեն վերջացնում է մայրապատուկների կնքումը, թեև մայրապատուկների քանակը քիչ է—միայն 35 հատ։

Գարնանային մութ գիշեր է։ Կոմունան խոր քնով քնած է։ Լռություն և տիրում։ Նույնիսկ շները—նրանք էլ են սսկվել։

Իսկ մեղվապահներն արդեն վոտքի վրա յեն. պատրաստվում են ամառանոց ճանապարհելու առաջին մեղվանոցը։ Մի քանի տասնյակ փեթակներ տանում են հարևան Իրինովկայի գյուղխորհրդի պարտեզը։ Այնտեղ նրանք լավ ասպարեզ կունենան—շրջապատի լայնատարած այդիները լրիվ ծաղկման մեջ են։ Դեռ չլուսացած՝ ճանապարհ ընկան։ Յերկու պլատֆորմի վրա բարձված են փեթակներ։ Մեղվապահները քայլում են կառքերի կողքերով։ Դժվար է ձիերի համար քաշել այդպիսի բեռը։

Մի կերպ, համենայն դեպս ժամանակին հասան Իրինովկա։ Իսկ այդտեղ նոր բարդություն առաջացավ։ Իրինովկայի գյուղխորհրդի նախագահը վճռականորեն արգելեց մեղուները դնել գյուղխորհրդի պարտիզում։ Արձակեցին կառքի ձիերից մեկը և մարդ ուղարկեցին մեղվաբուծական ֆերմայի վարիչի հետևից։

— Ընկ. Միխկելսոն, դժբախտություն. նախագահը թույլ չի տալիս մեղուները դնել պարտիզում։ Ո՞ւր եք,—ասում է,—ներս խցկվում ոտար գյուղխորհուրդ։ Ինչի՞ն են պետք ձեր մեղուները։

— Բայց չե՞ վոր յես վորոշակի համաձայնության եմ յեկել նախագահի ոգնականի հետ, բացատրել եմ նրան,—թե ինչ դեր են խաղում մեղուները պտղատու այդիների փոշոտման գործում։ Չե՞ վոր նրանք իրենք վոչ մի հատ մեղու չունեն։ Ինչպես յերևում է, ինքս նորից պետք է գնամ նրանց մոտ։ Եռ յետ չենք կարող բերել մեղուները։ Եդ եր պակաս...

Բայց համառ է նախագահ Բյարիկինը, մի բան վոր ասաց, էլ վոչնչով չես կարող ազդել նրա վրա։ Մի բան դիտե միայն՝ «չե՛ ու չե՛»։ Յերկար վիճեց, վերջապես պայման առաջարկեց։ Հենց այս բոպեին «Կոյտ» կոլտնտեսության անունից կնքել պայմանագիր, իրենց գյուղխորհրդի հետ։

«Գյուղխորհրդի հողամասի կամ անտառի շահագործման համար (գյուղխորհրդից կես կիլոմետր տարածության վրա) աշնանը վճարել գյուղխորհրդին 2—3 կգ մեղր յուրաքանչյուր փեթակից։

Մենք աշխատում ենք ամեն կերպ ապացուցել համառ նախագահին, վոր մեղուները և մեղվապահները վոչ մի ՁԼաս չեն հասցնի, այլ, ընդհակառակը, մեղվապահները կպաշտպանեն անտառը կորստողներից, մեր մեղուները կկատարեն այդիների փոշոտումը։

Վո՛չ, խոսել անգամ չի ուզում. այս բոպելիս նեթ պայմանագիր, կամ յետ գնացեք, վորտեղից յեկել եք։

Իսկ արևն արդեն շատ է բարձրացել։ Մեղուներն սկսել են խիստ անհանգստանալ, բայց արկանոցները բացել չի կարելի։

Յես ստիպված յեղա, իբրև մեր կոլտնտեսության վարչության անդամ, կնքել այդ հաիկաղիր պայմանագիրը։ «Ե՛հ, մտածում եմ,—կա դեռ խորհրդային դատարան, հետո նա կորոշի՝ հարկավոր է արդյոք վճարել այդքան մեղր այս ուրիշի մեղրը սիրողին։ Իսկ հիմա պետք է փրկել մեղուները...

Մնացած մեղուների տեղափոխությունը բարեհաջող եր։ Մի քանի որվա ընթացքում կենտրոնական մեղվանոցի 500 փեթակներից մնացել եր 1/8-ը, վոչ ավելի։ Մնացած բոլորը փոխադրված եյին ուրիշ տեղեր՝ վաղ գարնանային բերքի։

Կշռափեթակն ամեն որ ցույց եր տալիս 400—500 գ մեղրի հավելում։

Այդիների և ակացիաների ծաղկելուց հետո կսկսենք արհեստական ձագերը վերցնել,—ասում եր վարիչը բրիգադիրների Թուրցիկ ժողովում։—Մնում է յերկու շաբաթից վոչ ավելի մինչև գլխավոր մեղրաբերքը, բայց մենք արդեն ձագերը վերցնելու համար լավ պատրաստված ենք։ Մեր ընտանիքներն ուժեղանում են, վորովհետև գտնվում են զարգացման ամենալավ պայմաններում։ Մեկ հարկավոր է միայն խիստ ուշադիր կերպով

հետևել, վորպեսզի ժամանակին բները լայնացվեն։ Արհեստական ձագերի համար մենք պետք է ունենանք մեծ քանակությամբ լավ չեչեր և մոմաթերթ։ Բացի այդ, անհրաժեշտ է փեթակներն էլ ժամանակին պատրաստել, հակառակ պարագայում գարնանային կամպանիան կթերակատարենք։

Մեր ամենածանր խնդիրը մոմն է։ Բայց մենք ընդհանրապես վատ չենք լուծում այդ խնդիրը, գործադրում ենք շինարարական շրջանակներ։

Բրիգադիրներից մեկը հարց տվեց.

— Այս տարի թույլ պիտի տանք ընական ձագեր տանթե վոչ։

Ցերմայի վարիչը պատասխանեց.

—Հիմնականում պիտի կիրառվի արհեստական ձագեր ունենալու յեղանակը։ Չե՞ վոր դուք, ընկերներ, դեռ հնարավորություն չունեք գործն այնպես հարմարեցնել, վորպեսզի ընական ձագավորությունն իսպառ վերանա։ Ուզես-չուզես՝ ստիպված ես... Մեր կադրերը դեռ ամբողջովին չեն տիրապետել տեխնիկային։

Դաշտը ծածկված է միլիոնավոր ծաղիկներով։

Բրիգադիր Ռուդենկոն մոտենում է փեթակին, զգուշությամբ վերցնում է կտուրը, հետո ծածկոցը։ Ուշադրությամբ նայում է փեթակի ներսը և ինչ վոր բան է գրում իր օրագրում։ Հետո անցնում է մյուսին, հետո՝ յերրորդ փեթակին։

Մեղվապահները սկսեցին ստուգումները և մեղվի քանակի հաշվառումը փեթակում։ Մեկ-յերկու որից հետո մեղվանոցում կսկսվեն արհեստական ձագեր վերցնելու աշխատանքները։ Դրա համար հարկավոր է հենց ամիսներից վորոշել, թե վո՞ր ընտանիքից և ինչքան մեղու հնարավոր է վերցնել նոր ձագեր կազմելու համար։ Յեթե ընտանիքը մի փոքր թույլ է, վերցվում է մի շրջանակ վորդուձվով և ջահել մեղուներով, միջակ ընտանիքից՝ 2 շրջանակ, ուժեղից՝ յերեք։ Յերեք շրջանակից ավելի չենք վերցնում մի ընտանիքից։

Մենք սկսեցինք մայրաբուծարանից մայրեր ստանալ նոր

ընտանիքների համար։ Բոլոր մեղվանոցները մինչև մայիսի 20-ը ձագեր վերցնելու պլանը պիտի կատարին վոչ պակաս, քան 30%-ով, մնացած 70%-ը պետք է վերցվի գլխավոր մեղրաբերքից հետո։

Ռուդենկոյի մեղվանոցը մեծանում է՝ 180 փեթակ եր, այսոր՝ 210, իսկ վաղը կլինի էլ ավելի։

Յերկրորդ-յերրորդ որը նոր ընտանիքներից սկսում են թռիչք անել հատ ու կենտ մեղուներ. մատաղ սերնդին ջուր է անհրաժեշտ։ Դրա համար էլ մեղվապահ Տատյանա Կալինիչենկովան միշտ պատրաստ է պահում թարմ, մաքուր ջուր՝ նոր ընտանիքների համար։

Մինչև գլխավոր բերքը մնում է ընդամենը մի 3 շաբաթ, պետք է շտապել վերջացնել արհեստական ձագեր վերցնելը։ Արդեն ներկայումս բերքը հասնում է որական 500—800 գ։ Մեղվեն ներկայումս բերքը հասնում է որական 500—800 գ։ Մեղվեն սաստիկ խանգարում է մեղուների ձագ տալու դեմ, մանակերպ էլ վոր պայքարում ենք ընական ձագ տալու դեմ, մանավանդ բրիգադիր Սեպպահամերը, այնուամենայնիվ մի քանի ընտանիքներ մայրապուկներ են շինում [1]։

Այսոր մեղվապահ Ոլյա Սարելկովայի արտադրությունը բարձր է։ Նրա մեղվանոցում մի քանի ձագեր պիտի դուրս գան։ Ճաստ չունենք, հարկադրված ենք արտներս պնդացնելով նոր յեկվորների համար փեթակներ սարքել։ Պատրաստված է նույնպես ձագակալը։

Սարելկովան ուշադրությամբ հետևում է № 10 փեթակին, վորի մեջ նա յերեկ սերեկած մայրապուկ է դրել։ Մեղուները խիստ հուզված են, նրանք ընդհատել են ամեն մի աշխատանք։

---

1) Մեզ մոտ՝ Խորհրդային Հայաստանում, մենք վաղուց արդեն հաջողությամբ կատեցնում ենք ընական ձագավորությունը թափ տալու միջոցով։ Ցերը նկատում ենք, վոր ընտանիքը մայրապուկներ է շինում ու մայրն սկսել է ձվել նրանց մեջ, անմիջապես թափ ենք տալիս, ընտանիքը յերկու որ պահում դատարկ փեթակի մեջ ու յերբ մեղուն սկսում է չեչեր շինել, մոմաթերթ ենք տալիս։ Այդ ընտանիքը հրաժարվում է ձագավորությունից և ուժեղ կառուցման աշխատանք է սկսում, յեթե մայրը ջահել է (վաղորոք պետք է հոգալ բոլոր մայրերի մասին)։ (Ծ. Բ.)։

Մի քանիսը դեռ շարունակում են իրենց յեռ ու վեռը, մյուսներն անշարժ նստած են արկանոցի մոտ՝ թռչելու պատրաստ։ Ընդհանուր հուզմունքը հաղորդվում է մորը։ Մինչև այժմ դեռ նա անխոնջ կերպով գիշեր-ցերեկ ձվում էր, այժմ բոլոր հոդսերը թողած՝ հուզված վազվզում է չեչերի վրա։ Իսկ արևը քանի գնում բարձրանում է։ Ցեվ հանկարծ, կարծես մի ինչ վոր աղդանշանով, մեղուները խուռներամ սկսում են դուրս խուժել այնպես շտապ, վոր շատերը չեն կարողանում բարձրանալ ոդի մեջ, վոր լցված է մեղուների առանձնահատուկ աղմուկով։ Կարծես թե մի ինչ վոր ուժ մեղուներին դուրս է քշում փեթակի միջից։ Ահա փեթակից դուրս խուժած ձագն աղմուկով արդեն պտտվում է փեթակի վերևում։

Ոլյան անընդհատ հետևում է, թե վորտեղ կնստի ձագը։ Շատ մեղուներ նստում են ծառերի սաղարթի վրա։ Բայց նրանց ամբոխը խռնվում է գլխավորապես ճյուղի վրա. այստեղ նստել է մայրը։ Մեղուները, աղմկելով՝ չորս կողմից խմբվելով հավաքվում են այստեղ։

Թռչող մեղուների քանակն ավելի ու ավելի քչանում է։ Մեղուները ճյուղի վրա կծիկ են կապում և այդ կծիկը հետզհետե աճում է։ Աղմուկը հանդարտում է։ Մեղուները մեկը մյուսից քաշ ընկած՝ ամբողջ կծիկով կախվում են ճյուղից և կազմվում է վոսկեգույն յերկարավուն, կենդանի մի գունդ, կարծես խաղողի վողկույզ լինի։ Այդ ժամանակ Ոլյան արագ մոտենում է ձագին, ձագակալը բռնում է տակը, ուժգին շարժումով թափահարում է ճյուղը, և բոլոր մեղուները միանգամից լցվում են ձագակալի մեջ...

Նոր փեթակում մեղուներն արագորեն սկսում են կառուցել չեչերը։

— Ուղղակի չենք կարողանում շրջանակներ հասցնել,— գանգատվում են մեղվապահները։ Շրջանակներ գրած-չգրած՝ չեչերը կառուցվում են։ Ֆերմայի վարիչը մեղվանոցի աշխատակիցներին համառորեն պնդում է.

— Վոչ մի հապաղում աշխատանքի մեջ, պետք է ժամանակին լայնացնել բունը, վորպեսզի մեղուները կարողանան անհապաղ կառուցել չեչերը։ Վորքան շատ շրջանակներ չինեն նրանք այնքան ավելի մեծ հաջողությամբ մենք կհանդիպենք գլխավոր մեղրաբերքին։

Առայժմ մեր տնտեսությունը վերնահարկեր չի գործադրում։ Մեր տնտեսությունը բազմացման տնտեսություն է, ուստի և ընտանիքները գլխավոր մեղրաբերքի ժամանակ այդչափ ուժեղ չեն։ «Կոլոս» կոլտնտեսության ընտանիքները միշտ ուժի յեն. գլխավոր մեղրաբերքի ժամանակ նրանք ազատորեն տեղավորվում են 12 շրջանակի վրա։

Ընտանիքները գլխավոր մեղրաբերքի համար նախապատրաստելու աշխատանքի հետ զուգընթաց, մեղվապահները կարգի յեն բերում ինվենտարը, պատրաստում են իրենց համար անհրաժեշտ մթերքներ և ուրիշ անհրաժեշտ պարագաներ։ Դրանով առանձնապես զբաղվում են այն մեղվանոցների բրիգադները, վորոնք հեռու յեն ընկած կոլտնտեսության ագարակից։ Շուտով սկսվելու յեն մեղվապահի ամենայեռուն, լարված աշխատանքի որերը և ժամանակ չի լինելու անձնական գործերով զբաղվելու։

Բայց մեղվաբուծական ֆերմայի վարիչի հոգսերն ամենից ավելի յեն։ Վորքան մեղը պիտի ստացվի որական, վորտեղից ճարել պահեստի ամանները։

Հարկադրված յեղանք հասարակական շենքերի կտուրներից պոկել ցինկապատ թիթեղը՝ մեղրի համար պահեստի բաքեր (թիթեղե մեծ ամաններ) պատրաստելու համար։ Ընդհանուր առմամբ Ֆերման ժամանակին, և ինչպես հարկն է, պատրաստվեց գլխավոր մեղրաբերքի համար։ Մնում էր միայն ուժեղացնել մեղրաքամի սեղանայինների բրիգադը, բայց այդ դժվար չէ մեզ համար. դպրոցներում արդեն վերջանում են պարապմունքները և ազատվում են մեզ համար խելացի ու ճարպիկ աշխատավորներ։

ԳԼԽԱՎՈՐ ՄԵՂՐԱԲԵՐՔ

Վրա հասավ ամառը։ Արևն անտանելի այրում էր։ Ցեվ այրող քամին, կարծես, փչում էր ուժեղ վառված վառարանից։ Հասած պտուղների հոտն էր գալիս...

Հունիսը և հուլիսը վճռական ամիսներ են մեղվաբուծության համար։ Մեր Ֆերման լավ նախապատրաստվել է այդ ամիսների համար։ Մեղվանոցները դասավորված են կոլտնտեսության կենտրոնական ագարակի մոտերքում, ապահովված են ֆացելիայի (ուժեղ մեղրատու) հատուկ ցանքերով։ Փեթակների զգալի մասը փոխադրված է հարևան Նոր-Սերգիևկա հացահատիկային խորհտնտեսության լայնածավալ դաշտերը։ Մեղրաքամի բրիգադի կազմը լրիվ է։ Ինվենտարը պատրաստ է։ Փոխադրական միջոցները հոգացված են—վերցված է չորս ձի, սայլեր, պլատֆորմա, ամեն ինչ պատրաստ է և լրիվ կարգի բերված։

Մեր մեղվաբուծական Ֆերմայի արագ զարգացման և արդյունավետության լուրերը տարածվել էին կուշչևկայի շրջանից դուրս։ Գլխավոր մեղրաբերքի մոտերքը գալիս էին մեղ մոտ մեղվապահ-եկսկուրսանտներ՝ խմբերով և առանձին-առանձին։ Բոլորը ցանկանում էին մոտիկից ծանոթանալ մեր մեղվանոցի աշխատանքի մեթոդներին և ընդօրինակել մեր արտադրական փորձերը։ Միայն 1934 թվի ամառվա ընթացքում մեր Ֆերման այցելել է 500 եքսկուրսանտ։

— Ի՞նչպես է ձեզ հաջողվել 1933 թվին մեկ սեզոնում 150 փեթակից 85 ցենտներ մեղր ստանալ,—հարցնում են եքսկուրսանտները։—Չէ՞ որ դա անում է յուրաքանչյուր ընտանիքից 56 կգ։ Հանձք բան է 230% աճ։ Մենք արտադրանք է աճ ստացել ենք 75%-ով պակաս, քան դուք։ Դե, ի հարկե, դուք այս տարի այդպիսի բերք չէք ստանա,—տարին մեղուների համար վատ է գալիս [1]։

— Մեղուների համար վատ տարի չկա,—սովորաբար պատասխանում է եկսկուրսանտներին մեղվաբուծական Ֆերմայի վարիչը,—յեթե մեղվապահը, ինչպես հարկն է, պատրաստվել է մեղրաբերքին և յեթե ընտանիքները բոլոր փեթակներում պատում են գոնե 12-ական շրջանակ և յեթե ընտանիքները նաև ապահովված են լավ չեչերով գլխավոր մեղրաբերքն ոգտագործելու համար, ուրեմն հաջողությունն ապահովված է։ Չէ՞ որ, յեթե գլխավոր մեղրաբերքն անգամ 5 որից ավելի չի տևում, մինչև իսկ այդ դեպքում չեչով և մոմով ապահովված ուժեղ ընտանիքը կկուտակի 5 որում 30 կգ և ավելի մեղր։ Այսպիսով դուրս է գալիս, որ գլխավոր մեղրաբերքի համար պետք է պատրաստվել ամբողջ տարվա ընթացքում։ Չէ՞ որ, յեթե մեղուները գլխավոր մեղրաբերքին սկսեն նոր չեչեր կառուցել, մեղրի կուտակումը դրանից կտուժի։ Ահա, նայեցեք, ընկերներ, ներկայումս մեղվապահները առավոտները հաղիվ յերևում են մեղվանոցներում։ Նրանք բոլորն զբաղված են ուրիշ աշխատանքներով։ Նրանք բոլորը, վերը մուրճը ձեռքին, վերը՝ սղոցը, վերը՝ ռնդան—բոլորն շտապ կերպով շրջանակներ են պատրաստում մոմաթերթելու համար։ Ցեվ մեզ մոտ արդեն այդ աշխատանքի համար նախորոք պատրաստված է ամեն ինչ, և՛ մեխ, և՛ տաղալար։

Իսկ ահա մեր հարևանների մոտ՝ Ժլոբենյան կոլտնտեսության մեղվանոցում՝ վոչ մեխ կա և վոչ էլ մետաղալար։ Ժամանակ չկա։ Ամեն տարի, ինչքան էլ անհաջող լինի, վորոշ բերք լինում է, և մեղվապահը պետք է կարողանա այդ բերքն ոգտագործել։ Իսկ հանձնաժողովները իրենց պաշարն էլ չեն կարողանում հանձնել անշնորհքությունից մեղուներն վաքել և աճ էլ բոլորովին չի լինում, վորի համար ամբողջ մեղրը գցում են տարվա վրա (Ս. Բ)։

---

[1]) Ամեն տարի, ինչքան էլ անհաջող լինի, վորոշ բերք լինում է, և մեղվապահը պետք է կարողանա այդ բերքն ոգտագործել։ Իսկ հանձնաժողովները իրենց պաշարն էլ չեն կարողանում հանձնել անշնորհքությունից մեղուներն վաքել և աճ էլ բոլորովին չի լինում, վորի համար ամբողջ մեղրը գցում են տարվա վրա (Ս. Բ)։

նակին հոգ չեն տարել այդ մասին։ Մենք հարկադրված յեղանք նրանց ընկերական ոգնություն հասնելու, թե չե՝ ամբողջ գործը կխորտակվեր։

Հրես դուք ասում եք, վոր մենք 33 թվին մեծ նվաճումներ ենք ունեցել, այսինքն՝ ամեն մեկ ձմեռած ընտանիքից 56 կգ մեղր ենք ստացել և 800 գ մոմ։ Բայց մենք ել ավելի մեծ հետևանքների կհասնեյինք. դժբախտաբար, հարկավոր աջակցությունը չստացանք մեր վարչությունից։ Մեղվաբուծությունը ճիշտ վոր կոլտնտեսությունների համար վոսկու մի ֆոնդ է, բայց առայժմ այդ գանձն աչքաթող են անում։ Հրես, մեր մեղվաբուծական ֆերման ել 33 թվին ժամանակին ապահովված չեր շրջանակներով և վեթակներով, և մարդ ել քիչ տվին մեզ մեղրաքամի ժամանակ։

Մեր նեղ տեղը մոմաթերթն է, իսկ մոմաթերթով շրջանակները գլխավոր մեղրաբերքի ժամանակ պահանջվում է 100-նեռով)[1]։ Այնինչ առայժմ մեր գլխավոր խնդիրն ընտանիքների բազմացումն է, ընտանիքների տարեկան աճը շատ մեծ է և պահանջվում է շատ ավելի մեծ քանակությամբ մոմ, քան կարող են մեղուները տալ։ Ցեվ ահա կարիքը մեզ ստիպեց պերգամենտով լցնել գնալ։ Որինակ՝ ներկա 1934 թվին մենք դրել ենք փեթակների մեջ 580 թերթ պերգամենտից պատրաստած մոմաթերթ։ Մեղուները պերգամենտի մոմաթերթ ընդունում են բավական դյուրությամբ, իսկ յերբ մեղուներն արդեն ձգում — պատրաստում են, բոլորովին նկատելի չե՝ հիմքը պերգամենտից է, թե մաքուր մոմից։ Պերգամենտից մոմաթեր պատրաստելու գործը շատ պարզ է. մաքուր թերթը մի անգամ իջեցնում ենք հալած մոմի մեջ և ապա մի քանի բոպեյից հետո (յերբ մոմը բավականին կպնդանա) բաց ենք թողնում սովորական մոմաթերթի գլանների միջով։ Արտաքին տեսքով բոլորովին չես ջոկի արհեստական մոմաթերթը մաքուրից, դրա հետ միասին, այդ տեսակ արհեստական մոմաթերթը միանգամայն դիմացկուն է, և բջիջները ժամանակի ընթացքում չեն ձգվում, չեն հարթվում։ Այդպիսով, 15 կգ մոմից մենք ստացանք (դեռ մարտ ամսին) 580 թերթ արհեստական մոմաթերթ՝ պերգամենտի հիմքի վրա և 23 կգ մոմի խնայողություն արինք։ Այդպիսի շրջանակը մեղուները կառուցում վերջացնում են 3—4 որվա ընթացքում և լավ մեղրաբերքի ժամանակ կշռափեթակը 800 գ հավելում է ցույց տալիս։

Եքսկուրսանտներն առանձնապես հետաքրքրվում եյին, թե ինչպես մեր մեղվաբուծական ֆերմայում մի ձմեռած ընտանիքն ավելի շատ մեղր է տալիս (միջին հաշվով), քան հարեվան մեղվանոցներում։ Այդ հարցին առնասարակ մենք պատասխանում ենք, վոր այս բանում խիստ ոգնում է մեզ մոտ ընդունված արհեստական ձագեր վերցնելու մեթոդը։

Մայիսի 20—30-ը մենք վերցնում ենք արհեստական ձագեր՝ բեղմնավորված մայրերով։ Վերցնում ենք մեկ կամ յերկու ընտանիքից մեղուներ և կազմում ենք յերրորդ ընտանիքը։ Ցեվ ահա գլխավոր մեղրաբերքի ժամանակ յերեք ընտանիքն ել ունենում են հավասար ուժ—յերեքի մեջ ել մեղուն պատում է 10—12 շրջանակ. այդ բանը հաջողվել է ինձ կազմակերպել մի շարք տարիների ընթացքում։ Մանավորապես յես կատարել եմ հետևյալ փորձը տասը հավասար ուժի ընտանիքների հետ։ Գրանցից 5-ը յես կիսեցի մայիսի 20-ին, իսկ մյուս 5-ը՝ գլխավոր մեղրաբերքից հետո։ Առաջին խումբը սեզոնի ընթացքում վոր մեղրաբերքից հետո։ Առաջին խումբը սեզոնի ընթացքում վոր մեղրաբերքից հետո։ Յերկրորդը՝ միայն 100 կգ, այսինքն՝ 80 կգ ավելց 180 կգ մեղր, յերկրորդը՝ միայն 100 կգ, այսինքն՝ 80 կգ ավելց պակաս։ Առաջին խմբից յուրաքանչյուր ձմեռած ընտանիք ավելց։ Առաջին խմբից յուրաքանչյուր ձմեռած ընտանիք ավելց միջին հաշվով 36 կիլոգրամ մեղր և 200% աճ, վորովհետև գլխավոր մեղրաբերքից հետո այդ խմբից կազմեցի ելի 5 ընտանիք։ Յերկրորդ դեպքում յուրաքանչյուր ձմեռած ընտանիք ավելց միջին հաշվով 20 կգ մեղր և 100% աճ, 5-ից աշնանն ստացվեց 10 ընտանիք։

Ահա դրանում է կայանում մեր բազմացման աշխատանքների հիմնական ձևը։ Մինչև գլխավոր մեղրաբերքը մենք վերցնում ենք 50—70% արհեստական ձագեր, բայի այդ, 26—30% ել գոյանում է բնական ձագերից։ Վերջապես, գլխավոր մեղրաբերքի ժամանակ

[1] Պետք է աշխատել, վոր շրջանակներում չեչերի կառուցումը կատարվի գլխավոր մեղրաբերքից առաջ, վորովհետև չեչերի կառուցումն այդ ժամանակ մեղուների մի մասին կարում է կուտակման աշխատանքից (ծանոթ. ռուս. խմբ.)։

բերքից հետո կազմում ենք 2—3 ընտանիքից ելի մի ընտանիք պատրաստի չեչերի վրա։ Դրանով ել բացատրվում է, որ, որինակ, 1933 թվին ընտանիքների աճը մեր ֆերմայում հասավ 230%-ի։ Հասկանալի է, որ այդպիսի աճ հետագայի համար հնարավոր է, յեթե մենք հատուկ մայրաբուծարան ունենանք։ Այդ տնտեսության հիմնական խնդիրն է՝ ցեղական աղնվացումը, արտադրողների՝ մայրերի և բուռերի՝ մասսայական ընտրությունը և վերընտրությունը և ռեկորդիստ մայրերի բուծումը։ Բայց մայրաբուծական տնտեսության մասին կխոսեմ հետո։

Եքսկուրսանտները սաստիկ հետաքրքրվում եյին մեր ունեցած ինվենտարով։ Այդ բանին մենք պատասխանում եյինք, որ մեր ֆերման առանձին բարդ սարք ու կարդ չունի, յեթե չհաշվենք ինքնագործ մեղրահանը։ Մնացած ամեն ինչն ամենասովորական ինվենտարն է, որը վոչ մի առավելություն չի տալիս մեր տնտեսությանը՝ ուրիշ տնտեսությունների նկատմամբ։ Միևնույն ծխարարները, մեղվաբուծական քողերը, քերիչները, գլանները և ուրիշ մանր-մունր ինվենտար, որ գործածվում են յուրաքանչյուր տնտեսության մեջ։ Որինակ, հենց մի պարզ գործիք, ինչպես ծակիչը—շրջանակները ծակելու համար, դա մենք ինքներս ենք հնարել, ամեն մի մեղվաբուծ կարող է ինքը սարքել։ Բանն ինվենտարը չի, այլ մարդիկ, թե ինչքան են այդ մարդիկ շահագրգռված։ Ահա այդ խնդրի նկատմամբ մենք միշտ ել առաջարկում եյինք եքսկուրսանտներին անցկացնել իրենց մեղվանոցներում գործարքային աշխատանք—աշխորերի բաշխումը սերտորեն կապելով մեղվանոցի արտադրանքի քանակի, վորակի, աճի հետ։

Եքսկուրսանտները սաստիկ զարմանում եյին, թե ահա շուտով գլխավոր մեղրաբերքն է, իսկ դուք դեռ վոչ մի հատ վերնահարկ ել չունեք։ Ինչպես է, որ ձեզ հաջողվում է ամեն տարի ստանալ ավելի մեղր, քան հարևան մեղվանոցներն են ստանում, որոնք վերնահարկեր ունեն։ Դա ճիշտ է. մեր ընտանիքներն այնքան ուժեղ չեն (10—12 շրջանակի վրա), և վերնահարկեր ել չունենք, մեղրը քամում ենք բնի շրջանակներից։ Բայց այդ բոլորը ժամանակավոր բնույթ է կրում։ Եքսկուրսանտները

մոռանում են, վոր մեր տնտեսությունն առայժմ բազմացման գործն է առաջ տանում, այսինքն՝ մինչև պլանով նախատեսած 4000 ընտանիք ունենալը։ Յերբ այդ կկենսագործվի, յերբ կոլտնտեսային խոշոր մեղվաբուծական ֆերման կկառուցվի,—մեր տնտեսությունը մեղր ստանալու ուղղությունը կբռնի և ամեն ինչ կհարմարեցվի այդ նպատակի համար՝ ուժեղ, խիստ արդյունավետ ընտանիքներ, վերնահարկերի գործադրում և այլն։

Եքսկուրսանտները շատ եյին զարմանում մեր մեղվապահների աշխատանքի արագության, ճշտության և խիստ կարգապահության վրա։ Յեվ իսկապես՝ մեր ֆերմայում կազմակերպվել եր արդեն աշխատակիցների մի կորիզ, վորը հրաշալի տիրապետում եր գործի տեխնիկային։ Նրանք սովորել եյին աշխատել մեղուների հետ արագ և ճարպիկ, և, դրա հետ միասին, վոչ մի ավելորդ շարժում չեն թույլ տալիս, վորովհետև հայտնի է, վոր մեղուները չեն սիրում կոպիտ շարժումներ, շփոթվածություն և անիմաստ վազվզոց։ Յեթե, որինակ, մեր մեղվապահը բաց է անում փեթակը, նշանակում է նա արդեն առաջուց հաստատ գիտե, թե ինչ է հարկավոր իրեն իմանալ, այն ել շատ կարճ ժամանակում։ Յենթադրենք մեղվապահին հարկավոր է իմանալ՝ հարկավոր չի արդյոք ընները լայնացնել։ Դրա համար բոլորովին հարկավոր չի նայել ամեն մի շրջանակ առանձին-առանձին։ Յեթե մեղվապահը, վերցնելով կտուրը, տեսնում է, վոր մեղուները խիստ առ խիստ բռնում են վերջին շրջանակը, այդ արդեն բավական է՝ բունը կարիք ունի լայնանալու։ Մեղվապահն իր հետ մատ է ածում աշխատանքային արկղը՝ շրջանակներով։ Արագ լայնացնում է բունը և մի բոպեյում խնդիրը լուծում։

Կամ, յենթադրենք, մեղվապահին կարևոր է փեթակում գտնել և ստուգել մորը։ Այդ խնդիրն ել մեր աշխատավորները վճռում են շատ արագ, քանի վոր գիտեն հատկապես վորտեղ պիտի փնտրել նրան—այն շրջանակների վրա, վորտեղ նոր դրած ձվերն են, իսկ ամառը՝ նոր կառուցվող, կամ բուաբջիջով շրջանակների վրա։

Յես ինքս յերկու բոպեյում գտնում եմ մորը։

Աշխատանքի արագությունը խոշոր նշանակություն ունի։

Շնորհիվ մեր մեղվապահների աբաղ աշխատանքի, մեզ մոտ գողություն համարյա չի առաջանում, համենայն դեպս գողությունը հազվադյուտ է պատահում։

Մեր ֆերմայի համար սկսվեցին ամենապատասխանատու օրերը։ Չէ՞ վոր 1934 թ. մինչև հունիս ամիսը անձրևներ բոլորովին չեկան. չորային, շոգ օրեր եյին, մեղրատու ծաղիկների ծաղկումն ուշացավ, շատ դեպքերում ստիպված եյինք մեղուներին կերակրել։ Իսկ այժմ հանկարծ սկսվեցին ուժեղ անձրևներ, մեղրատուներն արագորեն սկսեցին աճել, զարգանալ, այնպես վոր մեղուները շուտով ծաղիկների ծովում եյին գտնվում։ Առանձնապես լավ եյին ծաղկում ծծմորն ու շաղդակմուկը։ Արդեն անձրևներից մի քանի որ հետո կշռափեթակներն սկսեցին ցույց տալ 3—4 կգ հավելում, սակայն նույն կշռափեթակները յերկու որ առաջ ընդամենը 50 գ եյին ցույց տվել։

Գլխավոր մեղրաբերքն անսպասելի արագ սկսվեց, հարկավոր եր շտապել մեղրը քամել։ Մեղվաբուծական ֆերմայի կոլտնտեսականների արտադրական ժողովում վորոշվեց անմիջապես անցնել մեղրաքամին, սկսելով առաջին բրիգադից։

Ֆերմայի վարիչն առաջարկեց մեղվապահներին որինակելի կերպով կազմակերպել մեղրաքամը, այն հաշվով, վոր ուղիղ հինգ որից հետո մեղրաքամի բրիգադը վերադառնա այն մեղվանոցը, վորից սկսել է։ Քանի վոր մեր ֆերման ունի 5 մեղվանոց, ուրեմն, նշանակում է, յուրաքանչյուր մեղվանոցում աշխատանքը պիտի տեվի վոչ ավելի, քան մեկ որ։

Մենք քիչ մարդիկ ունենք, դրա համար էլ չենք կարող գործի գցել բոլոր վեց մեղրահանները։ Մենք կարող ենք միայն յերեքի վրա աշխատել, վորի համար մեղրաքամի բրիգադում կպահանջվի 11 մարդ։ Այդ բրիգադը պարտավոր է, ինչ ուզում է լինի, մի մեղվանոցի (180 ֆեթակ) մեղրը մի որում քամել վերջացնել։ Ուրեմն՝ մեղրաքամի բրիգադի կոլտնտեսականներից յուրաքանչյուրը պիտի իմանա իր տեղը, չբացակայի, աշխատի արագ, անսխալ։ Մեղվանոցի բրիգադիրը նունպես անպայման պիտի ներկա լինի մեղրը քամելիս. նա շրջանակներն է հանում փեթակներից։

Բրիգադիր Ռուդենկոն առաջարկություն է մատնում.

— Ավելի լավ չէ՞ յուրաքանչյուր մեղվանոցին տալ մի մեղրահան և թող յուրաքանչյուր բրիգադ ինքը քամի մեղրը, յերբ հարկավոր կլինի այդ։

— Վոչ, վոչ մի դեպքում։ Դրա համար վարչությունն ստիպված պիտի լինի յուրաքանչյուր մեղվանոցում առանձին վերահսկիչ կշռող նշանակել։ Չէ՞ վոր մենք պետք է ճիշտ իմանանք, թե յուրաքանչյուր ընտանիքն առանձին ինչքան մեղր է տալիս։

Բացի այդ, յեթե մենք Ռուդենկոյի առաջարկն ընդունենք, ստիպված պիտի լինենք ձիերը կամ մեքենան, անգամ մի փոքր մեղրի համար, քշել 6—7 կիլոմետր տարածություն։ Վերջապես, մեղրի համար, քշել 6—7 կիլոմետր տարածություն։ Վերջապես, ընկ. Ռուդենկոն ինչպես է ապահովում մեղրի ճիշտ հաշվառումը բրիգադում, պաշտպանում այն հնարավոր հափշտակումներից և այլն։ Ընկերներ, ավելի լավ է, ընդունենք իմ առաջարկը մեղրաքամի աշխատանքի կազմակերպման համար։ Այս ձևն ավելի ձեռնտու է և արդյունավետ։ Յուրաքանչյուր աշխատավորի ընդհանուր աշխատանքի միայն մի առանձին մասն է բաժին ընկնում, և մեղրը փեթակից մինչև բակն անցնում է կոնվեյերով։

Արագ, առանց դադարի, մեղվանոցից դեպի մեղրահաններն են գնում ու հետ գալիս սայլակները, ազմկում են ինքնագործ մեղրահանները։ Ոդում սփռված է մեղրի անուշահոտությունը։

— Առաջին տեսակի, առաջին տեսակի,— բղավում է յերիտասարդ մեղվապահ Կարլ Սաամեն, ցույց տալով սպիտակ տասմերը։

Մեղրաքամի բրիգադի բրիգադիր Անտոն Միխկելսոնն ուշադիր հետևում է քամվող մեղրի մաքրությանը։ Գործիքները (սերեկներ վերցնելու դանակները) շուտ-շուտ խստահանվում են։ Քամված շրջանակներն անպայման նորից դրվում են նույն փեթակի մեջ, վորից հանվել են։ Վորպեսզի վոչ մի սխալ չլինի, շրջանակները բոլորը համարակալվում են։

Մինչև ճաշ քամեցին 200 կիլոգրամ։

— Յերեկոյան կհանձնենք պահեստ 500 կգ,— հանդգնված կերպով հայտարարեց առաջին բրիգադի բրիգադիր Ամմերը։

— Չէ, այդպես չի։ Հարկավոր է նորման գերակատարել,— առարկեց Ամսերին մեղրաքամի բրիգադիր՝ 17 տարեկան յերիտասարդ Անտոն Միխկելսոնը։ Յեթե մենք անցյալ տարի 4 հոգով մի որում քամեցինք 500 կգ, այս տարի 11 հոգով պիտի քամենք 700—800 կգ։

Յեվ, իսկապես, տղերքը լավ աշխատեցին, մինչև յերեկո քամեցին և հանձնեցին պահեստ 15 բիդոն մեղր, յուրաքանչյուրում 50 կգ։ Մյուս որը դաշտավարական բոլոր բրիգադներում, հարվածայինների սեղանին տրվեց առաջին թարմ մեղրը։

Առավոտը շուտով քամողները հասան № 2 մեղվանոց՝ կոլտնտեսությունից 6 կիլոմետր հեռավորության վրա։ Յերիտասարդ բրիգադիր Սեպպահամերը մի քիչ հուզված է. չէ որ առաջին անգամն եր, որ նա ղեկավարում եր մեղրաքամը։ Վախենում է՝ արդյոք կկարողանա աշխատավոր ուժն այնպես ճիշտ դասավորել, որպեսզի աշխատանքի ընթացքում ուշացումներ չլինեն։

— Վոչինչ, վոչինչ,—վոգևորեց նրան Անտոնը։—Դու միայն շրջանակները տուր ինձ, իսկ մենք արդեն չենք սխալվի, յերկրորդ տարին է աշխատում ենք։

Համենայն դեպս Սեպպահամմերի յերկյուղը զուր չեր։ Թեև մինչև յերեկո 800 կգ մեղր քամեցին, բայց և այնպես չկարացան մեղվանոցում աշխատանքը վերջացնել, 10 փեթակ մնաց։ Ի՞նչ անել։ Թողնել այդ 10 փեթակը, գիշերով անցնել № 4 մեղվանոցը (Ռուդենկո), չի կարելի, հարկավոր է առավոտյան շուտով աշխատանքը վերջացնել այստեղ։ Իսկ մինչև հասնեն Ռուդենկոյի մեղվանոցը, վորքան ժամանակ կկորչի։ № 4 մեղվանոցում արդեն անհնարին կլինի ամբողջ աշխատանքը վերջացնել նույն որը, միևնույն է, նորից պիտի պոչեր մնան։

Վորոշեցին գիշերել Սեպպահամմերի մեղվանոցում, առավոտն ինչքան հնարավոր է շուտ վերջացնել այստեղ աշխատանքը, վորպեսզի հետո արագ փոխադրվեն № 4 մեղվանոցը։

Դժբախտաբար, հնարավոր չեղավ առավոտը ժամը 10-ից շուտ սկսել աշխատանքը, վորովհետև գիշերը բավականին ցուրտ եր, և մեղրը շրջանակների մեջ թանձրացել եր։ Ինչքան էլ շտապեցին, համենայն դեպս, մինչև ժամի 2-ը հազիվ վերջացրին գործը։ Մինչև պատրաստվեցին, մինչև ինվենտարը բեռնեցին, բավականին ժամանակ անցավ, այնպես վոր № 4 մեղվանոց հասան միայն յերեկոյան ժամի 4-ին։ Իհարկե՝ արդեն ուշ եր և որը կորած եր։ Իսկ պլանով նախատեսված եր որական սպասարկել մեկ մեղվանոց այն հաշվով, վորպեսզի ուղիղ վեց որ հետո վերադառնան նույն մեղվանոցը։ Իսկ գործնականում դուրս յեկավ, վոր յերկրորդ անգամ կհաջողվի դալ միայն 10—12 որ հետո։ Իսկ դրա պատճառով բավական շատ մեղր կկորցնենք։ Մեղրաբերքը հաջող է՝ վոչ պակաս, քան որական 4—5 կգ հավելում յուրաքանչյուր փեթակին։ Վնասն արդեն պարզ է. կորցրինք մի ամբողջ որվա յեկամուտը—100 փեթակին անում է 400—500 կգ։

Ամբողջ ցավը նրանումն է, վոր մարդիկ քիչ են՝ յերեք ինքնագործ մեղրահաններ լրիվ չափով բեռնավորված չեն։ Նշանքնադարձ մեղրահաններ լրիվ չափով բեռնավորված չեն։ Նշանքնադարձ մեղրահաններ լրիվ չափով բեռնավորված չեն։ Նակում է՝ ինչ վոր տեղից պետք է ճարել կոլտնտեսականներ և մեղրաքամի բրիգադը հասցնել 21 մարդու, յուրաքանչյուր մեղրահանին 7 մարդ։ Այդպես էլ արեցինք։ Մեղվաբուծական բրիգադներից մի քանի կոլտնտեսական վերցրինք և մեղվանոցում մեկական մարդ։ Բացի այդ, կոլտնտեսության վարչությունն ոգնության յեկավ—տվեց յերեք կոլտնտեսական։

Ուժեղացրած բրիգադի աշխատանքն անհամեմատ ավելի արդյունավետ յեղավ, հիմա մեղր քամողները հեշտությամբ սպասարդյունավետ յեղավ, հիմա մեղր քամողները հեշտությամբ սպասարկում եյին 200 փեթակից բաղկացած մի մեղվանոց և անտարկում եյին 200 փեթակից բաղկացած մի մեղվանոց։ Միջապես, դեռ յերեկոյան, փոխադրվում եյին մյուս մեղվանոց։ Որական հազար կիլոգրամ մեղր եր մտնում պահեստ։

Դժբախտաբար, դրանից հետո շուտով գլխավոր մեղրաբերքը վերջացավ, մեղրի հավելումը փեթակներում մի անգամից ընկավ որական մինչև 200 գրամ, փչեց կորստաբեր չոր քամի, մեծ քանակությամբ դաշտային թիթեռներ առաջ յեկան։

Մեղրաքամից հետո մեղվապահներն անցան ընների ստուգմանը՝ արդյոք շրջանակները կանոնավոր են դասավորված փեթակում, կա արդյոք մայր, ինչպես չէ՞ն տվել արդյոք նրան մեղրաքամի ժամանակ։ Մեղրաքամի ժամանակ հնարավորությունն չկար մեղվանոցը մաքրելու և հենց այդ եր պատճառը, վոր մեծ

վոգեվորությամբ բրիգադիրներն սկսեցին մաքրություն և կարգ ու կանոն պահպանել մեղվանոցներում։

Առանձնապես մաքուր են փեթակները № 5 մեղվանոցում՝ բրիգադիր Սեպպահամմերի և № 4 մեղվանոցում՝ բրիգադիր Ռուդենկոյի մոտ։ Սեպպահամմերն անկարգության և կեղտոտության կատաղի թշնամին է։ Վրդովված պատմում է.

— Մի անգամ յես այցելեցի «Սոցիալիզմի կայծ» կոլտնտեսության մեղվանոցը, որտեղ աշխատում է մեղվապահ Տրայանը։ Այդպիսի խայտառակություն յես վոչ մի տեղ չեմ տեսել։ Փեթակների մոտ թափթփված են մոմաթերթի կտորտանք։ Տրայանը կտրտել է բոռերի գլուխները և նույնպես ցրիվ տվել մեղվանոցում։ Փեթակների մոտ թափթփված են դարձանն անպետք ճանաչված շրջանակները։ Մոլախոտերը մինչև ծնկերն են հասնում։ Իսկ չե՞ որ մոլախոտերի մեջ քիչ չեն ճաաատունները՝ գորտերը, մողեսները, մկները, առնետները... Դե ինչ ասես չես գտնի ենտեղ։ Իսկ փեթակների ներսում... փեթակների ներսում ինչ եր կատարվում, վա՛յ, վա՛յ, վա՛յ։ Հատակների անկյուններում աղբը ծով է, իսկ չե՞ որ նրա մեջ զարգանում է ցեցը, չեչերը հնացել են, յուրաքանչյուր ընտանիքում հաղարներով բոռեր կան։ Դրանից ավելի լավ դրության մեջ չի Նովո-Սերգեևկայի մեղվանոցը՝ մեզնից 6 կիլոմետր հեռու։ Այնտեղ դուցե դրությունն ավելի վատ է։ 14 ընտանիքից 8-ը բոլորովին փչացել են ցեցից։ Ցեսլինքս հարյուրներով ցեցի վորդեր եմ դուրս գցել նրանց փեթակներից։ Զարմանալի չի, որ այդ մեղվանոցում մեղուների մեջ այդքան զարգացած են վարակիչ հիվանդությունները. 14 ընտանիքից 6-ը վարակված են փտախտով։

— Դե ինչ կա որ,—ասաց ֆերմայի վարիչը,—մենք պետք է ոգնենք հարևաններին։ Մոտ որերս յես ինքս կգնամ այնտեղ և կոգնեմ մեղվանոցը կարգի բերելու։ Կվերցնեմ այն անձնական հսկողության տակ։ Կոլտնտեսային մեղվանոցում վարակիչ հիվանդություններ չպետք է լինեն։

ՊԱՏՔԱՐԻ ՄԻԱՄՍՅԱԿ ՄԵՂՎԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Հուլիս ամիսը մեղվի բոլոր ընտանիքների ստուգման ամիսն է։

Մեղվապահները գլխավոր ուշադրությունը դարձրին բների բարեկարգման վրա։ Առաջին իսկ յերեք որում հայտաբերեցին 10 ընտանիք, վորտեղ շրջանակներն անկանոն եյին դասավորված բներում—բոռաբջիջավոր և մեղրով լի շրջանակները գտնվում եյին բնի կենտրոնում։ Բացի դրանից, 5 ընտանիքներում հայտաբերված է ցեց, սակայն քիչ քանակությամբ։ Դա չափազանց հազվագյուտ յերևույթ է մեր մեղվանոցում, վորովհետև մեղվապահները խիստ հետևում են ժաքրությանը, մանավանդ բների ներսում։

Ցեցի ներկայությունն ինձ սաստիկ անհանգստացրեց, և յես վորոշեցի անխափ բոլոր ընտանիքների ստուգում անցկացնել՝ կցն արդյոք նրանցում վորևե վարակիչ հիվանդություններ, ինչպիսին են փտախտն ու նոզեմատոզը։

Նոր եյի յես ձեռնամուխ յեղել ստուգմանը, յերբ ֆերմա յեկավ մեղվաբուծության յերկրային հրահանգիչ Աշչեուլովը։ Մենք նրա հետ միասին ստուգեցինք բոլոր ընտանիքները։

Մի ընտանիքում չեչի վրա գտանք 5—6 մեռած վորդ, վորոնք ըստ, արտաքին նշանների, վարակված եյին փտախտով։ Անմիջապես ուղարկեցինք հատուկ մարդու միջոցով Նովոչերկասկի լաբորատորիային, բայց վոչ մի եական բան չստացանք մենք լաբորանտներից։ Այդ պատճառով եվ վորոշեցինք անմիջապես ձեռք առնել անհրաժեշտ նախազգուշական միջոցներ, կարծես փտախտի առկայությունն արդեն անհերքելի փաստ է։ Կաս-

կածելի ընտանիքը տեղավորեցինք ձագակալի մեջ, պահեցինք դրա մեջ յերկու որ հով շենքում և հետո տեղավորեցինք ախտահանված փեթակի մեջ՝ արհեստական մոմաթերթի վրա։ Հիվանդության լուծարքի ժամանակ գործի մեջ յեղած ամբողջ ինվենտարն ախտահանեցինք հինգ տոկոսային մոխրաջրով։ Բոլոր մեղրով շրջանակները վերցրինք փտախտավոր ընտանիքից ու քամեցինք մեղրահանով։

ՄԱՅՐԱԲՈՒԾԱԿԱՆ ՑԵԽՈՒՄ

Ոգոստոսի սկիզբն է։

Մայրաբուծական մեղվանոցի կոլտնտեսականների մեջ մեծ կենդանություն է նկատվում։ Կոլտնտեսություն է յեկել յերկրային զրաաենյակի ներկայացուցիչ Շիպիլովը։ Առանց կոլտնտեսության վարչությունը մտնելու նա իսկույն աեթ ուղեվորվեց դեպի ցեխը։ Այդ ժամանակ ցեխի աշխատավորները ֆերմայի վարիչի հետ միասին զբաղված եյին վերջին չբեղմնավորված մայրերը նուկլեուսներին տալով։

— Հը՛, վոնց են գործերը, բարեկամներս։

— Լավ չեն, ընկ. Շիպիլով,—արագ պատասխանեց ցեխի վարիչ Երնա Միխայլովնա Լոտոսմանը։—Առաջին տարին է աշխատում ենք, իսկ հիմա եվ թարսի պես չորությունն է նեղում։ Մինչև հունիսի կեսը վոչ մի կաթիլ անձրև չի յեղել, չի յեղել նաև բերք։ Վոչ մի կերպ չի հաջողվում նուկլեուսները մեղուներով բնակեցնել։ Իսկույն աեթ մեղուների հարձակումն սկսվում եր, նրանց հետ միասին թռչում եյին փեթակից նաև մեր տված մեղուները և մնում եր միայն վանդակի մեջ նստած մայրը։ Մենք փորձում եյինք յերկու որով նուկլեուսները պահել նկուղում, բայց այդ եվ չեր ոգնում։ Ուղղակի հոգիներս դուրս յեկավ, գիշերն եվ քուն չունեցինք... Միայն յերը գլխավոր բերքն սկսվեց, մեր գործն եվ կարգի յեկավ։ Այսոր մենք ունենք ընդամենը 300 բեղմնավորված մայրեր-ռեկորդիստներ։ Դա ըսկի պլանային առաջադրության մի յերրորդն եվ չի կազմում, պլանով մենք պետք է ունենանք 995 մայր։

Քամելուց հետո մեղրահանը հոգատարությամբ լվացինք

տաք մոխրաջրով։ Դատարկ չեչերը, մեղրը միջից քամելուց հետո, հալեցինք ու դարձրինք մոմ։ Ամբողջ փեթակն ու նրա առանձին մասերը նավթ քսեցինք, իսկ մի քանի բաներ ամբողջովին այրեցինք։

Մի տաս որից հետո կասկածելի ընտանիքում վորդուձու յերևաց և այլևս փտախտի վոչ մի նշան չերևաց։ Ախտահանված փեթակն ոգտագործեցինք մի ուրիշ ձագի համար, և հետագայում այդ ընտանիքը միշտ առողջ է յեղել։

Կարելի յե ուղղակի ասել, վոր վոչ մի հիվանդություն սարսափելի չի, յեթե մեղվապահն ուշադիր է, և յեթե անմիջապես հիվանդությունը հայտաբերելուց հետո պայքար կսկսի նրա դեմ։ Չենք կատարել, գործը լավ չենք տարել, փորձառություն չունենք, պայմաններն ել այս տարի լավ չեն։ Մենք դեռ չբեղմնավորված 420 մայրեր ունենք։ Պատվաստված է 950 պտուկ։ Մայրապտուկներ ընդունված են և բուծված 670 հատ։ Ահա ամբողջը։ Լավ չի, ընկ. Շիպիլով...

«Կոյա» կոլտնտեսության մեղվաբուծական ֆերման կազմակերպված է միայն 1934 թվին՝ յերկրային մեղվաբուծական վարչության առաջադրությամբ։ Առաջադրությունն ստացվեց փետրվարին և հանկարծակիի բերեց ֆերման։ Ցերկու ամսից հետո ցեխը պիտի կազմակերպված լիներ, առաջարկված եր բուծել 995 մայր, իսկ մենք մարդ ել չունենք։ Չի վոր առաջին պատահած մեղվապահին այդ նոր և առանձնակի գործը չես կարող հանձնել, իսկ ինքը՝ վարիչն այդ գործով զբաղվելու հնարավորություն չունի. ֆերման մեծանում է, աշխատանքը խեղդում է։

Դրանից մի քանի որ հետո կոլտեսության վարչությունն առաջարկություն ստացավ—գործուղել մի գրագետ և փորձված մեղվապահ Սմավիր քաղաքը՝ մայրաբուծության յերկրային յերկամյա դասընթացներում սովորելու։ Բայց այդ ժամանակ մեր տնտեսությունը փորձված մեղվապահներ չուներ,—շարքային մեղվապահներից վոչ մեկը մի տարուց ավել չեր աշխատել։

Վորոշեցին ուղարկել դասընթացներին մասնակցելու ամենից ավելի գրագետին—ԿՅԵԴ վերջացրած Երնա Լոռոսմանին։ Լոռոսմանը վերջացրեց դասընթացները, վերադարձավ կոլտնտեսություն, նորից կարդում ու կարդում է յերկրային վարչության առաջադրությունը։

«Կազմակերպել մեղվաբուծական ֆերմային կից մայրաբուծական ցեխ, նպատակ ունենալով բարելավել տեղական մեղուների ցեղը, արտադրող մայրերի և բուռերի ընտրություն կատարելով այնպիսի մայրերից, վորոնք աչքի յեն ընկնում բարձր, տարելով այնպիսի մայրերից, վորոնք աչքի յեն ընկնում բարձր, տնտեսապես ոգտակար հատկանիշներով»։

Գործը նոր, բարդ և պատասխանատու գործ է։ Իսկ փորձ բոլորովին չունենք, գիտելիքներ նույնպես գոյություն չունեն։ Բայց մտածելու ժամանակ չկա, պետք է շտապ կազմակերպել գործը։

120 նուկլեուս կառուցելու համար պետք եր փայտեղեն, իսկ վարչությունը հրաժարվեց բաց թողնել այն։ Ցեխի կազմակերպումը համարում եյին վոչ պարտադիր։ Ֆերմայի վարիչն ստիպված յեղավ գործադրել բոլոր յեղած վերնահարկերը—մինչև գլխավոր բերքը դեռ շատ ժամանակ կա, մանավանդ, վոր տնտեսությունն ել ունի նպատակ ունի, ուրեմն և առանց վերնահարկեր ել յոլա կգնա։

Այսպես թե այնպես, ապրիլի 15-ին բոլոր նուկլեուսներն արդեն պատրաստ եյին, իսկ մայիսի մեկին նույնիսկ ներկված եյին։ Իսկ այդ ժամանակ Լոռոսմանն ել վերադարձավ դասընթացներից։

Ցերեք լավագույն ընտանիքից յես արդեն բավականաչափ բուռեր եյի ստացել և նրանց հասակն ել հասնում եր 30—45 որվա։ Վորոշեցինք սկսել պատվաստումը մայիսի 15-ից։

Մայիսի 10-ին № 40 ռեկորդիստ ընտանիքի մեջ գրինք սպիտակ, լավ կառուցված չեչով մի շրջանակ։ Բունն 9 շրջանակի վրա յեր, վորից մենք յերկու շրջանակ վերցրինք, վորպեսզի բունը փոքրանա և մայրն ավելի հեշտությամբ անցնի տրված չեչի վրա, և 4—5 որից հետո մենք ունենանք վորդ ու ձու։ Մայիսի 14-ին մենք արդեն այդ չեչի մեջ ունեցինք մի քանի հարյուր ձվեր։

Նախնթաց օրը՝ մայիսի 13-ին, մենք նախապատրաստեցինք նաև խնամող ընտանիքը, ընտրելով այն ամենաուժեղ ընտանիքներից, որոնք ամենից ավելի շատ մեղու ունեին։ Մենք վերցրինք նրանից նրա մայրը և ամբողջ չկնքած որդը և հեռացրինք այդ փեթակը 5—6 մետրի վրա։ Հին տեղում դրինք մի դատարկ փեթակ, դրինք նրա մեջ ուրիշ ընտանիքներից վերցրած որդուձվով շրջանակներ և շուտով գրեթե բոլոր թռչող մեղուները տեղափոխված փեթակից վերադարձան այդ փեթակի մեջ։



Նկ. 6. «Կոյտ» կոլտնտեսության մայրաուծական մեղվանոցում 14 տարեկան մեղվապահ Կարլ Սաամեն տալիս է խնամող ընտանիքին մի հատուկ շրջանակ իր միջի որդերով՝ մայրեր պատրաստելու համար։

Խնամող ընտանիքին մենք շատ ուշադիր կերպով հետևում եյինք, հույս ունենալով ստանալ նրանից մայիս ամսին, յերբ դեռ բերք չկա, 50—60 մայր։ Ամեն յերեկո տալիս եյինք 200 գր շաքարաջուր, լավ տաքացրել եյինք կողքերից ու վերևից մատերով, լրագրի թղթով և շորով։ Բացի այդ, խնամող ընտանիքների և բուռեր արտադրողների համար մենք հատկացրել եյինք ամենալավ յերկպատ փեթակները։

Մայիսի 13-ին № 23 ռեկորդիստ ընտանիքում մենք հայտարարեցինք յերկու որական որդերը՝ կտրելու համար շատ հարմար և վոչ հին չեչի մեջ։ Երնա Լոստսմանը վճռեց հանել այդ շրջանակն ու որդերը պատվաստել խնամող ընտանիքին։

Նա բացեց փեթակի կտուրը, հանեց որդով շրջանակը, զգուշությամբ ավլեց մեղուներին փեթակի վրա, տարավ աշխատանքային արկղն աշխատանոց, որտեղ արդեն պատրաստված եր մի լամպ՝ դանակները նրա վրա տաքացնելու համար, նաև մի շրջանակ, որի վրա ամրացնում եյին որդերով չեչի շերտերը։

Մայրապտուկների պատվաստման աշխատանքը մենք կատարում եյինք միշտ յերեքով — մեկը կտրում եր շերտերն ու կիսով չափ կարճացնում բջիջները։ Յերկրորդը փայտյա ձողիկով դուրս եր նետում որդերի յերկու յերրորդը բջիջների միջից (մի շարքում), թողնելով ամեն մի յերեք որդից մեկը։ Դրանից հետո յերրորդն ամրացնում եր շերտիկը հատուկ շրջանակի մեջ ամրացրած յերկու ձողիկի արանքում։

Այդ ձևով պատրաստված շրջանակն իր միջի որդերով այնուհետև տրվեց մայրապտուկներ պատրաստելու համար այն անմայր խնամող ընտանիքին, որը մենք նախապատրաստել եյինք դեռ յերկու որ դրանից առաջ։

Խնամողն ուներ չորս շրջանակ՝ խիտ ծածկված մեղուներով, որոնց մեծ մասը դեռ դաշտ չեր թռչում։ Հենց այդ շրջանակների մեջտեղում էլ տեղավորեցինք մեր հատուկ շրջանակն իր որդերով։

Խնամող ընտանիքին տաքացում տվինք կողքերից և վերևից և ամեն որ յերեկոյան կեր եյինք տալիս։ Յերրորդ որը փեթակը բաց արինք և բանից դուրս յեկավ, որ մեր պատրաստած որդերին ընդունել են (80 բջիջ) և արդեն սկսել են կառուցել 56 մայրապտուկ։ Դա մեզ շատ ուրախացրեց և մենք անմիջապես սկսեցինք պատրաստել յերկրորդ խնամող ընտանիքը, գործադրելով միևնույն յեղանակը, ինչ որ առաջին անգամը։

Սակայն մեր ուրախությունը յերկարատև չեր։ Յերբ մենք 12-րդ որը բաց արինք խնամող փեթակը՝ մայրապտուկները կտրելու համար, դուրս յեկավ, որ 56 մայրապտուկներից գլուխ և յեկել միայն 11 պտուկ։ Մենք սկզբում վճռեցինք, որ դրա-

նում մեղավոր եր շերտիկները ձողիկներին փակցնելու մեր ձևը, բայց իրականում պարզվեց, որ ամբողջ խնդիրը ծաղկափոշու բացակայության մեջ է—վոչ մի բջիջում ծաղկափոշի չկար։ Դա միանգամայն հասկանալի յեր, չե՞ որ փեթակներում թռչող մեղուները քիչ եյին և նրանք, իհարկե, չեյին կարողացել ծաղկափոշով ապահովել մեծ քանակությամբ վորդեր։ Նույնիսկ այդ 11 մայրը, որ դուրս յեկան 15 որվա վրա, կանոնավոր զարգացած չեյին, նրանք թևեր չունեյին, ելի հենց ծաղկափոշու բացակայության պատճառով։



Նկ. 7. «Հոյտ» կոլտնտեսության մայրաբուծական մեղվանոցում։ Վորդերի պատվաստումը՝ մայրեր բուծելու համար (Ալեխ Միխկելսոնի յեղանակով)։

Այսպես, ուրեմն՝ մեր առաջին փորձն անհաջողությամբ վերջացավ։ Ստիպված եյինք նորից սկսել։ Մենք նորից մեր յեղանակով պատվաստեցինք 80 պտուկ նույն խնամող ընտանիքի համար, բայց այս անգամ ապահովեցինք այն ծաղկափոշով։ Այս անգամ հետևանքները բոլորովին ուրիշ յեղան—80 վորդից ստացվեց 58 միանգամայն կանոնավոր մայրապտուկ։ Մենք կտրտեցինք դրանք շրջանակների միջից, տեղավորեցինք ամեն մեկը մի առանձին վանդակում՝ 6—8 աշխատավոր մեղուների հետ մեասին, վորպեսզի հետագայում նրանք ոգնեն մայրերին պտուկներից դուրս գալու։ Մայրապտուկները վանդակներով տվինք ցեխում յեղած ամենաուժեղ ընտանիքներին՝ հասունացման համար։ Նորից մի անհաջողություն—վանդակներում դրած մեղրը դուրս եր հոսել և մայրերը կոտորվել եյին քաղցից։

Պատվաստեցինք մայրապտուկներ յերրորդ անգամ, պահպանեցինք բոլոր կանոնները, ապահովեցինք ծաղկափոշով, տվինք հատուկ ձևով պատրաստած կեր—շաքարի փոշու և հալած մեղրի խառնուրդ («մենք այլևս յերբեք մեղր չեյինք գործ ածում ինկուբացիայում մայրապտուկները խնամող մեղուներին կեր տալուհամար)։

Այս անգամ մայրերի բուծումը միանգամայն հաջող անցավ։ Մենք, վերջիվերջո, յուրացրինք մայրաբուծության տեխնիկան և այժմ գործը հաջող է ընթանում։

Միայն դժվար հաջողվեց մեղ այդ մայրերի զուգավորումը բուռերի հետ նուկլեուսներում. շնորհիվ չոր և տաք քամիների ու բերքի բացակայության, դող մեղուները վրա եյին տալիս և նրանց հետ թալանից հետո ցրիվ եյին գալիս նաև նուկլեուսի մեղուները։ Մինչև բերքի սկսվելը հաջողվեց ընակեցնել միայն 60 բաժանմունք, վորոնց մենք տվինք չբեղմնավորված մայրեր։

Բերքն սկսվելուց հետո գործը հաջող ընթացավ. մայրապտուկների պատվաստումը շատ հաջող եր, ամեն մի խնամող տալիս եր 70—80 մայր, և այդ մայրերը ժամանակին բեղմնավորվում եյին նուկլեուսներում։

Ներկայումս մայրաբուծական տնտեսությունը մեզ մոտ հանդիսանում է մի ինքնուրույն տնտեսություն։ Այդտեղ կան հետևյալ ցեխերը.

1. Զուգավորման ցեխ, վորտեղ աշխատում են յերկու յեղբայրներ՝ Եդուարդ և Կարլ Սաամները. նրանք պարտավոր են խնամել նուկլեուսները, ընդունել մայրաբուծական տնտեսության վարիչից յերիտասարդ մայրերը, վորոնք բեղմնավորվելուց հետո նորից վերադարձվում են վարիչին։ Ընդամենը ցեխում կա 300 մայրերի տեղ. 2. վորդուձվի նախապատրաստման ցեխ, վորին ապասարկում են տնտեսության վարիչ Երնա Լոոսմանն ու իր ոգնական Խլիստովը. դրանց տնորինության տակ գտնվում են 100 խնամող ընտանիք. 3. ինկուբացիայի ցեխ (1935 թվի գարնանից), վոր ապասարկել են յերեք կոլտնտեսուհիներ—Ոլգա Բելանից), վոր ապասարկել են յերեք կոլտնտեսուհիներ—Ոլգա Բելչեվան (բրիգադավարուհի), Աննա Շվեդովան և Իրինա Լիտվակը։

Բոլոր աշխատանքները մայրաբուծական տնտեսությունում, ինչպես և մյուս մեղվանոցներում, վարձատրվում են դրծարքային ձևով, նայած թե վորքան և ինչ վորակի բուծված և բեղմնավորված մայրեր են ստացվում մայրաբուծական տնտեսությունում և ինչ քանակությամբ արտադրանք է տալիս այդ տնտեսությունը (մեղր, մոմ)։

Ցերկրային դրասենյակի ներկայացուցիչ ընկ. Շիպիլովը շատ էր հետաքրքրվում, թե ինչպես և դրված ցեղական դործը մեզ մոտ և ամեն ինչի մասին մանրամասնորեն հարցրեց Երնա Լոտոսմանին։

—Դուք, ասում են, պտուկների պատվաստման մի առանձին ձև եք դործադրում։ Ասա, պատմեցեք, այդ ինչ Ալլեյ Միխկելսոնի յեղանակ է,—ժպտաց Շիպիլովը։

—Տարբերությունը մեծ չէ,—պատասխանեց Լոտոսմանը,—դա, իհարկե, ընդհանուր առմամբ Ալլեյի նույն յեղանակն է։ Չեչի նույն շերտերն են իրենց վորդերի շարքով, վորի մեջ ամեն մի յերրորդ վորդը պահպանվում է կիսով չափ կարճացրած և բերանները լայնացրած բջիջներում։ Բայց այդ շերտերն արդեն ամրացվում են չոր չեչի կտրվածքի տակից (հատուկ շրջանակներում). մեր յեղանակն ահա այսպես է. մենք վերցնում ենք չեչից բոլորովին ազատ շրջանակ և նրա մեջ ենք ամրացնում շերտերը՝ 3—4 շարք փայտյա ձողիկների արանքում (տես նկարը 76 եջում)։ Մենք այդ յեղանակը համարում ենք ավելի ոգտակար, վորովհետև ավելի քիչ քանակությամբ մոմաթերթ է պահանջում, իսկ մոմը, ինչպես դուք գիտեք, մեր նեղ տեղն է։

—Իսկ քանի՞ վորդ է լինում ամեն մեկ շերտի մեջ։

—Մեր խնամողները հեշտությամբ ընդունում են մինչև 80 պատվաստում։ Ընդունվողները սովորաբար 5—10 վորդից ավելի չեն լինում։ Բայց յեղել են դեպքեր, յերբ վոչ մի մայրապտուկ չեն ընդունել մեղուները։ Բայց այդտեղ արդեն մենք ենք մեղավոր. կամ պատահաբար մայրն ենք թողել ներսում, կամ խնամող փեթակում ուրիշ ձվեր ենք թողել։ Ահա հենց այդ պատճառով էլ մեր պատվաստած 980 մայրապտուկներից հազիվ են ընդունվել կառուցման համար 670 հատ։ Մեր բուծած մայրերը բեղմնավորվում են ռեկորդիստ ընտանիքներից ստացված բուռերով՝ այստեղից յերեք կիլոմետրի վրա։

—Ասենք, դուք վաղուց չի, վոր փոխադրել եք այնտեղ դուդավորման կայանը։ Իսկ հիմա ասացեք, թե ինչպես եք դուք դործադրել ձեր բուծած մայրերը։ Հաշիվ պահում եք արդյոք։

—Մենք մեր բոլոր բուծած մայրերը հաշվի յենք առնում և ամեն մի բոպե կարող ենք հայտնել, թե վորտեղ է գտնվում այսինչ №-ով յեղած մայրը։ Կատարում ենք արտադրական ստուգիչ դրանցումներ, նշելով նրանց ընտանիքների արդյունավետությունը մեղրով և մոմով, ձոր պտղավետությունը, վարակիչ հիվանդություններին դիմանալու ընդունակությունը և այլն։

— Ասացեք, թե ինչ ընտանիքներից եք դուք կազմել ձեր մեղվաբուծական տնտեսությունը։

— Մենք կազմակերպել ենք այն 49 ընտանիքից, վորոնցից 9-ն ստուգված ռեկորդիստներ եյին, յերկու տարվա ընթացքում դրանք առանձնապես աչքի յեն ընկել իրենց արդյունավետությամբ։ Ա՛յ, որինակ՝ № 40 ընտանիքը 1932 թվին տվել է 64 կգ մեղր, այն ժամանակ, յերբ մյուս ընտանիքները մեղվանոցում գտնվելով բոլորովին միատեսակ պայմաններում՝ տվել են միայն 28-ական կգ մեղր։ 1933 թվին նույն ընտանիքը տվեց 98 կգ, իսկ մյուսները՝ 56—65 կգ վոչ ավելի։

— Դե, հիմա վերջին հարցը—քանի՞ նուկլեուս ունեք։

— Մինչև այսոր մենք ունեցինք 130 նուկլեուս՝ Դաղանի շրջանակի մի քառորդի չափով։ Դրանցից 100 նուկլեուսն ունեն 3-ական բաժանմունք և 30 հատ՝ 4-ական, ընդամենն ունեն 420 մայրերի տեղ։ Տնտեսությունը նոր է։ Բավական սիալներ ենք թույլ տվել, մինչև կարողացել ենք տիրապետել տեխնիկային։ Փորձ շատ քիչ ունենք, իսկ չե՞ վոր դասընթացներում մեզ միայն տեսականն են դասավանդել։ 1935 թ. հույս ունենք խոշոր հետևանքների հասնել, վորովհետև մենք բոլորս չափազանց հետաքրքրվում ենք այդ դործով։ Ձեզնից էլ շատ շնորհակալ ենք, ընկ. Շիպիլով, դուք մեզ շատ ոգնեցիք գարնանը գործնական ցուցմունքներով, թե չե՝ դործները շատ վատ կլիներ։

— Լավ, լավ, վնաս չունի,—առաջին տարին ներելի է—ծիծա-

զում է Շիպիլովը, ընդհանուր առմամբ, տեսնում եմ, դուք արդեն գործը կարգի յեք գցել։ Մի բանն է վատ, և դրա համար ձեզ պետք է կշտամբել, վոր ձեզ մոտ զուգավորման կայանը մինչև վերջերս էլ կենտրոնական մեղվանոցում է յեղել, և միայն վերջին ժամանակներս եք գլխի ընկել փոխադրելու 3 կիլոմետրի վրա, վորտեղ ուրիշ մեղուներ չկան։ Մի թե դուք հիմա հավատացած եք, վոր ձեր մայրերը զուգավորվել են հենց այն բուռերի հետ, վորոնք ստացվել են ռեկորդիստ ընտանիքներից։ Ավելի շուտ պետք է յենթադրել, վոր բոլորովին պատահական բուռերից են բեղմնավորվել նրանք։ Մեղվանոցում 200 ընտանիք կա և ամեն մեկն ունի իր բուռերը։

— Այդ խնդրում ամբողջ հանցանքը մեզ վրա չի ընկնում, ընկ. Շիպիլով։ Մենք մի քանի անգամ խնդրել ենք շրջանը՝ տալ մեզ զուգավորման ցեխի համար մի հողամաս, վորտեղ 6—7 կմ-ից ավելի մոտիկ մեղուներ չկան, բայց միշտ էլ մերժել են։ Մի քանի հողամաս մենք ինքներս գտանք, բայց մեզ թույլ չտվին զբաղեցնել դրանք։ Դեռ բավականաչափ ուշադրություն չեն դարձնում ցեղական գործի վրա, ահա թե ինչումն է մեր դժբախտությունը։

ԱՇՆԱՆԱՅԻՆ ՅԵՎ ԶՄԵՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵՂՎԱԲՈՒԾԱԿԱՆ ՖԵՐՄԱՅՈՒՄ

Ոգոստոսի շոգ օրերից մեկն է։

Դաշտերում հացահատիկի բերքահավաքի յեռուն աշխատանք է գնում։ Բայց մեղվանոցներում ևս ամենապատասխանատու ժամանակն է. մեղվի ընտանիքներն ենք նախապատրաստում ձմեռելու համար։ Շոգ է ու տոթ։ Մեղվապահները կորել են քրտինքի մեջ, իսկ մեղուները չեն սիրում սուր հոտը։ Վորոշեցինք վազել գետը լողանալու։

Ցետ դարձանք թարմացած ու յեռանդուն, իսկ այդ ժամանակ բանից դուրս է գալիս, մեղվանոց են յեկել այցելուներ՝ ՄՏԿ-ի քաղբաժնի պետ Սարոկինը և կոլտնտեսության նախագահը։ Ման են գալիս, նայում են մեր տնտեսությանը։

— Հը՛, վոնց են մեր մեղվանոցի գործերը, ընկ. Միխկելսոն։ Վորքան աճ եք վերցրել, վորքան մեղր եք հավաքել։

— Գարնանն ունեցինք 475 ընտանիք, հիմա՝ 1030։ Մեղր քամել ենք 8 տոննա։ Միջին հաշվով 18 կիլո մեկ ձմեռած ընտանիքին։

— Զորային ամառվա համար վատ չի,—հավանություն տվեց Սարոկինը։

Քաղբաժնի պետը միշտ մեծ մասնակցություն եր ունենում մեր մեղվաբուծական ֆերմայի գործերում, և մենք նրան շատ բանով ենք պարտական։ Նա հենց հիմա էլ, աշխատելով արդեն իբրև Կուշչեվկայի շրջկոմի քարտուղար, անխոնջ կերպով հետևում է մեր աշխատանքին։

Հանձին նրա կոլտնտեսային մեղուները գտան ամենաանկեղծ և յեռանդուն բարեկամի։ Մեղվապահները սովորել են ուղղակի դիմել նրան ֆերմայի ամեն տեսակի կարիքների ու հարցերի նկատմամբ։

Ահա հենց հիմա էլ նրանք առանց քաշվելու արտահայտում են քաղբաժնի պետի առաջ իրենց դժգոհությունն այն մասին, վոր վարչությունը, շատ հաճախ զբաղեցնում է մեղվապահներին դաշտային աշխատանքներով և խանգարում է մեղվաբուծական տնտեսության անխափան ընթացքը։ Բրիգադիր Ռուդենկոն ուղղակի ասում է, վոր յերբ այդպիսի մի վերաբերմունք գոյություն ունի դեպի մեղվաբուծական ֆերման, ուրեմն և շատ դժվար կլինի կատարել ՀԿԿ(բ) ԿԿ-ի հունիսի պլենումի վորոշումն անասնաբուծության զարգացման մասին, իսկ չե՞ վոր այժմ մեր աշխատանքի ամենապատասխանատու մոմենտն է — ընտանիքների նախապատրաստումը ձմեռելու համար։

Քաղբաժնի պետը կտրականապես հայտնեց ի պատասխան այդ բողոքին.

—Առաջին հերթին դուք պիտի կարգի բերեք մեղվաբուծական տնտեսությունը։ Այն ձեզ են վստահել, և դուք դրա համար պատասխանատու յեք։ Յերբ ամեն ինչ այստեղ ձեզ մոտ կարգի կընկնի, միայն այդ դեպքում ձեզ կզբաղեցնեն բերքահավաքի աշխատանքներով։ Այդ մասին հոգ կտանի կուսկազմակերպու-

թյունը։ Կարող եք չվախենալ մեղվաբուծական ֆերմայի համար— մենք ամեն կերպ կպաշտպանենք այն։

Զրույցը քաղաքաժնի պետի հետ մեղվապահներին յեռանդ ներշնչեց։ Նրանք մեծ յեռանդով կպան ձմռան նախապատրաստման աշխատանքին։ Ամենակարևորն այդ նախապատրաստական գործում—դա մայրերի վորակի ստուգումն է և նրանց փոխարինումն է ցեղական մայրերով, վորոնք ստեղծավորված են ամենալավ բոներով։ Բոլոր վատորակ մայրերին, թեկուզ նրանք լինեն յերկու տարեկանից ցածր, մեր մեղվապահները փոխում են աշնան սկզբներին լավորակ մայրերով։ Նրանք շատ լավ հասկանում են վոր դա բղխում է հենց իրենց շահերից։

Մեր բրիգադիր Սեպպահամմերն ուղղակի տեղ չի գտնում իրեն, յերբ իմանում է, վոր իր մեղվանոցում վատորակ մայր կա։ Այդպիսի մայրն անմիջապես հաշվի յե առնվում և մանրակերկիտ կերպով ստուգվում է։

Յեթե մոր վատորակ լինելը հաստատվում է, նրան փոխում են ստուգված մայրով, վորը բուծված է մայրաբուծարանում։ Մայրերի ստուգման ժամանակ Սեպպահամմերը մեղվանոցում պահպանում է անհրաժեշտ նախազգուշական միջոցները՝ մեղվի գողության առաջն առնելու համար։ Նա արգելում է ոգտվել ծխարարներով, վորովհետև ծխի ազդեցության տակ ընտանիքը կորցնում է զող մեղուներից պաշտպանվելու ընդունակությունը։ Արգելվում է յերկար ժամանակ բաց պահել փեթակները։ Բաց է անում մոտ ավելի, քան յերեք րոպեյով—այսպես է Սեպպահամերի անշեղ կանոնը։ Յեվ նա իրավացի յե—այդ ժամանակամիջոցում միանգամայն հնարավոր է վորոշել մոր վորակը, գըլխավորապես վորդուձվի բնույթից։ Յեթե մայրը ձվերը դնում է առանց ընդհատումների, ապա նրան կարելի յե համարել լավորակ։

Մայրերը փոխելուց հետո բրիգադիր Սեպպահամերն սկսեց կարգավորել կերի պաշարի խնդիրն այն հաշվով, վոր ամեն մի ընտանիք ունենա մեղրի և ծաղկափոշու պաշար, վորը միանգամայն պիտի համապատասխաներ նրա ուժին, այսինքն՝ սպառողների քանակին։ Ավելցուկ պաշար ունեցող ընտանիքներից

Սեպպահամմերն այդ ավելցուկը վերցնում և տալիս է այն ընտանիքներին, վորոնք բավականաչափ մեղր և ծաղկափոշի չունեն։ Միջակ ուժի տեր ընտանիքներին, վորոնք բռնում են 5—6 միջերջանակ և կշռում մինչև մեկ ու կես կգ, նա թողնում է 10—18 կգ կեր։

Առանձնապես հոգ է տանում Սեպպահամմերը փեթակների տաքացման մասին և այդ բանն անում է նա նախապես։ Դեռ ցրտերից շատ առաջ նրա ընտանիքները հոգատար կերպով տաքացվում են յերեք հատ հատ խսիրով (մատերով)՝ կողքերից և վերևից (առաստաղից)։ Դուք նրա փեթակների մեջ յերբեք չեք տեսնի մեկը, վոր ավելի քիչ տաքացում ունենա, քան մյուսները,—բոլոր ընտանիքները միատեսակ դրության մեջ են։ Տաքացման նյութը յեղեգն է և ճահճային խոտը։

Ձմեռելու համար բոլոր դատարկ և ավելորդ շրջանակները հեռացվում են և բները փոքրացվում։ № 2 մեղվանոցում դուք չեք գտնի վոչ մի ընտանիք, վոր 8—9 շրջանակից ավելի լինի։ Դրա հետ միասին, գարնանը վոչ մի շրջանակ չի լինում, վոր մեղրը կամ ծաղկափոշին փչացած լինի, իսկ բորբոսի մասին խոսք անգամ չի կարող լինել։

Վորովհետև այդ բրիգադիրի մոտ ձմեռոց են գնում յերիտասարդ ընտանիքներ, վորոնք ապահովված են լավորակ մեղրով, լավ տաքացումներով և կանոնավոր ոգափոխությամբ, ապա և, վորպես կանոն, Սեպպահամմերի ընտանիքների մեջ անկում չի լինում։ Ձմեռոցում նրա փեթակների արկանոցները 3—5 սմ չափ բաց են, առաստաղները բոլորը փայտից են։

1934 թվին մեղուների լավ ձմեռելու համար, քանի վոր վոչ մի տոկոս անկում չկար, կոլտնտեսության վարչությունը պարգևատրեց Սեպպահամմերին մեղվի մեկ ընտանիքով։

Յեվ ահա դատարկվեց, խաղաղվեց մեր մեղվաբուծական ֆերման։ Չկան այլևս փոքրիկ տնակների փողոցներ ու նրբանցքներ, չկան նաև ժրաջան աշխատավորուհիներ, վոր հանդիպում են մեղվապահին դեռ բավական հեռվից, յերբ ամառը նա մոտենում է մեղվանոցին։ Յեվ վոչ միայն հանդի-

պում են, այլև քամի յեղած դեպքում, յերբ նրանք դժվարանում են թռչել, նույնիսկ նստում են վրաց, թե՝ խնդրեմ տեղ հասցրու մեզ։

Դատարկ է և խաղաղ մեղվանոցում։ Ամեն ինչ ծածկված է ձյունով։ Միայն մոտակա արհեստանոցից լսվում են սղոցի և ռանդայի ձայները—մեղվապահների ինվենտարն են պատրաստում գարնան համար։ Ինչը մարդ ռանդայում, սղոցում, կտրատում են ամեն որ։ Յեվ նրանց մեջ ամենալավ աշխատավորը բեղմնավորման ցեխի 14 տարեկան մեղվապահ Կարլ Սամեն է։ Մի ժամում Սամաեն մեխում է 30 շրջանակ, և այն էլ ինչպիսի՜ շրջանակներ, մաքուր, կոկ, առանց վորևե պակասության։

Իսկ ո՞ւր են մեր մեղուները։ Նրանք բոլորը տեղավորված են տաք ձմեռոցներում և այնտեղ հանգստանում են։ 1934|1935 ձմռանը ֆերման արդեն ուներ յերեք ձմեռոց։ Մեկը հատկապես այդ նպատակի համար է կառուցված 1933 թվին՝ «Գիգանտ», ինչպես մենք անվանել ենք այն։ Կառուցված է դարմանից, աղյուսային հիմք ունի՝ հիանալի առաստաղով։

Տանում է 500 փեթակից ավելի։ Ձմեռոցում չոր է, ջերմաստիճանը՝ նորմալ, 3°Ց չի իջնում։

Բոլորովին այլ դրություն է տիրում № 3 մեղվանոցի ձմեռոցում բրիգադիր Պակլերը գանգատվում է.

—Մեր ձմեռոցը շատ վատ է։ Ցուրտ որերին ջերմաստիճանը իջնում է 0-ից ցածր։ Պատերը բարակ են, մեկ վերշոկ հաստության, պատած են յեղեգով, կտուրը յեղեգից է, թեև հաստ է, բայց դե ինչ ոգուտ, յերբ փայտյա առաստաղ չունի։ Ասա՛ մարագ, վերջանա գնա։ Բացի այդ, կանգնած է սարի վրա, քամիններից պաշտպանված չի։ Հոգիս դուրս յեկավ այս ձմեռոցի հետ։

Պակլերն իրավացի յե. № 3 մեղվանոցի ձմեռոցն իրոք այդպիսին բոլորովին անպետք է։ Հնարավորություն չունեցինք մենք ավելի լավը կառուցել։ Կոլտնտեսության բոլոր ճյուղերի արագ աճումը վերջին տարիների ընթացքում զգալի կերպով գերազանցել է մեր շինարարությունը։ Ահա և մեր մեղվաբուծական ֆերման ստիպված է իր մարագը հարմարեցնել, իբրև ձմեռոց։

Ցերբոդ ձմեռոցը տեղավորվում է այդ նպատակի համար

հարմարեցրած բնակելի տան մեջ։ Այնտեղ ջերմաստիճանը բոլորովին նորմալ է — 3° Ց-ից վոչ պակաս։

Մինչև հունվար ամիսը բրիգադիրներն ամեն տասնօրյակին մեկ անգամ սուզում եյին բոլոր մեղուները ձմեռոցում։ Հունվարից հետո՝ հինգ որը մեկ անգամ։ Չնայած մեր ֆերման բավարար չափով չի ապահովված ձմեռոցներով, մեղուների ձմեռումն անցնում է բարեհաջող, վորովհետև մենք շատ ուշադիր կերպով ենք մեր ընտանիքները նախապատրաստում ձմեռելու համար, և ձմեռն էլ անընդհատ հետևում ենք։ Ձմեռելու հետևանքներն ըստ տարիների այսպես են. 1932|33 թվին ձմեռել են 150 ընտանիք, հանգել է մեկ ընտանիք, 1933|34 թվին ձմեռել են 500, պակասել են 2-ը, 1934|35 թվին՝ 1028 ընտանիք, պակասել են 11 ընտանիք։

1934|35 թվի բավական խոշոր անկումը բացատրվում է նրանով, վոր № 3 մեղվանոցը լավ չեր ապահովված մեղրով, և ձմեռանոցն էլ լավը չեր։ Բացի դրանից, բրիգադիր Պակլերն այնքան էլ բարեխղճորեն չեր կատարում ձմրանն իր պարտականությունները։ Իբրև բրիգադիր—ձմեռոցում քիչ եր լինում, մեղուներին այնքան ուշադիր չեր նայում և այլն։

Մեր լավագույն մեղվապահները նույնիսկ մի տոկոս անկումը ձմեռվա ընթացքում հաշվում են անլրջություն։ Չէ՞ վոր մենք շատ հոգատարությամբ նախապատրաստվեցինք ձմրանը։ 1934 թվի ամրանը բոլոր մեղվի ընտանիքները հիանալի դրության մեջ եյին. ձմրան համար թողնված եյին միայն միանգամայն լավ վորակ մայրեր, բները փոքրացված եյին. իբրև կերի պաշար թողնված եր 12—16 կգ մեղր, փեթակները տաքացված եյին, վերջապես ուժեղ պայքար եր տարվում կրծողների, մկների և առնետների դեմ։ Եվ, կարծես թե, անկում բոլորովին չպետք է լիներ։ Բայց միայն Սեպպահամմերի բրիգադը լիովին կատարեց իր խոստումները՝ նրա 186 ընտանիքից ձմրան ընթացքում վոչ մի տոկոս անկում չի յեղել, բոլոր ընտանիքները գարնանն անվնաս և առողջ դուրս յեկան ձմեռոցից։ Յեվ ինչո՞ւ պիտի այդպես չլիներ. չէ՞ վոր նա իր բոլոր ընտանիքներն ապահովել եր ջահել մայրերով և ջահել մեղուներով, և կերապաշարն էլ նրա մոտ միանգամայն բավարար եր։

Բոլոր մեղվապահները պիտի հավասարվեն կոլտնտեսային մեղվանոցի հարվածային Սեղպահամմերին։

1934—1935 թվի ձմռանը մեզ մոտ նորից շարունակվում եր մեղվաբուծական ֆերմայի կոլտնտեսականների տեխնիկական ուսուցումը (յերկրային մեղվաբուծական վարչության յերկամսյա կուրսերը)։ Բացի դրանից, աշխատում եր մեղվապահների զոոտեխնիկական գրագիտության բարձրացման խմբակը։ Բոլոր մեղվապահները տվեցին տեխնինություն։

ՊԻՏԻ ԿԱՌՈՒՑԵՆՔ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՇՈՐ ՄԵՂՎԱՆՈՑՆԵՐ

Շատ դժվարություններ և ապրել մեր յերիտասարդ մեղվաբուծական ֆերման և շատ եվ սխալներ ե գործել, մինչև կարողացել ե ամուր հողի վրա կանգնել։ Ցեվ հիմա եվ մեզ մոտ շատ բան դեռ կիսատ ե մնացել, բայց և այնպես ձախորդությունների և գրկանքների տարիներն արդեն վաղուց անցել են։ Այժմ ավելի լավ կլինի։

Մեր գլխավոր հաղթությունը պատրաստված նոր կադրերն են։ Հիմա մենք շատ ենք։ Վաղուց ե անցել այն ժամանակը, յերբ յես մենմենակ եյի, մենակ եյի աշխատում, մենակ չարչարվում եյի կուլակների ձեռքով քայքայված մեղվանոցում։ Հիմա մենք 30 հոգի յենք, և այդ բոլորն ստուգված, ազնիվ կոլտնտեսականներ են։ Կան նրանց մեջ և՛ կոմունիստներ, և՛ կոմյերիտականներ, և՛ կարմիր պարտիզաններ—ամուր, վստահելի մարդիկ, վորոնք իրենց աչքի լույսի նման կպահեն կոլտնտեսային մեղուն։ Աշխատում ենք միահամուռ ուժերով։

Ափսոսում եմ, ի հարկե, վոր իր ժամանակին մենք շատ սխալներ արեցինք։ Չե՞ վոր յեթե յես 1931|32 թվին իմանայի այնքան, ինչքան այժմ գիտեմ, ապա մեր հաջողություններն եվ ավելի զգալի չափերի կհասնեյին։ Բայց յես խոշոր կոլտնտեսային մեղվանոցի կազմակերպման վոչ մի փորձ չունեյի, զոոտեխնիկական գիտելիքներս նույնպես քիչ եյին։ Իսկ, վոր գլխավորն ե—յես պայքարում եյի մենակ, չեյի կարողանում բարձրացնել հասարակական կարծիքը հոգուտ մեղվաբուծական ճյուղի։ Իսկ թշնամիներն եվ (գիտակից և անգիտակից) քիչ չեյին։

Այդ պատճառով եվ իմ առաջին խորհուրդն ե, ընկեր մեղվապահներ, ձեռնարկելով խոշոր մեղվանոցի կազմակերպմանը՝ անպայման անցկացրեք կոլտնտեսականների մասսայական-բացատրական աշխատանք։ Համախմբեցեք ձեր և մեղվանոցի շուրջը կոլտնտեսականների մի կոփված ակտիվ, վորը կլինի ձեր առաջին օգնականը ձեր աշխատանքում, և նրա ուժանդակությամբ դուք հեշտությամբ դուրս կգաք ամեն մի նեղ տեղից։ Իսկ, վոր գլխավորն ե, վոչ մի քայլ մոտիկ մի թողեք կուլակային ազդեցությունների տակ գտնվող տարրերին։ Ցեթե այդպիսիներն արդեն մուտք են գործել մեղվանոց, արմատախիլ արեք դրանց այդտեղից։ Հակառակ դեպքում վոչ մի հաջողություն չեք ունենա։

Ամենակոպիտ սխալը կլիներ, յեթե դուք միայն խոսքերով ագիտացիա մղեյիք խոշոր մեղվանոցի համար։ Գործ ե պետք, կոնկրետ գործ, և վոչ խոսքեր։

Ցեթե յես հենց առաջին տարին լավ հաջողություններ ձեռք չբերեյի, վոչ մի ագիտացիա, վոչ մի պերճախոսություն ինձ չեյին ազդի։ Իսկ ի՞նչ ե հարկավոր արտադրական հաջողության համար։ Ամենից առաջ—կուսակազմակերպության ղեկավարությունը։ Այդտեղ սկզբներում յես սխալ թույլ տվի։ Ցես բավականաչափ սերտորեն չկապվեցի կոլտնտեսության կուսբջջի հետ և դրա համար եվ սկզբում իմ գործը դանդաղ եր ընթանում՝ առանց աչքի ընկնող հաջողությունների։ Բայց յերբ յես լիովին ապահովեցի կուսբջջի ղեկավարությունը, իսկ հետագայում՝ ՄՏԿ-ի քաղբաժնի և Համկ(բ)կ շրջկոմի ղեկավարությունը, իմ մեղվանոցը բառիս բուն իմաստով ծաղկեց։ Ոգնում եյին ամեն ինչով—և՛ մարդկանցով, և՛ միջոցներով, և՛ նյութերով։

Հասկանալի յե, վոր վոչ միշտ և վոչ ամեն բան կարելի յե անմիջապես ձեռք բերել։ Մենք դեռ այնքան հարուստ չենք։ Ամեն տարի քիչ արտադրանք (մեղր ու մոմ) չենք կորցնում նյութական հնարավորությունների բացակայության պատճառով։ Որինակ՝ 1934 թվին մեր անտեսությունը կորցրեց, իմ հաշվով, մինչև յերկու հազար կգ մեղր, շնորհիվ այն բանի, վոր մենք չունեյինք բավականաչափ ձգող ուժ և աշխատավոր ձեռքեր, վորպեսզի ժամանակին դատարկեյինք մեղրով լիք չեչերը։ Մեղուպեսզի ժամանակին դատարկեյինք մեղրով լիք չեչերը։

ները կորցրին իրենց վոսկի որերը։ Ամենայեռուն ժամանակ, յերբ ստուգիչ փեթակն ամեն որ ցույց եր տալիս 4—5 կգ հավելում, մեղուները մեղր չեյին բերում, վորովհետև չեչերը լիքն եյին։

Մեծ դժվարություններ և պատճառում մեզ վերնահարկեր չունենալը, վորի հետևանքով սխալված եյինք լինում հաճախ քամել մեղրը շրջանակներից։

Սակայն մեղավորության զգալի մասն այդ խնդրում ընկնում և հենց մեզ վրա, վորովհետև մենք չենք կարողանում ճիշտ կազմակերպել աշխատանքը։ Այդպես՝ 1934 թվին մենք կազմակերպեցինք մեղր քամելու համար միայն մի հատուկ բրիգադ՝ 11 հոգուց, իսկ անհրաժեշտ եր կազմակերպել յերկուսը, և այդ դեպքում մենք չեյինք ունենա մեղրի կորուստ։ Մի բրիգադը հաճախ ժամանակ չեր ունենում վերջացնելու մեղրաքամը մի մեղվանոցում և անցնելու մյուս մեղվանոց։ Իսկ յեթե կազմակերպեյինք յերկու բրիգադ, կամ թեկուզ ուժեղացնեյինք բրիգադն ելի մի քանի կոլտնտեսականներով, մեղրաքամը կարող եր կատարվել յերկու մեղվանոցներում միաժամանակ։

Մեր ամենախոշոր թերությունն սկզբում այն եր, վոր մենք չեյինք կարողանում ընտրել համապատասխան մարդիկ, կամ դեռ կան այնպիսի կոլտնտեսականներ, վորոնք իրենց համար թեթև աշխատանք են փնտրում։ Ահա և մեր ֆերման ել խցկվում եյին մի ժամանակ այդպիսի տարրեր, մանավանդ, վոր մինչև 1934 թ. վարչությունը չեր տալիս հարվածային կոլտնտեսականներ։ Սխալված եյինք հաշվել այդ բանի հետ և աշխատանքի ընդունել բոլոր ցանկացողներին։ Ցավ ահա դրանց մի մասը, աշխատելով մի տարի մեղվանոցում, տեսավ, վոր շատ սխալ ընտրություն է արել։ Մարդիկ մանում եյին մեղվաբուծական կուրսեր, սկսում եյին աշխատել, մի խոսքով՝ «տեղեր եյին բռնում»։ Իսկ յերբ պարզվում եր, վոր մեղվաբուծությունը մանրակրկիտ և չափազանց լարված աշխատանք է պահանջում, մեր «սիրողները» գնում եյին ուրիշ աշխատանքի։ Այդպիսի մարդկանց թվում կային նաև բրիգադիրներ Ռաուդեն և Լեսմոնտը։

Այդպիսի աշխատակիցները կոլտնտեսային մեղվանոցում ֆնասակար են։ Նրանք տեղ են բռնում թե կուրսերում և թե ֆերմայում, աշխատում են հանգստանալով և ապա ամենայեռուն ժամանակ հեռանում աշխատանքից։ Դե, դու ինչ ուզում ես, արա, ել կարող ես ուրիշ մարդ ճարել չվողի փոխարեն, վորին, ինչքան չլինի, կոլտնտեսությունն իր ժամանակին մեղվապահություն է սովորեցրել։ Դա մեծ չարիք է։

Մեղվապահության համար պետք է ընտրել լավագույն կոլտնտեսական հարվածայիններ։

Մեր մեղվաբուծական ֆերմայի հետևյալ խոշոր սխալն այն եր, վոր շատ ուշ, միայն 1934 թվին սկսեցինք մայրաբուծության գործը։ Մայրաբուծությունը տալիս է հսկայական առավելություններ, քանի վոր ապահովում է արհեստական ձագերը միանգամայն լավորակ մայրերով։ Առանց մայրաբուծական տնտեսության անհնարին է դնել ցեղական գործը և ընդհանրապես անհնարին է խոշոր մեղվաբուծություն զարգացնել։

Ահա մեր ամենագլխավոր սխալները։ Յեթե խոշոր մեղվանոցների մեղվապահները կարողանան հաշվի առնել այդ թերությունները ու ժամանակին վերացնել, ապա, ի հարկե, նրանք ավելի շուտ ձեռք կբերեն հաջողություն, քան յես իմ ֆերմայում՝ յերեք և կես տարվա ընթացքում։

Մեր մեղվաբուծական ֆերման այժմ վճռականորեն ձեռնարկել է թերությունների հաղթահարման գործը։ 1935 թվի գարնանը մենք ունեյինք 1025 ընտանիք, իսկ 1937 թվին հասատատ հույս ունենք հասցնել այդ թիվը 4000-ի։

Տարեցտարի մեր ֆերման պիտի տա ավելի ու ավելի արդյունք։ Արդեն 1935 թ. մենք կհաջողեցնենք, վորպեսզի ամեն մի աշխորին ընկնի 200 գր մեղր։ Բացի այդ, մենք կսկսենք տալ մեղվի ընտանիքներ այն կոլտնտեսականներին, վորոնք կցանկանան մեղուներ ունենալ իրենց անձնական տնտեսությունում։ 1935 թվի սեպտեմբերում կսկսենք նաև շրջակա տնտեսություններին վաճառել մեղվի ընտանիքներ։

Մեղրը տնտեսապես ավելի ոգտավետ ձևով ոգտագործելու համար նույն 1935 թվին մենք կազմակերպեցինք մեղ մոտ հրուշակային գործարան։

1935 թվին մեր մեղվապահությունը կտա կոլտնտեսու-

թյանը 200.000 ռուբլու դրամական արդյունք։ Դրա հետ չենք հաշվում աշխատի համար տրվելիք մեղրը՝ ընանյութով (200-ական գրամ)։

1935 թվից կազմակերպում ենք ինկուբացիան, կսկսենք կիրառել մեղվաբուծության տեխնիկայի վերջին նվաճումները և մայրեր սնուցանել ինկուբատորներում։ Միաժամանակ անցնում ենք վերնահարկային մեթոդին—ամեն մի ընտանիք կունենա իր վերնահարկը։

Մինչև գլխավոր բերքի սկսվելն արդեն չենք զբաղվի ձագ վերցնելով, այլ կխնամենք ընտանիքները և հնարավորություն կտանք կառուցելու նոր շրջանակներ, այն հաշվով, որ գլխավոր մեղրաբերքի ժամանակ ամեն մի ընտանիք 24 շրջանակի վրա լինի։ Գլխավոր բերքից հետո կվերցնենք փեթակների վերևի կորպուսները միջի մեղուներով և կստանանք նոր ընտանիքներ՝ հարյուր տոկոս աճ։ Այդ մոմենտին մեր մայրաբուծական անտեսությունը մայրերով լիովին կապահովի նոր ընտանիքները։

Մեր մեղվապահությունը հիմնականում կլինի քոչվոր, դրա համար էլ մեր առջև շատ սուր և դրված փոխադրական միջոցներ և քաշող ուժ ձեռք բերելու խնդիրը։ 1935 թվի գարնանը մենք ունեցինք յերեք զույգ ձի և մի պլատֆորմա՝ 21 փեթակի համար, և, բացի այդ, մի ավտոմեքենա՝ 20 փեթակ տարողությամբ։ Այդպիսով մենք հենց այժմ էլ հնարավորություն ունենք 24 ժամվա ընթացքում տեղափոխել մինչև 10 կիլոմետրի վրա մեղվի 200 ընտանիք։

ՀԱՅԿ-ՍՍՀ
Հայ. Մ. Մաշտոցի անվան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ցեռ դառնում են կոլտնտեսային մեղվապահ 3
2. Առաջին քայլեր 8
3. Մենք կռվում ենք մեր հնգամյակի համար 17
4. Մեր հնգամյա պլանը միանգամայն իրագործելի յե 24
5. Ինչպես ե կազմակերպված աշխատանքը մեր մեղվանոցներում 32
6. Պատրաստվում ենք գլխավոր մեղրաբերքին 40
7. Գլխավոր մեղրաբերքը 58
8. Պայքարի միամսյակ՝ մեղվի հիվանդությունների դեմ 69
9. Մայրաբուծական ցեխում 71
10. Աշնանային և ձմերային աշխատանքները մեղվաբուծական ֆերմայում 79
11. Պետք կառուցենք կոլտնտեսական խոշոր մեղվանոցներ 83

Թարգմ.՝ Հ. Տ.-Ավագյան
Տեխ. խմբ.՝ Վ. Ալեքյան
Լեզվ. խմբ.՝ Աբր. Գրիգորյան
Սրբագրիչ՝ Դար. Հակոբյան
Գլավլիտի լիազոր Ս.-498
Հրատ. 335, տիրաժ 350, պատվեր 342
Հանձնվել է արտադրութ. 4/V 1936 թ.
Ստորագրված է տպագրելու 14/VII 1936 թ.

Գյուղհրատի տպարան, Ցերման, Նալբանդյան 11

«Ազգային գրադարան»
NL0286947

ԳԻՐՔ 30 ԿՈՊ.
526
22.977

АЛЕКСЕЙ МИХКЕЛЬСОН

Колхозная посека

СЕЛЬХОЗГИЗ 1936 ЗРИВАНЬ